

ISSN 2579-2792

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ЦЕНТР ПЕДАГОГИКИ И РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ  
CENTER OF PEDAGOGY AND EDUCATION DEVELOPMENT



2

2021

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ  
ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ  
EDUCATION IN THE 21<sup>ST</sup> CENTURY

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն  
Центр педагогики и развития образования  
Center of Pedagogy and Education Development

**«Կրթությունը 21-րդ դարում»**  
**Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես**

Թիվ 2(6), 2021  
Երևան

**«Образование в XXI веке»**  
**Международный научно-методический рецензируемый журнал**

Номер 2(6), 2021  
Ереван

**«Education in the 21<sup>st</sup> Century»**  
**International Scientific-Methodical Review**

No 2(6), 2021  
Yerevan

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ԲԴ ԴԱՐՈՒՄ» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄ նախարարության ԲՈԿ-ի կողմից երաշխավորված աստենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

---

*Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսը տպագրվում է Երևանի պետական համալսարանի Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի գիտական խորհրդի երաշխավորությամբ:*

*Международный научно-методический рецензированный журнал издается по рекомендации Ученого совета Центра педагогики и развития образования Ереванского государственного университета.*

*The international scientific-methodological reviewed journal is published by the recommendation of the Scientific Council of the Center of Pedagogy and Education Development, Yerevan State University.*

Յ Ց

Հանդեսը տպագրվում է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին  
**Արմեն և Սալբի Սոսիկյանների** մեկենասությամբ:

Журнал издается при финансовой поддержке армянских благотворителей  
**Армена и Салби Сосикян.**

The review is published by the financial support of Armenian benefactors  
**Mr. and Ms. Armen and Salbi Sosikyans.**

## Հանդեսի խմբագրական խորհրդի կազմը՝

### Գլխավոր խմբագիր՝

Հարությունյան Ն. Կ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ, ՀՀ

### Գլխավոր խմբագրի տեղակալ՝

Մարդոյան Ռ. Ա.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՇՊՀ, ՀՀ

### Խմբագրակազմ՝

Ազարյան Ռ. Ն.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՊՄՀ, ՀՀ

Բերմուս Ա. Գ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարան, ՌԴ

Գրիգորյան Ա. Կ.

ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Գևորգյան Պ. Հ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՎՊՀ, ՀՀ

Ժուլյ Ա. Ի.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Բելառուսի պետական մանկ. համալսարան, Բելառուս

Լոդատկո Ե. Ա.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Չերկասի ազգային համալսարան, Ուկրաինա

Խառաձե Ե. Մ.

մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ, Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան, Վրաստան

Կարապետյան Ի. Կ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՊՄՀ, ՀՀ

Կոնդրաշովա Լ. Վ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Չերկասի ազգային համալսարան, Ուկրաինա

Հոպֆներ Յ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Գրացի համալսարան, Ավստրիա

Մադալինսկա-Միչալսկ Ի.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Վարշավայի համալսարան, Լեհաստան

Պետրոսյան Հ. Հ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ

Պլաչինդա Տ. Ս.

մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ, Ազգային ավիացիոն համալսարան, ք. Կրասնովոդինսկի, Ուկրաինա

Պողիմովա Լ. Ս.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՄՄՊՀ, ՌԴ

Միմոնյան Ա. Հ.

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ԵՊՀ, ՀՀ

## Редакционный совет научного журнала:

### Главный редактор:

**Арутюнян Н.К.**

доктор пед. наук, проф., ЕГУ, РА

### Заместитель главного редактора:

**Мардоян Р.А.**

доктор пед. наук, проф., ШГУ, РА

### Члены редакционного совета:

**Азарян Р.Н.**

доктор пед. наук, проф., АГПУ, РА

**Бермус А.Г.**

доктор пед. наук, проф., Академия психологии и педагогики Южного федерального университета, г. Ростов-на-Дону, РФ

**Геворгян П.Г.**

доктор пед. наук, проф., ВГУ, РА

**Григорян А.К.**

канд. физ.-мат. наук, доцент, ЕГУ, РА

**Жук А. И.**

доктор пед. наук, проф.,  
Белорусский государственный педагогический университет им. М. Танка, Беларусь

**Карапетян И.К.**

доктор пед. наук, проф., АГПУ, РА

**Кондрашова Л.В.**

доктор пед. наук, проф., Черкасский национальный университет им. Б. Хмельницкого, Украина

**Лодатко Е.А.**

доктор пед. наук, проф., Черкасский национальный университет им. Б. Хмельницкого, Украина

**Мадалинска-Мичалак И.**

доктор пед. наук, проф., Варшавский университет, Польша

**Петросян Г.Г.**

доктор пед. наук, проф., ГУ им. В. Брюсова, РА

**Плачинда Т.С.**

доктор пед. наук, доцент, Национальный авиационный университет, г. Крапивницкий, Украина

**Подымова Л.С.**

доктор пед. наук, проф., МПГУ, РФ

**Симонян А.Г.**

доктор ист. наук, проф., ЕГУ, член-корреспондент НАН РА, РА

**Харадзе Е.М.**

доктор пед. наук, доцент, Тбилисский государственный университет им. И. Джавахишвили, Грузия

**Хопфнер Й.**

доктор пед. наук, проф., Грацский университет, Австрия

## **Editorial board of the scientific review:**

### **Editor-in-Chief:**

**Harutyunyan N. K.** Doctor of Sciences, Prof., Yerevan State University, RA

### **Deputy Chief Editor:**

**Mardoyan R. A.** Doctor of Sciences, Prof., Shirak State University, RA

### **Members of Editorial Board:**

**Azaryan R. N.** Doctor of Sciences, Prof., Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, RA

**Bermus A. G.** Doctor of Sciences, Professor, Southern Federal University, Rostov-on-Don, RF

**Gevorgyan P. H.** Doctor of Sciences, Prof., Vanadzor State University after Hovhannes Tumanyan, RA

**Grigoryan A. K.** Ph.D., Associate Professor, Yerevan State University, RA

**Hopfner J.** Doctor of Sciences, prof., University of Graz, Austria

**Karapetyan I. K.** Doctor of Sciences, Prof., Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, RA

**Kharadze E. M.** Doctor of Sciences, Associate Prof., Tbilisi State University after I. Javakhishvili, Georgia

**Kondrashova L. V.** Doctor of Sciences, Prof., Cherkasy National University after B. Khmelnsky, Ukraine

**Lodatko E. A.** Doctor of Sciences, Prof., Cherkasy National University after B. Khmelnsky, Ukraine

**Madalinska-Michalak J.** Doctor of Sciences, Prof., University of Warsaw, Poland

**Petrosyan H. H.** Doctor of Sciences, Prof., Brusov State University, RA

**Plachynda T. S.** Doctor of Sciences, Associate Prof., National Aviation University, Krapivnitsky, Ukraine

**Podymova L. S.** Doctor of Sciences, Prof., Moscow Pedagogical State University, RF

**Simonyan A. H.** Doctor of Sciences, Prof., Yerevan State University, Corresponding Member of NAS of the RA

**Zhuk A. I.** Doctor of Sciences, prof., Belarusian State Pedagogical University after M. Tank, Belarus

**Հիմնադիր և հրատարակիչ՝  
Երևանի պետական համալսարանի Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն**

**Основатель и издатель:  
Центр педагогики и развития образования  
Ереванского государственного университета**

**Founder and Publisher:  
Center of Pedagogy and Education Development of  
Yerevan State University**

Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ  
Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն:

Адрес редакции: Республика Армения, 0025, Ереван, ул. Абовяна 52а, Центр педагогики и развития образования ЕГУ.

Editorial address: Armenia, 0025, Yerevan, Abovyan str., 52a, Center of Pedagogy and Education Development of YSU.

Հեռ.՝ (060) 71-06-16

Тел.: (060) 71-06-16

Tel: (060) 71-06-16

Էլ. կայք՝ [publications.y-su.am](http://publications.y-su.am)  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Эл.адрес: [publications.y-su.am](http://publications.y-su.am)  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Webpage:  
[publications.y-su.am](http://publications.y-su.am),  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Էլ. փոստ՝  
[education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

Эл.почта:  
[education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

E-mail: [education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

Տպաքանակը՝ 100  
Հանձնված է շարվածքի՝  
17.11.2021  
Հանձնված է տպագրության՝ 06.12.2021

Число печати: 100  
Включено в раздел:  
17.11.2021  
Сдано в печать:  
06.12.2021

Printout: 100  
Submitted to the section:  
17.11.2021  
Submitted to the printing:  
06.12.2021

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համափոխ չլինելով հեղինակների տեսակետներին:

Редакция может публиковать материалы, не соглашаясь с мнением авторов.

Authors' ideas may not necessarily coincide with those of the editorial office.

## **Հանդեսի պատասխանատու քարտուղար՝**

Լուսինե Հայրապետյան  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ,  
Երևանի պետական համալսարան,  
Հայաստան

## **Մույն համարի գրախոսները՝**

Ազարյան Ռ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՊՄՀ, ՀՀ
Ալեքսանյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Աշիկյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ասատրյան Մ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ավետիսյան Մ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Արզումանյան Ա.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Խաչատրյան Ռ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԲՊՀ, ՀՀ
Հակոբյան Գ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ, ՀՀ
Հայրապետյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Հարությունյան Թ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Հովհաննիսյան Մ.	բան. գիտ. թեկնածու, ասիստենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղազարյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղուկասյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՊՀ, ՀՀ
Մարդոյան Ռ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՇՊՀ, ՀՀ
Մկրտչյան Թ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՖԿՄՊԻ, ՀՀ
Չատինյան Ա.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ՀՖԿՄՊԻ, ՀՀ
Պետրոսյան Հ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ

Ամսագրում ներառված հոդվածներում արտահայտված մտքերի ու գաղափարների հեղինակային իրավունքը պատկանում է հոդվածի հեղինակ(ներ)ին. նա է (նրանք են) պատասխանատու հոդվածում առկա մտքերի ձևակերպման, ինչպես նաև բովանդակության համար:



**Ответственный секретарь журнала:**

Айрапетян Лусине

Канд. пед. наук, доцент,

Ереванский государственный университет, РА

**Рецензенты данного номера:**

Аветисян М.	канд. пед. наук, доцент , ЕГУ, РА
Азарян Р.	доктор пед. наук, проф., АГПУ, РА
Арутюнян Т.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Айрапетян Л.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Акопян Г.	канд. пед. наук, доцент, АГПУ, РА
Алексян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Арзуманян А.	канд. фил. наук, доцент, ЕГУ, РА
Асатрян С.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Ашикян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Гукасян Л.	канд. пед. наук, доцент, ШГУ, РА
Казарян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Мардоян Р.	доктор пед. наук, проф., ШГУ, РА
Мкртчян Т.	канд. пед. наук, доцент , ГИФКСА, РА
Оганнисян М.	канд. фил. наук, ассистент, ЕГУ, РА
Петросян Г.	доктор пед. наук, проф., ГУ им В. Брюсова, РА
Саакян Л.	доктор пед. наук, проф., ЕГМУ, РА
Хачатрян Р.	канд. пед. наук, доцент, ГУ им В. Брюсова, РА
Чатинян А.	доктор пед. наук, проф., ГИФКСА, РА

Авторские права на идеи и мысли, выраженные в статьях журнала, принадлежат автору/авторам статьи, которые несут ответственность за формулировку и содержание статьи.

**Executive secretary of the Journal:**

Lusine Hayrapetyan,  
Ph.D., Associate Prof,  
Yerevan State University, RA

**The Reviewers of this volume:**

Aleksanyan A.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Ashikyan A.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Arzumanyan A.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Avetisyan M.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Azaryan R.	Doctor of Sciences, Prof., ASPU, RA
Asatryan S.	Ph.D., Associate Prof., YSU, RA
Chatinyan A.	Doctor of Sciences, Prof., ASIPCS, RA
Ghazaryan A.	Ph.D., Associate Prof., YSU, RA
Ghukasyan L.	Ph.D., Associate Prof, SHSU, RA
Hakobyan G.	Ph.D., Associate Prof., ASPU, RA
Harutyunyan T.	Ph.D., Associate Prof, YSY, RA
Hayrapetyan L.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Hovhannisyan M.	Ph.D., Assistant, YSU, RA
Khachatryan R.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Mardoyan R.	Doctor of Sciences, Prof., SHSU, RA
Mkrtchyan T.	Ph.D., Associate Prof ASIPCS, RA
Petrosyan H.	Doctor of Sciences, Prof., Brusov SU, RA
Sahakyan L.	Doctor of Sciences, Prof., YSMU, RA

The copyright to the ideas and thoughts expressed in the articles contained in the journal belong to the author(s) of the article, and he/she (they) is (are) responsible for the formulation and content of the article.

<b>ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>13</b>
<b>РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ</b> .....	<b>13</b>
<b>SECTION 1: THEORY OF PEDAGOGY</b> .....	<b>13</b>
<b>Խաչատրյան Ռոբերտ</b>	
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	13
<b>Շահինյան Անի</b>	
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՅՔԱՅԻՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ՄԵԽԱՆԻԶՄ .....	25
<b>Պետրոսյան Հայկ</b>	
ԻՆՔՆԱՂԵԿՎԱԿԱՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	34
<b>Артеменок Екатерина, Пунчик Вероника</b>	
ВИНТАЖНАЯ ПЕДАГОГИКА КАК СИСТЕМА ПЕДАГОГИЧЕСКИХ ЗНАНИЙ ОБ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ .....	41
<b>Бермус Александр</b>	
ПРОБЛЕМЫ И КОНТЕКСТЫ РАЗРАБОТКИ МЕЖДИСЦИПЛИНАРНЫХ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ ПРОГРАММ В СФЕРЕ ОБРАЗОВАНИЯ .....	48
<b>Слюсаренко Нина, Кохановская Елена</b>	
ИСПОЛЬЗОВАНИЕ ЦИФРОВЫХ ЭКОСИСТЕМ В СИСТЕМЕ ПЕДАГОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ .....	56
<b>Aleksanyan Ashot</b>	
NEW CHALLENGES OF ARMENIAN HUMANISTIC PEDAGOGY IN THE GEOPOLITICAL SITUATION OF NEITHER WAR NOR PEACE: MANAGED ENMITY AND WAR PEDAGOGY .....	63
<b>ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>77</b>
<b>РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ</b> .....	<b>77</b>
<b>SECTION 2: TEACHING AND UPBRINGING</b> .....	<b>77</b>
<b>Գալստյան Մարինա</b>	
ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ. ԴԻՄԿՈՒՐՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	77
<b>Էլոյան Նարեկ</b>	
ՄԻԶԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ .....	86
<b>Խաչատրյան Նարինե</b>	
ԱԾՈՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԴԱՅԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ՈՒՂԻ .....	91
<b>Հովհաննիսյան Մերի</b>	
ՊՐՈՒԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՈՒՄ .....	97

<b>Պապիկյան Արսեն</b> ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....	104
<b>Սարգսյան Արուաշես</b> ՇԱՐՄԱԶՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽԵՂԻՐՆԵՐ .....	111
<b>Акопян Елена, Ковалева Анна</b> ДВИГАТЕЛЬНАЯ ПЛАСТИКА КАК КОМПОНЕНТ КУЛЬТУРЫ ДВИЖЕНИЯ.....	118
<b>Геворкян Паргев</b> ВОСПИТАНИЕ В СОВРЕМЕННОЙ ШКОЛЕ .....	123
<b>Данилова Ольга</b> ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ФОРМИРОВАНИЯ ГОТОВНОСТИ К ПРОЕКТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ БУДУЩИХ СПЕЦИАЛИСТОВ ПО РЕКРЕАЦИОННОМУ ТУРИЗМУ.....	127
<b>Мардоян Рузанна</b> К ВОПРОСУ О ПОДГОТОВКЕ К ПЕДАГОГИЧЕСКОЙ ПРАКТИКЕ.....	135
<b>Миргородская Елена</b> МАРШРУТНАЯ ПРАКТИКА КАК СПОСОБ ФОРМИРОВАНИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УМЕНИЙ БУДУЩИХ СПЕЦИАЛИСТОВ ПО ТУРИЗМУ И БУДУЩИХ УЧИТЕЛЕЙ ГЕОГРАФИИ.....	143
<b>Меликян Лусине</b> ПРОФИЛАКТИКА БЛИЗОРУКОСТИ У УЧАЩИХСЯ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ В УСЛОВИЯХ ШКОЛЬНОГО ОБУЧЕНИЯ .....	151
<b>Невдах Светлана, Буховец Ирина</b> КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВАНИЯ ПОДГОТОВКИ БУДУЩИХ ПЕДАГОГОВ НА ОСНОВЕ ДОМИНИРУЮЩИХ КОГНИТИВНЫХ СТИЛЕЙ.....	156
<b>Загороднюк Татьяна</b> ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ ПЕДАГОГОВ И ОБУЧАЮЩИХСЯ К ПРОЕКТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НА ПРИМЕРЕ РОСТОВСКОЙ ОБЛАСТИ .....	163
<b>Согоян Спартак</b> ВАЖНОСТЬ СЛИЯНИЯ ТРАДИЦИОННОЙ И ИННОВАЦИОННОЙ ПЕДАГОГИКИ ВО ВРЕМЯ ПАНДЕМИИ .....	173
<b>Щупко Светлана</b> СОВРЕМЕННАЯ СИНТАКСИЧЕСКАЯ КОМПЕТЕНТНОСТЬ УЧАЩИХСЯ ОСНОВНОЙ ШКОЛЫ И ЕЕ РОЛЬ В ФОРМИРОВАНИИ НОВОЙ ЛИЧНОСТИ ШКОЛЬНИКА .....	179
<b>ԲԱԺԻՆ 3. ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ .....</b>	<b>189</b>
<b>РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ.....</b>	<b>189</b>
<b>SECTION 3: TEACHING METHODOICS.....</b>	<b>189</b>
<b>Արզումանյան Արմենուհի</b> «ԵՐԵՔ ԲԱՆԱԼԻ ԵՎ ՄԵՎ ԿՈՂՊԵՔ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	189

<b>ԲԱԺԻՆ 4. ՀԱՏՈՒՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>198</b>
<b>РАЗДЕЛ 4: СПЕЦИАЛЬНАЯ ПЕДАГОГИКА</b> .....	<b>198</b>
<b>SECTION 4: SPECIAL PEDAGOGY</b> .....	<b>198</b>
<b>Ազարյան Բոբերտ, Բալասանյան Գայանե</b> ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ПОСТАНОВКИ РАБОТЫ ПО РАЗВИТИЮ НАВЫКОВ САМООБСЛУЖИВАНИЯ У ДЕТЕЙ С ТЯЖЕЛОЙ СТЕПЕНЬЮ УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТИ СПЕЦИАЛИЗИРОВАННОГО ДЕТСКОГО ДОМА.....	198
<b>Պլակսինա Լյուդմիլա</b> ИНФОРМИРОВАННОСТЬ РОДИТЕЛЕЙ В ВОПРОСАХ ВОСПИТАНИЯ ДЕТЕЙ С НАРУШЕНИЯМИ ПСИХОФИЗИЧЕСКОГО РАЗВИТИЯ.....	202
<b>Կյուբյան Իրինա</b> К ВОПРОСУ СОЗДАНИЯ ПРЕДПОСЫЛОК РАЗВИТИЯ СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ У ДЕТЕЙ С ГЛУБОКОЙ СТЕПЕНЬЮ УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТИ В УСЛОВИЯХ СПЕЦИАЛИЗИРОВАННОГО ДЕТСКОГО ДОМА.....	207
<b>ԲԱԺԻՆ 5. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ</b> .....	<b>212</b>
<b>РАЗДЕЛ 5: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ</b> .....	<b>212</b>
<b>SECTION 5: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY</b> .....	<b>212</b>
<b>Աշիկյան Արմենուհի</b> ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԼԵՐՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.....	212
<b>Ղազարյան Արևիկ</b> ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՏՐՈՂՈՒՄԻՆ ԱՆՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼԵՐԸ «ՄԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍՈՒՄ .....	220
<b>ԲԱԺԻՆ 6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐԵՐՈՒՄ</b> .....	<b>228</b>
<b>РАЗДЕЛ 6: ОБРАЗОВАНИЕ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ</b> .....	<b>228</b>
<b>SECTION 6: EDUCATION IN THE FOREIGN COUNTRIES</b> .....	<b>228</b>
<b>Լաուրի Մանսուր</b> ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ ԲՈՒՇԵԶԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ.....	228
<b>Վամիսյան Համիդուլլահ</b> ՄԵԾԱՀԱՍՍԱԿՆԵՐԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՎԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԴԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ .....	233
<b>Սաֆարյան Քրիստինե</b> ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ .....	240
<b>ԲԱԺԻՆ 7. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԻՏԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>246</b>
<b>РАЗДЕЛ 7: ИСТОРИЯ ПЕДАГОГИКИ</b> .....	<b>246</b>
<b>SECTION 7: HISTORY OF PEDAGOGY</b> .....	<b>246</b>
<b>Кузьменко Василий, Болотникова Татьяна</b> ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ И ФИЗИЧЕСКАЯ ПОДГОТОВКА ДЕТЕЙ ПОДРОСТКОВОГО ВОЗРАСТА В ТРУДАХ А.С.МАКАРЕНКО .....	246

378.4(479.25)

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Խաչատրյան Ռոբերտ**

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,  
Հայաստան*

**Համառոտ ներածական:** ՀՀ պետականության ամրապնդումը և գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացումը պայմանավորված են համաշխարհային տնտեսական շուկայում ՀՀ կրթության և գիտության համակարգերի մրցունակության բարձրացմամբ: Այս համատեքստում պետության կարևորագույն գործառնություններից է գիտելիքահենք հասարակության և տնտեսության ձևավորման ու շարունակական զարգացման ապահովումը: Նմանատիպ գործընթացներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները և գիտահետազոտական կազմակերպությունները հանդես են գալիս որպես հայկական պետականությունն ամրապնդող հենասյուն, հայկական քաղաքակրթական ժառանգության պահպանման ու սերունդներին փոխանցման, պետականամետ գաղափարների գործադրման, նորարարությունների ու ստեղծագործական մտքի խթանման, մրցունակ մտավոր կապիտալի, մասնագիտական և գիտական գիտելիքների ստեղծման ու տարածման առանցքային դերակատարներ: Վերջիններիս շարքում են նաև հետազոտական համալսարանները, քանի որ դրանք ստեղծում են մտավոր կապիտալ, զարգացնում են ուսումնառողների գիտական ներուժը, նրանց փոխանցելի (առաջնորդման ու հետազոտման) կարողությունները, տեխնոլոգիական ռեսուրսները, ինչպես նաև նոր գիտելիք են ստեղծում ժամանակակից գիտության ու մրցունակ գիտելիքահենք հասարակության զարգացման համար և ամենակարևորը՝ համաշխարհային մակարդակում հաղորդակցումն ու համագործակցային կապերն ապահովող օղակ են: Այս համատեքստում ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումն ու դրանց գիտահետազոտական գործունեության արդյունքների արդյունավետ կիրառումը կարող են էապես նպաստել ՀՀ-ում սոցիալ-տնտեսական, գիտական ու կրթական մի շարք փոխկապակցված հիմնախնդիրների լուծմանը:

**Բանալի բառեր:** Հետազոտական համալսարան, գիտելիքահենք տնտեսություն, ռազմավարական զարգացում, բարձրագույն կրթություն, գիտական անձնակազմ, գիտական գիտելիք:

**Հիմնախնդիրը:** Հետազոտական համալսարանները 21-րդ դարի գիտելիքահենք տնտեսությունը զարգացնող առանցքն են, որոնք ոչ միայն պատրաստում են մասնագետներ, այլև գիտական հանրույթի համար ստեղծում են գիտական տեղեկույթի փոխանցման և հաղորդակցման հարթակ [5, էջ 67-70]: Հետազոտական համալսարանների առաջնային գործառնություններից են մրցունակ գիտական անձնակազմի պատրաստումն

ու նրանց գիտահետազոտական գրագիտության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև գիտահետազոտական արդյունքների ստեղծումն ու տարածման մշակույթի զարգացումը: Հետազոտական համալսարանները բարձրագույն կրթության ոլորտի այն առանցքային դերակատարներն են, որոնք խթանում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ հիմնարար հետազոտությունների իրականացման միջոցով էապես նպաստելով գիտական ու տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը: Հետազոտական համալսարաններն իրենց գործունեության տարբեր ոլորտներում կուտակած փորձն ու գիտական գիտելիքները համալրում են գիտահետազոտական նոր արդյունքներով, ստեղծում են գիտելիքահենք տնտեսության զարգացման նոր ռազմավարություններ և հանրային բարիքներ [3]՝ դրանք ծառայեցնելով գիտությանը, կրթությանը, աշխատաշուկայի և հանրության պահանջներին ու կարիքներին:

**Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն:** Հողվածի մեթոդաբանական հենքը ներառում է ոչ միայն մասնագիտական գրականության [1-5], այլ նաև միջազգային լավագույն փորձի օրինակների դիտարկումների ու վերլուծությունների արդյունքները: Սույն հողվածի թեմայի շրջանակում ոլորտային առկա խնդիրների վերհանման և վերլուծության նպատակով ուսումնասիրվել է ՀՀ 20 պետական և ոչ պետական բուհերի գիտահետազոտական գործունեությունը: Սույն հետազոտության մեթոդաբանությունը ներառում է նաև նշված բուհերի ռազմավարությունների, գործունեության առանցքային ցուցանիշների (առկայության դեպքում), գործունեության տարեկան և ֆինանսական հաշվետվությունների, ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների և այդ բուհերի պաշտոնական կայքերում հասանելի այլ փաստաթղթերի համապարփակ ուսումնասիրությունը: Ի լրումն ՀՀ բուհերի փաստաթղթերի և գիտահետազոտական գործունեության շրջանակն արտացոլող այլ նյութերի ուսումնասիրության՝ իրականացվել են նաև հարցազրույցներ այդ համալսարանների գիտական անձնակազմի<sup>1</sup> և գիտության ոլորտի պատասխանատուների հետ: Հարցազրույցների և փաստաթղթային հենքի վերլուծության արդյունքների համակցումը թույլ է տվել դուրս բերել սույն հետազոտության շրջանակում քննարկված խնդիրները և հաստատել առաջադրված դրույթները:

**Հողվածի նպատակը:** Հաշվի առնելով հետազոտական համալսարանների առանցքային դերն ու կարևորությունը ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման գործում՝ սույն հողվածի նպատակն է քննել և հիմնավորել ՀՀ-ում հետազոտական համալսարանների հիմնադրման անհրաժեշտությունն ու ռազմավարական նշանակությունը գիտահետազոտական, կրթական ու նորարարական ոլորտների առաջընթացի խթանման տեսանկյունից: Սույն հետազոտության նպատակը բխում է նաև ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծմանն առնչվող մարտահրավերների և գիտահետազոտական համակարգի արդյունավետության բարձրացման ուսումնասիրության անհրաժեշտությունից:

**Հետազոտության նորույթը:** Նորովի մեկնաբանվել և վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման կարևորությունը և ռազմավար-

<sup>1</sup> Գիտական անձնակազմը ներառում է հետևալ խմբերի ներկայացուցիչներին՝ գիտնականներ, գիտաշխատողներ, գիտամանկավարժական կազմ, գիտական խորհրդատուներ, հետազոտողներ՝ դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող այլ դերակատարներ:

րական նշանակությունը ՀՀ-ում գիտության, կրթության և գիտելիքահենք տնտեսությունների փոխկապակցվածության տեսանկյունից: ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման միջոցով գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացումը մարտահրավեր է հատկապես այն պատճառով, որ ՀՀ կառավարությունը և համապատասխան այլ դերակատարներ թերացել են ինչպես գիտության և կրթության զարգացման տեսլականի մշակման, առաքելության իրականացման, այդ ոլորտների երկարաժամկետ զարգացման երաշխիքների ու թիրախային ֆինանսավորման ապահովման, այնպես էլ այդ ոլորտների արդյունավետության գնահատման և դրա արդյունքները գիտահանրամատչելի դարձնելու հարցում:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Կրթության համակարգի զարգացման օրինաչափությունները և ինտեգրումը միջազգային, հատկապես եվրոպական կրթական տարածքին թելադրում են բարձրագույն կրթության համակարգային և նպատակային բարեփոխումներ: 2005 թ. ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ)<sup>2</sup> մի շարք հնարավորություններ է ընձեռել բուհերին, սակայն գիտահետազոտական և նորարարական գործունեության բարելավման և այդ շրջանակի ընդլայնման տեսանկյունից ներկայումս նպատակահարմար է նաև ապահովել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգերի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին (ԵՀՏ)<sup>3</sup>: Այս երկարաժամկետ հեռանկարի գիտակցումն ու իրականացումը ՀՀ-ում շարունակում են դեռևս ոչ ամբողջությամբ լուծված հիմնախնդիր մնալ և՛ պետական, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում: Այս համատեքստում ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման և ԵՀՏ-ին դրանց ինտեգրման նպատակները կարող են ՀՀ կառավարության՝ կրթության և գիտության համակարգերի զարգացման գերակայություններից լինել:

ՀՀ բուհերի դանդաղ ինտեգրումը ԵԲԿՏ-ին և բարձրագույն կրթության գլոբալ բարեփոխումներին պայմանավորված է նաև համակարգային մի շարք հիմնարար խնդիրներով ու բացասական գործոններով, որոնցից են՝

- սոցիալ-տնտեսական համընդհանուր ճգնաժամն ու ժողովրդագրական ցուցանիշների անկումը, որը հանգեցնում է մտավոր կապիտալի ոչ բավարար ցուցանիշների հետազայում սահմանափակելով մրցունակ գիտական անձնակազմի պատրաստման հնարավորությունները,

- կրթության և գիտության համակարգերի ինքնագոյատևումն առանց պետական կայուն ֆինանսական աջակցության,

- վերացարկումը երկրի իրական կարիքներից, պետության գերակայությունների և կրթության ու գիտության համակարգերի զարգացման միջև ոչ լիարժեք փոխկապակցվածությունը,

- պետության կողմից սահմանված որակավորումներին առաջադրվող պահանջների ոչ լիարժեք բավարարումը, ՀՀ բուհերի կողմից շուկայի իրական կարիքների անտեսումը,

- հարափոփոխ աշխատաշուկայում ՀՀ բուհերի շրջանավարտների ցածր պահանջարկը՝ պայմանավորված իրենց գիտելիքների ու հմտությունների մակարդակով,

- որակյալ կրթության հասանելիության ցածր մակարդակն ու կրթության ոլորտի արդի բարեփոխումներին անհամահունչ կրթության ու գիտության համակարգերը

<sup>2</sup> Անգլերեն համարժեքը՝ European Higher Education Area (EHEA):

<sup>3</sup> Անգլերեն համարժեքը՝ European Research Area (ERA):



(օրինակ՝ դանդաղ արձագանք զարգացման միտումներին, ոչ արդի բովանդակությամբ կրթական ու հետազոտական ծրագրեր, գիտակրթական գործընթացներում նորարարական մոտեցումների ու ժամանակակից ՏՀՏ-ների ոչ թիրախային կիրառում, կրթական (ակադեմիական) գերբեռնվածություն), ինչն էլ հանգեցնում է աշխատաշուկայի և կրթական ծառայությունների անհամապատասխանության,

- կրթության կառավարման գործընթացներում հասարակության ու արտաքին շահակիցների ներգրավվածության և բարձրագույն կրթության արդյունքներից շահակիցների բավարարվածության ցածր ցուցանիշները,

- ՊԴ կազմի տարիքային բարձր ցուցանիշներն ու ՊԴ կազմի երիտասարդ ուղեղների արտահոսքը մասնավոր հատված կամ ՀՀ տարածքից դուրս,

- երիտասարդ մասնագետների, ներառյալ տաղանդների կառավարման անարդյունավետ համակարգը:

ՀՀ բուհերն իրականացնում են բարձրագույն և հետբուհական կրթություն՝ սպասարկելով հիմնականում ազգային աշխատաշուկան և ունենալով տարածաշրջանային ու միջազգային շուկաներում մրցունակ լինելու հեռանկար: ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունում բուհերը սահմանված են որպես ակադեմիական կառույցների կարգավիճակ ունեցող հաստատություններ, որոնց գործառույթյան շրջանակները ներառում են կրթական և գիտահետազոտական գործունեություն: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով [1] ակադեմիական և հետազոտական համալսարանների տարբերակում չկա, հետևապես հստակորեն սահմանված չեն բուհերի ուսումնակրթական ու գիտահետազոտական գործառույթները: ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունները, անկախ իրենց կազմակերպարարական ձևից, սակայն իրենց կանոնադրական գործունեության շրջանակում, փաստացիորեն իրականացնում են ոլորտային գիտահետազոտական գործունեություն: Այդուհանդերձ, ՀՀ բուհերը փաստացիորեն իրականացնում են նաև գիտահետազոտական գործունեություն, սակայն դրանց գործառույթային հիմնական շրջանակն ընդգրկում է ուսումնառությունն ու դասավանդումը և ոչ թե գիտական հետազոտությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում տարանջատված չեն հետազոտական և ոչ հետազոտական համալսարանները, ՀՀ օրենքում համալսարանը ներկայացվում է որպես բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում սահմանված բուհերի տեսակներից մեկը, որի գործառույթների շրջանակում ամրագրված որոշակի դրույթներ մատնանշում են համալսարաններում գիտահետազոտական գործունեության իրականացնելու իրավասությունն ու պարտավորությունը: Այդ դրույթներից կարելի է նշել տեղական ու միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունն ու իրականացումը, գիտական հետազոտությունների կատարումը, հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը (Հոդված 6, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետեր), հետազոտողի համար հետբուհական մասնագիտական կրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի իրականացումը (Հոդված 6, 4-րդ կետի 2-րդ ենթակետ) և այլն:

Հետազոտական համալսարաններն այն կառույցներն են, որոնց նպատակների և կանոնադրական գործառույթների շրջանակը, կրթականից գատ, ներառում է գիտահետազոտական լայնածավալ գործունեություն: Հետազոտական համալսարանների հիմնական հանձնառությունը գիտահետազոտական արդյունքների ստեղծումն է՝ հիմնված

նորարարությունների, նորամուծությունների ու ստեղծարարության, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների կիրառման և հարակից ոլորտներում իրականացվող փորձարարական հետազոտական աշխատանքների վրա: Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության շրջանակը ներառում է գիտական հիմնարար ու կիրառական հետազոտություններ, փորձարարական և լաբորատոր աշխատանքներ, որոնց շնորհիվ շարունակաբար ստեղծվում են գիտական նոր արդյունքներ ու ծառայություններ, գործարկվում են նոր տեխնոլոգիաներ ու համակարգեր, խթանվում են գիտության առաջընթացը, նորարարությունն ու ոլորտի զարգացմանը նպաստող այլ գործընթացներ: Գիտահետազոտական արդյունքների ստեղծման վերոնշյալ գործընթացներն առավել արդյունավետորեն են իրականացվում, երբ ինտեգրվում են բարձրագույն կրթության համակարգին:

Հետազոտական համալսարանները, որպես կանոն, տարբեր կրթական համակարգերի մաս են կազմում և սոցիալական տարբեր դերակատարություններ ունեցող ու ֆինանսական տարբեր համակարգեր գործառող հաստատություններ են: Այն երկրներում, որտեղ համալսարանները տարանջատված չեն ըստ գիտահետազոտական և կրթական ոլորտների, դժվար է խթանել հետազոտական համալսարանների ստեղծումն ու գործառումը, քանի որ դա ծախսատար է ու ռեսուրսատար [5, էջ 72, 78]: Այլ ուսումնական հաստատությունների համեմատ՝ հետազոտական համալսարաններ հիմնադրելն ու գործառելը սովորաբար ավելի թանկ է, քանի որ հետազոտական համալսարանների գործունեությունը պահանջում է թանկարժեք գիտական սարքավորումներ, նյութատեխնիկական ռեսուրսներ, ներառյալ արագ զարգացող տեղեկատվական և այլ տեխնոլոգիաներ, համաշխարհային գիտական գիտելիքի աղբյուրներին հասանելիության ապահովում, ինչպես նաև գիտական աշխատողներին վճարելու համար անհրաժեշտ ավելի շատ ֆինանսական ռեսուրսներ, քան սահմանված է այլ ուսումնական հաստատություններում:

Հետազոտական համալսարանները միակ կառույցները չեն, որոնք գիտահետազոտական գործունեությամբ են զբաղվում. մասնագիտացված հետազոտական ինստիտուտները, պետության կողմից հիմնադրված լաբորատորիաները, գիտահետազոտական ու կորպորատիվ հետազոտական կենտրոններն ու այլ կառույցներ նույնպես իրականացնում են հետազոտություններ, և դրանցից շատերում ներգրավված են նաև միջազգային գիտական հանրույթի ներկայացուցիչներ: Մրցունակ տնտեսություններում հետազոտական համալսարանները տարբեր ինստիտուտներ ընդգրկող գիտահետազոտական բարդ համակարգ են կազմում: Հետազոտական համալսարանները թերևս ամենաարդյունավետ հետազոտություններ իրականացնող կառույցներն են: Ավելին, դրանք ֆորմալ կրթություն և վերապատրաստումներ են իրականացնում ուսումնառողների՝ հետազոտողների, գիտնականների ու մասնագետների համար՝ երիտասարդ կադրերին ընձեռելով մի շարք առավելություններ: Բարձր առաջադիմությամբ ուսումնառողների (հիմնականում հետբուհական/դոկտորական մակարդակում) ներուժի զարգացումն ու մրցունակ հետազոտության իրականացումն արժեքավոր գիտելիքի կուտակման ու փոխանցման հնարավորություններ են ստեղծում [5, էջ 74]:

ՀՀ կրթության համակարգում հետազոտական համալսարանների ստեղծումը կարող է զգալիորեն խթանել ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացումը՝ փոխկապակցելով գիտության, կրթության ու արտադրության համակարգերը: Այդ համակարգերի շղթայական կապը կարող է ամրապնդվել գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացներում հետազոտական համալսարանների

գործունեության արդյունքների ներդրմամբ՝ միտված սոցիալ-տնտեսական, գիտակրթական ու գիտահետազոտական խնդիրների երկարաժամկետ լուծմանը [2, էջ 51]:

ՀՀ-ում հետազոտական համալսարաններ ստեղծելու և արդյունավետորեն գործառնելու համագործակցային ու ինստիտուցիոնալ հիմնական **նպատակներն են**

- ստեղծել և զարգացնել գիտահետազոտական միջավայր, որը խթանում է միջգիտակարգային որակյալ հետազոտությունները, նորարարություններն ու տնտեսական զարգացումը,

- բարձրացնել գիտելիքների ու հետազոտությունների գիտականության մակարդակը որակյալ գիտության և հետազոտության միջոցով՝ խթանելով ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության մրցունակությունը և գիտելիքահենք հասարակության զարգացումը,

- ստեղծել գիտական հետազոտության ոլորտի արժեհամակարգը՝ թիրախային կերպով վերլուծելով և կապակցելով պետական ու մասնավոր ոլորտների և դերակատարների շահերը, կարիքները և պահանջները,

- նպաստել բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և արդյունաբերական ներունակության բարձրացման քաղաքականության թիրախային փոփոխությունների իրականացմանը,

- բարելավել գիտական անձնակազմի գիտահետազոտական գրագիտության ցուցանիշները,

- բարելավել գիտության ոլորտի ֆինանսավորման ցուցանիշները՝ բազմազանեցնելով ֆինանսավորման աղբյուրներն ու համալրելով ֆինանսական ռեսուրսները,

- բարձրացնել ներդրումային գրավչության մակարդակը՝ բարելավելով կրթության ու գիտության ոլորտներում ներդրումների ցուցանիշները և մշակելով ներդրումների ներգրավման նոր մոդելներ:

Վերոնշյալ հիմնական նպատակների իրականացումը ենթադրում է, որ հետազոտական համալսարանները ՀՀ կառավարության աջակցությամբ մեր երկրում պետք է լուծեն հետևյալ հիմնական **խնդիրները**.

➤ **բարելավել գիտահետազոտական միջավայրը.**

- մշակել գիտահետազոտական մշակույթի ամրապնդման, զարգացման և շարունակական բարելավման մեխանիզմներ՝ հիմնվելով ինստիտուցիոնալ արժեհամակարգի ու գիտական հանրույթի կարիքների վրա,

- համալրել գիտահետազոտական միջավայրը անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և նորագույն տեխնոլոգիաներով, արդիականացնել ու թվայնացնել գրադարանային ռեսուրսներն ու ենթակառուցվածքները՝ ապահովելով անդամակցություն միջազգային կառույցներին ու գրադարանային ֆոնդերին, համալրելով մասնագիտական, մասնավորապես հայալեզու գրականությունն ու էլեկտրոնային ռեսուրսները,

- մշակել և կիրառել գիտահետազոտական գործունեության սկզբունքներ, նորմեր ու կանոններ, որոնց հիման վրա գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձինք կկարողանան ստեղծել արժանահավատ գիտական արդյունքներ,

- ներդնել նոր գիտելիքի ստեղծման ու որակյալ հետազոտությունների ապահովման կառուցակարգեր, ներառյալ գրագողության դեմ պայքարի մեխանիզմներ ու գործիքակազմ՝ հիմնված ակադեմիական բարելավարքության և էթիկական սկզբունքների ու նորմերի վրա,

➤ **խթանել գիտահետազոտական ոլորտում ռազմավարությունների և ոլորտային քաղաքականությունների մշակումն ու արդյունավետ իրականացումը.**

- մշակել և սահմանել հետազոտության ոլորտի հստակ գերակայություններ և առաջնահերթություններ՝ հաշվի առնելով պետության ու հանրության արդի մարտահրավերները և ՀՀ կառավարության կողմից հաստատված գերակա ուղղությունները,

- մշակել գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարություն, ոլորտային գերակա ուղղություններ, ինստիտուցիոնալ ռազմավարական նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված գիտական միջոցառումների համալիր ծրագիր՝ շեշտադրելով ազգային կարիքները և հաշվի առնելով հետազոտության արդյունքների ներդրման հնարավորությունները,

- ներդնել գիտական անձնակազմի կառավարման հստակ քաղաքականություն, որը հաշվի կառնի պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի ներգրավման, պահպանման, կայունության ապահովման ու հոսունության նվազման խնդիրները, ինչպես նաև մասնագիտական ու սոցիալական կարիքների բավարարումը,

- մշակել ռազմավարություն թիրախային ոլորտներում երիտասարդ առաջատար մասնագետներին և գիտնականներին աշխատանքի ընդունելու համար՝ այդ ոլորտների զարգացման ու գիտական անձնակազմի գիտահետազոտական գրագիտության մակարդակի բարձրացման նպատակով,

- մշակել և արդյունավետորեն իրականացնել տաղանդների կառավարման պետական քաղաքականություն՝ խթանելու գիտության գերակա ճյուղերում և կրթության բոլոր աստիճաններում ուսումնառող տաղանդների բացահայտումն ու նրանց ներուժի արդյունավետ օգտագործումը՝ նրանց համար ապահովելով նաև համապատասխան վերապատրաստումներ,

- խթանել արտադրության տեխնոլոգիաների, գիտահետազոտական աշխատանքների ու նորարարության զարգացման և արդյունաբերության բազմազանեցման քաղաքականության փոփոխությունները,

- զարգացնել պետության համար գերակա գիտության նոր ճյուղեր, ապահովել գիտության և հետազոտության ներդաշնակեցումն ըստ հիմնական գերակայությունների, գիտակարգերի և միջգիտակարգային բնագավառների (բնական գիտություններ, ինժեներություն, հումանիտար և հասարակական գիտություններ),

- մշակել գիտահետազոտական աշխատանքների կատարման կառուցակարգեր, ընթացակարգեր և ուղեցույցներ, որոնք կարգավորում են շահերի բախման և պայմանագրային հետազոտություններին առնչվող խնդիրները,

➤ **բարձրացնել ՀՀ գիտական համակարգի գործառնական արդյունավետությունը, բարելավել գիտահետազոտական արդյունքները, ինչպես նաև ազգային ու միջազգային մակարդակներում մեծացնել դրանց ազդեցությունը և տեսանելիությունը՝ խթանելով գիտահետազոտական համագործակցության ընդլայնումը.**

- նպաստել ՀՀ գիտակրթական համակարգի ինտեգրմանը տարածաշրջանային ու միջազգային այլ գիտակրթական տարածքներին (հիմնականում եվրոպական, ամերիկյան, ասիական, ԱՊՀ)՝ ընդլայնելով հետազոտական համալսարանների և այլ հաստատությունների համագործակցության շրջանակները, և խթանել այդ համակարգերում մրցակցային առավելության ձեռքբերումը,

- մշակել և ներդնել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն և մեխանիզմներ, ընդլայնել գիտակրթական համագործակցության շրջանակն ազգային ու միջազգային մակարդակներում գիտահետազոտական ու ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի դերակատար-

ների հետ՝ խթանելով նաև այլ հաստատությունների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ու արդյունքների հրապարակումը,

- ստեղծել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կից հանրային խորհրդակցական մարմին՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների, այլ համալսարանների և ոչ ակադեմիական ոլորտի հաստատությունների (օրինակ՝ սթարթափների, ուղեղային կենտրոնների) հետ համագործակցության ձևաչափեր մշակելու, զարգացման նոր հնարավորություններ ձեռք բերելու և հետազոտության ոլորտում առկա կարիքները բացահայտելու համար,

- գործարար միջավայրում ինտեգրել գիտահետազոտական բաղադրիչը և նպաստել մասնավոր կազմակերպությունների գործունեության մեջ գիտելիքահենք արդյունքների կիրառմանը,

- բարձրացնել տեղական և միջազգային հետազոտություններում ընդգրկվածության մակարդակը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող պետական համագործակցության խթանման միջոցով,

- մշակել գիտահետազոտական աշխատանքների խթանման և գիտակրթական համակարգում պետական լեզվաքաղաքականության ապահովման մեխանիզմներ՝ միտված մասնագիտական հայերենի կենսունակության պահպանմանն ու զարգացմանը,

- մշակել և իրականացնել գիտահետազոտական աշխատանքների մարքեթինգային քաղաքականություն, ներառյալ շուկայում սեփական մրցակցային դիրքի տեղորոշում և ամրապնդում, մրցակիցների նկատմամբ շուկայում ունեցած մասնաբաժնի ու մրցակցային դաշտում դիրքի փոփոխության միտումների սահմանում,

- խթանել միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամաագրերում հրապարակումների քանակական ցուցանիշների և միջազգային գիտաժողովներում համալսարանների գիտական անձնակազմի ներգրավվածության թվի բարձրացումը, ինչպես նաև այդ հրապարակումների տեսանելիության աստիճանը,

➤ **ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր և հետազոտական համալսարանների համար ապահովել ֆինանսական կայունություն, մասնավորապես՝**

- նպաստել գիտության ոլորտի պետական ֆինանսավորման ռազմավարության մշակմանը, որը պետք է նպատակաուղղված լինի գիտահետազոտական արտադրողականության, գիտական արդյունքների որակի և մրցունակության ապահովմանը՝ հաշվի առնելով պետության ռազմավարական ու տնտեսական առաջնահերթությունները,

- մշակել ներդրումային քաղաքականություն և գործիքակազմ՝ միտված ներդրումային գրավչության մակարդակի բարձրացմանը և կրթության ու գիտության ոլորտներում ներդրումների ցուցանիշների բարելավմանը,

- մշակել եղանակներ՝ հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական աղբյուրներ և օժանդակություն ապահովելու համար,

- մեծացնել գիտության բնագավառում պետության նպատակային ներդրումների՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծավալը և բարձրացնել բուհերի գիտահետազոտական աշխատանքներին տրամադրվող պետական ֆինանսավորման ցուցանիշները.

- կարճաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2025 թվականը, ՀՀ պետական բյուջեում 20%-ով ավելացնել գիտական հետազոտություններին հատկացվող ծախսերը և բարձրացնել առանցքային ցուցանիշներն ու վերահսկել գիտության զարգացմանն ուղղված ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,

- միջնաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2030 թվականը, մեծացնել գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը մինչև ՀՀ ՀՆԱ-ի 3 %,
  - երկարաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2040 թվականը, մեծացնել գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը մինչև ՀՀ ՀՆԱ-ի 5 %,
    - ստեղծել և արդյունավետորեն գործառել անձեռնմխելի ֆոնդեր, որոնք կարող են կայուն ֆինանսական հոսքեր ապահովել գիտակրթական ու փորձագիտական-վերլուծական կառույցների համար,
    - խթանել նորարարական հիմնադրամների կազմավորման, գործունեության և վենչուրային կապիտալի (փոքր և միջին ձեռնարկություններում առանց գրավի երաշխիքի կատարված ներդրումներից ստացված կապիտալ) ձևավորման ու շրջանառության օրենսդրական հիմքերի փոփոխությունների իրականացումը,
    - ստեղծել ֆինանսավորման ապակենտրոնացված մոդել՝ խթանելով գիտության ոլորտում ցանցային ենթակառուցվածքների ամրապնդումը, հնարավորություն տալով համապատասխան գիտահետազոտական ենթակառուցվածքներին դառնալու ծախսային կենտրոններ և ռեսուրսները բաշխելու ըստ իրենց ռազմավարական առաջնահերթությունների,
    - ապահովել ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող (բազային ֆինանսավորում, նպատակային ֆինանսավորում, թեմատիկ ֆինանսավորում) գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրային վերահսկողությունը և բարձրացնել տվյալ ոլորտի ցուցանիշները,
    - մշակել ներդրումների եկամտաբերության գործակցի հաշվարկման համապատասխան մեթոդաբանություն և դրա կիրառման գործիքակազմ՝ ներդրումների կատարման անհրաժեշտությունը և իրաչափությունը որոշելու նպատակով,
    - մշակել հարկային արտոնությունների շրջանակ արդյունաբերության/արտադրության հետ համագործակցության համար՝ խթանելով հետազոտական համալսարանների, կրթության և գիտության պետական համակարգերի և տարածաշրջանի գրավչությունն ու մրցակցային առավելությունը,
    - բարձրացնել ֆինանսավորման աղբյուրների հայթայթման և համագործակցության հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը՝ նախաձեռնելով թիրախավորված միջոցառումներ ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման ու նոր աղբյուրների հայթայթման նպատակով,
- **բարելավել գիտահետազոտական համակարգի ցուցանիշները բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ գործառման և զարգացման միջոցով.**
- մշակել S2S-ներով կազմակերպվող կրթության և գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման չափանիշները և բարելավել այդ ոլորտի առկա ցուցանիշները,
  - խթանել S2S և բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների կողմից պահանջվող մասնագետների (պահանջարկ) և երկրի բարձրագույն կրթության համակարգի միջոցով պատրաստվող մրցունակ մարդկային ռեսուրսների կարողությունների ու հմտությունների (առաջարկ) համամասնությունը,
  - ապահովել S2S հմտություններին տիրապետող կրտսեր և ավագ գիտաշխատողների թվի համամասնությունը՝ ըստ հմտության տեսակի,
  - բարձրացնել տեղեկատվական ոլորտների (ներառյալ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության, ծրագրավորման, բնագիտական,

ագրոկենսատեխնիկական, թափոնների վերամշակման, կենսաէներգետիկ աղբյուրները, սննդի արդյունաբերության, կենսադեղագործական և այլ առաջնահերթ բնագավառների) արտադրանքի և ծառայությունների արտահանման ցուցանիշները,

- Բարելավել տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշները՝ հաշվի առնելով կրթության ձևերի բազմազանեցման և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությունը:

Հետազոտական համալսարանների ստեղծմանը, գործառնանք և մրցունակության բարձրացմանն ուղղված վերոնշյալ նպատակների իրականացմանն ու խնդիրների լուծման գործընթացները կարող են արդյունավետ լինել, եթե այդ համալսարանները կարողանում են արդյունավետորեն գործառել իրենց կառավարման համակարգերը: Համալսարանների կառավարումը պետք է նպաստավոր գիտակրթական և գիտահետազոտական միջավայրերի ստեղծման հիմք լինի:

Հետազոտական համալսարանները կարող են էապես խթանել իրենց գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը՝ հիմնվելով հետևյալ ինստիտուցիոնալ բաղադրիչների և գործընթացների գործառնման վրա [4].

- ✓ *ինստիտուցիոնալ կառավարման արդյունավետ համակարգ.* կառավարման ապակենտրոնացված համակարգեր և կազմակերպական ճկուն կառուցվածք ունեցող համալսարաններն առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում գիտահետազոտական գործունեության զարգացման համար: Ընդ որում, այդպիսի կառավարման համակարգերը ենթադրում են նաև մասնակցային որոշումների կայացում, առանցքային շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ակտիվ կիրառում՝ հիմնված պետական, հանրային ու կազմակերպական (կորպորատիվ) շահերի համադրման և հստակորեն սահմանված ռազմավարական նպատակների վրա,

- ✓ *ռազմավարական նպատակների սահմանում.* համալսարանների ռազմավարական նպատակները, դրանց համար հիմք հանդիսացող ինստիտուցիոնալ արժեհամակարգն ու սկզբունքները պետք է համալսարանների ներքին ու արտաքին առանցքային շահակիցների համար լինեն համընդունելի, տեսանելի և համախմբող,

- ✓ *կազմակերպական բարենպաստ մշակույթ.* համալսարանների ներքին ու արտաքին առանցքային շահակիցները պետք է ֆիդուցիար հարաբերությունների և սեփական հանձնառության հիման վրա որդեգրեն համընդհանուր արժեհամակարգ, ներառյալ գիտական հետազոտության ոլորտում սահմանված արժեքները, չափանիշներն ու էթիկայի նորմերը, փորձառությունը, ինչպես նաև հիմնվեն այն համոզմունքի վրա, որ իրենց գաղափարներն ու նորարարությանն ուղղված առաջարկները լսելի կլինեն տվյալ հաստատության ղեկավարության և որոշումներ կայացնողների կողմից,

- ✓ *միջանձնային բարիդրացիական հարաբերությունների ապահովում.* գիտահետազոտական գործունեության արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է համալսարանների ներկազմակերպական այնպիսի մթնոլորտով, որը խրախուսում է բաց ու կառուցողական համագործակցություն, ստեղծում է բարոյահոգեբանական առողջ միջավայր ստեղծագործական աշխատանքների իրականացման համար, խթանում է նորարարական գաղափարների փորձարկումն ու իրականացումը, ապահովում է ղեկավարության կողմից շարունակական աջակցությունը և այդպիսով խթանում նաև մարդկային ռեսուրսների պահպանման բարձր ցուցանիշներ,

- ✓ *հետազոտահենք գործունեության իրականացում.* գիտահետազոտական գործունեությունը անպայման պետք է լինի ռազմավարական առաջնահերթությունների

շարքում կամ մյուս ոլորտների համեմատ առավել մեծ կշիռ ունենա, ինչպես նաև հիմնված լինի էմպիրիկ և հավաստի տվյալների վրա,

✓ *հասնագործակցային կապերի ամրապնդում և ընդլայնում*. գիտական հետազոտության ոլորտում համալսարանները շարունակաբար և հետևողականորեն պետք է կապեր հաստատեն այլ ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների, լաբորատորիաների, սթարթափ կազմակերպությունների և այլ կառույցների հետ, ինչի շնորհիվ հետազոտական համալսարանները կարող են ապահովել իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքների գիտահանրահասանելիությունն ու առևտրայնացումն ազգային ու միջազգային մակարդակներում,

✓ *գիտահետազոտական աշխատանքների կատարման խթանում*. համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այդ հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների կողմից սահմանված և ղեկավարության կողմից գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված պարզևատրման ու խրախուսման (ֆինանսանյութական և ոչ նյութական) քաղաքականություններով ու համակարգերով, ինչպես նաև խրախուսման ինստիտուցիոնալ այնպիսի չափանիշների ու մեխանիզմների նպատակային կիրառմամբ, որոնցով համալսարաններն ապահովում են խրախուսման անաչառություն ու հավասար պայմաններ գիտահետազոտական աշխատանքների գնահատման համար,

✓ *պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի մասնագիտական զարգացում*. հետազոտական համալսարանները մեծ ջանքեր պետք է գործադրեն և համապատասխան ռեսուրսներ տրամադրեն որակյալ գիտական կազմի և մասնագետների համալրման ու պատրաստման, կադրային ներուժի բացահայտման, մասնագիտական զարգացման և գիտահետազոտական գրագիտության, հանձնառության աստիճանի բարձրացման և նրանց կատարողականի պարբերական գնահատման ուղղությամբ: Մասնագիտական զարգացման հնարավորությունները համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության առանցքային նախապայմաններից են, և համալսարանները պետք է ապահովեն դրանք՝ խթանելով իրենց պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի կատարողականի բարելավումը և գիտահետազոտական նոր արդյունքների ստեղծումը,

✓ *պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի բեռնվածության իրաչափ բաշխում*. հետազոտական համալսարանները պետք է իրաչափորեն բաշխեն իրենց առանցքային այն շահակիցների (պրոֆեսորադասախոսական և գիտական կազմի) բեռնվածությունը, որոնց գիտահետազոտական ներուժը շարժիչ ուժ է այդ հաստատությունների գիտահետազոտական գործունեության կայուն զարգացման ու հեռանկարային բարելավման համար՝ նրանց տրամադրելով ստեղծագործական և գիտահետազոտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ժամաքանակ ու ռեսուրսներ:

**Եզրակացություն:** Այսպիսով, ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումն ու գործառումը կարող են համախմբել գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում ունեցած մրցակցային առավելությունները, խթանել գիտելիքահենք տնտեսության զարգացումը և գիտահետազոտական գերազանցությունը տարբեր գիտակարգերում: Հետազոտական համալսարանները կարող են նաև նպաստել պետության և տնտեսության գերակայությունների ուղղությամբ հետազոտությունների իրականացմանը, տնտեսության մրցունակության բարձրացմանը և գիտակրթական անվտանգու-



թյան ապահովմանը: Միաժամանակ դրանք պետք է ունենան իրականացված հետազոտությունների արդյունքներն ու գիտական գիտելիքն ազգային և միջազգային մակարդակներում տարածելու հանձնառություն:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Բարձրագույն և հետրոհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2004 թ. դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն)
2. Խաչատրյան Ռ., *Հետազոտական համալսարանների անհրաժեշտությունը ՀՀ կրթական համակարգում*, Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Կրթության կառավարում, «Բանբեր», 2012, 2(22), էջեր 42-53:
3. American Academy of Arts and Sciences 2015. *Public Research Universities: Why They Matter*. The Lincoln Project: Excellence and Access in Public Higher Education, Cambridge, MA.
4. Hanover Research 2014. *Building a Culture of Research: Recommended Practices*. Academy Administration Practice.
5. Sadlak J. & Cai L. N. (Editors) 2009, *The World-Class University as Part of a New Higher Education Paradigm: From Institutional Qualities to Systemic Excellence*. UNESCO European Centre for Higher Education. Shanghai Jiao Tong University, Cluj University Press.

### **СТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ ВУЗОВ В КОНТЕКСТЕ ПЕРСПЕКТИВНОГО РАЗВИТИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**Хачатрян Роберт**

*Государственный университет имени В. Брюсова, Армения*

#### **Аннотация**

Առցանց դասերի արդյունավետության վերաբերյալ հետազոտությանը մասնակցած ուսուցիչների, աշակերտների և ծնողների կարծիքները բնեռայնորեն տարբերվում են. հետազոտության մասնակիցների և փորձագետների մի մասի կարծիքով առցանց դասերը արդյունավետ էին, իսկ մի մասը նշել է, որ այդ դասերը բացարձակ արդյունավետ չեն եղել [1, 29]: Աշակերտները առավել բարձր գնահատական են տվել դասավանդման նյութերի հասանելիությանը և առավել ցածր գնահատական՝ հեռավար դասերի ժամանակ ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորությանը [1, 38]: Աշակերտները, ի համեմատություն իրենց ծնողների, ավելի բարձր են գնահատել առցանց դասերի արդյունավետությունը: Աշակերտներն ու ծնողները հումանիտար առարկաների առցանց մատուցումը ավելի արդյունավետ են համարել, քան բնագիտական առարկաներինը:

Սոցիալական հարթակների դիսկուրս-վերլուծությունը, ի լրումն քանակական հետազոտության արդյունքների, թույլ տվեց տարանջատել հեռավար կրթությանն առնչվող հետևյալ հիմնական խնդիրները.

1. Հեռավար կրթությունը մեկուսացնում է աշակերտներին իրենց համադասարանցիներից և ուսուցիչից: Կրթության արդյունավետությունը մասամբ պայմանավոր-

ված է նաև այդ շփամար: Իսկ հեռավար, առցանց կրթությունը կարծես **պատանեշ է ստեղծում սովորողի ու դասավանդողի միջև:**

2. Հեռավար կրթությունը **հոգեբանական, կրթական և սոցիալական** բնույթի բազմաթիվ խնդիրներ կարող է ստեղծել հատկապես տարրական դասարանի աշակերտների համար:

3. Անհրաժեշտ է հստակորեն տարանջատել **աշակերտների մասնակցությունը և ներգրավվածությունը:** Թեպետ աշակերտների զգալի մասը մասնակցել է հեռավար դասերի, նրանց միայն մի հատվածն է ակտիվորեն ներգրավված եղել դասերին: Ընդ որում՝ հեռավար դասերի ողջ ընթացքում աշակերտների ներգրավվածությունը նվազել է:

4. Թե՛ **մեթոդաբանական և թե՛ դիդակտիկ նյութերի** տեսանկյունից դպրոցն ու կրթական համակարգը բավարար չափով պատրաստ չէին առցանց կրթության կազմակերպմանը: Առարկայական դասագրքերի և դիդակտիկ նյութերի զգալի մասը հասանելի էին միայն թղթային և ոչ թե էլեկտրոնային տարբերակով, որը տեխնիկապես դժվար էր մատուցել աշակերտներին:

5. Առցանց կրթությունը **դասավանդողից առնվազն տարրական տեխնիկական գիտելիքներ** է պահանջում, մինչդեռ ուսուցիչների զգալի մասը չի տիրապետում նյութի ներկայացման, տեսահաղորդակցման և այլ անհրաժեշտ հմտությունների:

6. Համակարգչի կամ հեռախոսի էկրանի առջև երկար ժամեր անցկացնելը կարող է **առողջական լուրջ խնդիրներ** ստեղծել երեխաների համար:

7. Հեռավար կրթությունը ենթադրում է **աշակերտների ինքնուրույնության որոշակի աստիճան**, մինչդեռ հատկապես տարրական դասարանների աշակերտները հաճախ դժվարանում են ինքնուրույն մասնակցել հեռավար դասերին:

**Եզրակացություն:** Հեռավար կրթության վերաբերյալ տեսական հայեցակարգերը ձևավորվել են դեռևս մի քանի տասնամյակ առաջ, սակայն 2020 թ. COVID-19 պայմանավորված սահմանափակումները հեռավար կրթության իրականացումն աննախադեպ մասշտաբների հասցրին ինչպես զրոբալ մակարդակում, այնպես էլ առանձին երկրներում: Հայաստանում 2020 թ. մարտից՝ համավարակով պայմանավորված արտակարգ դրության հաստատումից հետո, հանրակրթական դպրոցները նույնպես անցան առցանց կրթության ձևաչափի: Կրթական հետազոտությունների տիրույթում օրակարգային դարձավ այդ փորձի ուսումնասիրությունը՝ ուղղված առցանց կրթության ժամանակ առաջ եկած խնդիրների բացահայտմանը և դրանց ուղղված լուծումների մշակմանը:

Հեռավար կրթության որակի վերաբերյալ աշակերտների գնահատականներում առկա են հետևյալ ատրիբուտները՝ դասավանդման նյութերի հասանելիությունը, երեխաների նկատմամբ անհատական մոտեցում կիրառելու հնարավորությունը: Ուսուցիչները շեշտադրել են աշակերտների մասնակցությունն ու ներգրավվածությունը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Համավարակի պայմաններում կրթական քաղաքականության արդյունավետության գնահատման զեկոյլց, 2021 թ., <https://erit.am/documents/pdf/98b2f8f11b81657a85af29f6a02f05e0.pdf> [15.08.2021]:

2. Фуко Мишель, Археология Знания. 1996, 50.

3. Buysens E., La communication et l'articulation linguistique. – Bruxelles: Presses Université de Bruxelles, 1969, pp. 191-197.

4. Benveniste E., “La philosophie analytique et le langage,” in *Problèmes de linguistique générale*, Vol. I (Paris: Gallimard, 1966), 267-276.

5. Michel F., "Les mots et les choses: Une archeologie des sciences humaines", Callimard 1966.
6. Amundsen C. (1993). The Evolution of Theory in Distance Education. In Keegan, D. (Ed.). *Theoretical Principles of Distance Education*: 61-79. London: Routledge.
7. Bartlett L., & Vavrus F. (2014). Transversing the vertical case study: A methodological approach to studies of educational policy as practice. *Anthropology & Education Quarterly*, 45(2).
8. Baxter H., Habermas's Discourse Theory of Law and Democracy, 50 Buff. L. Rev. 205 (2002).
9. Çaçatay, İhsan Ulus. 2020. "Emergency Remote Education vs. Distance Education". European Commission. Accessed February 20, 2020.
10. Gudmundsdottir, G. B., & Hathaway, D. M. (2020). "We Always Make It Work": Teachers' Agency in the Time of Crisis. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 239-250.
11. Hanson D., Maushak N. J., Schlosser C. A., Anderson M. L., Sorenson C. & Simonson M. (1997). *Distance education: Review of the literature* (2nd ed.). Washington, DC: Association for Educational Communications and Technology. Ames, Iowa: Research Institute for Studies in Education.
12. Heng, Kimkong & Sol, Koemhong. 2020. "Online learning during COVID-19: Key challenges and suggestions to enhance effectiveness". Cambodian Education forum, December. Accessed February 20, 2020.
13. Hodges C., Moore S., Lockee B., Trust T., & Bond A. (2020). The difference between emergency remote teaching and online learning. *Educause Review*, 27.
14. HOW MANY CHILDREN AND YOUNG PEOPLE HAVE INTERNET ACCESS AT HOME? Estimating digital connectivity during the COVID-19 pandemic.
15. Keegan D. (1986). *The foundations of distance education*. London: Croom Helm.
16. Levinson B. A., Sutton M., & Winstead T. (2009). Education policy as a practice of power: Theoretical tools, ethnographic methods, democratic options. *Educational Policy*, 23(6), 767-795.
17. OECD. (2020). *OECD Policy Responses to Coronavirus (COVID-19): Combatting COVID-19's effect on children*. Paris: OECD Publishing.
18. Perraton H. (1988). A theory for distance education. In D. Stewart, D. Keegan, & B. Holmberg (Ed.) *Distance education: International perspectives* (pp. 34-45). New York: Routledge.
19. Schiffrin D. *Approaches to Discourse: Language as Social Interaction*. Oxford: Wiley- Blackwell; 1994
20. Trust T. & Whalen J. (2020). Should Teachers Be Trained in Emergency Remote Teaching? Lessons Learned from the COVID-19 Pandemic. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 189-199.
21. Trust T., Carpenter J. P., Krutka D. G., & Kimmons R. (2020). # Remote Teaching & # Remote Learning: Educator Tweeting During the COVID-19 Pandemic. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 151-159.
22. Varis P. (2014). Digital ethnography. (Tilburg Papers in Culture Studies; No. 104).

## **ДИСТАНЦИОННОЕ ОБРАЗОВАНИЕ В АРМЕНИИ ВО ВРЕМЯ COVID-19. ДИСКУРС-АНАЛИЗ**

**Галстян Марина**

*Центр по образовательным исследованиям и  
консультаций, Армения*

### **Аннотация**

#### **Проблема данного исследования**

2020 г. создал серьезные проблемы для системы образования как в глобальном масштабе, так и в отдельных странах, вынудив быстро перейти от традиционного класса к онлайн обучению. В Армении в 2020 г. после введения в марте чрезвычайного положения из-за эпидемии средние школы перешли на онлайн обучение. Изучение этого опыта стало актуальным, направленным на выявление проблем, возникающих при онлайн обучении, и разработку их решений.

**Актуальные исследования по данной проблеме показывают**, что во время кризиса COVID-19 дистанционное обучение было единственной жизнеспособной альтернативой, обеспечивающей непрерывность образовательного процесса.

Дистанционное образование позволило продолжить образование для студентов во всем мире, давая возможность различным обществам продолжать образование своего молодого поколения, квалифицированных кадров, необходимых для стимулирования экономического роста, решения национальных, региональных и глобальных проблем.

Многочисленные международные исследования показали, что качество и доступность дистанционного обучения во время эпидемии напрямую зависели от доступности интернета, технических ресурсов, навыков учителей, обучения инструментам онлайн-обучения.

**Целью данного исследования является** анализ эффективности образовательной политики в Армении во время эпидемии, качества и эффективности образовательных услуг государственных школ, согласно оценке различных групп посредством дискурс-анализа.

**Новизна.** Качество и эффективность дистанционного образования в Армении оценивалась с помощью методологии дискурсивного анализа.

**Ключевые слова:** дистанционное образование, качество образования, образовательная политика, дискурс-анализ, образование в Армении во время эпидемии.

### Список использованной литературы

1. Отчет по оценке эффективности образовательной политики в условиях эпидемии, 2021, <https://erit.am/documents/pdf/98b2f8f11b81657a85af29f6a02f05e0.pdf> [15.08.2021].
2. Фуко Мишель: Археология Знания. 1996, 50.
3. Буйссенс Э. Коммуникация и языковая артикуляция. - Брюссель: Университет Брюсселя Прессы, 1969, с. 191-197.
4. Бенвенист Э. «Аналитическая философия и язык» // Проблемы общего языкознания. Я. (Париж: Галлимар, 1966), 267-276.
5. Мишель Ф., «Слова и вещи: археология гуманитарных наук», Каллимар, 1966
6. Амундсен, С. 1993. Эволюция теории дистанционного образования. В Кигане, Д. (Ред.). Теоретические основы дистанционного образования: 61-79. Лондон: Рутледж.
7. Бартлетт, Л., Ваврус, Ф. (2014). Преодоление вертикального тематического исследования: методологический подход к изучению образовательной политики как практики. Ежеквартально по антропологии и образованию, 45(2).
8. Бакстер Х. Дискурсивная теория права и демократии Хабермаса, 50 Buff. L. Rev. 205 (2002).
9. Чагатай, Ихсан Улус. 2020. «Экстренное дистанционное образование против дистанционного обучения». Европейская комиссия, 2020.
10. Гудмундсдоттир, Г. Б., и Хэтэуэй, Д. М. (2020). «Мы всегда заставляем это работать»: Агентство учителей во время кризиса. Журнал технологий и педагогического образования, 28(2), 239-250.
11. Хансон Д., Маушак Н.Дж., Шлоссер К.А., Андерсон М.Л., Соренсон К. и Саймонсон М. (1997). Дистанционное обучение: Обзор литературы (2-е изд.). Вашингтон, округ Колумбия: Ассоциация образовательных коммуникаций и технологий. Эймс, Айова: Исследовательский институт исследований в области образования.
12. Хенг, Кимконг и Сол, Кымхонг. 2020. «Онлайн-обучение во время COVID-19: основные проблемы и предложения по повышению эффективности». Камбоджийский образовательный форум, декабрь. 2020.
13. Ходжес, К., Мур, С., Локки, Б., Траст, Т., и Бонд, А. (2020). Разница между экстренным дистанционным обучением и онлайн-обучением. Обзор Educause, 27.
14. СКОЛЬКО ДЕТЕЙ И МОЛОДЕЖИ ИМЕЮТ ДОСТУП В ИНТЕРНЕТ ДОМА? Оценка цифровой связи во время пандемии COVID-19.
15. Киган, Д. (1986). Основы дистанционного образования. Лондон: Крум Хелм.
16. Левинсон Б. А., Саттон М. и Уинстед Т. (2009). Образовательная политика как практика власти: теоретические инструменты, этнографические методы, демократические варианты. Образовательная политика, 23(6), 767-795.
17. ОЭСР. (2020). Меры политики ОЭСР в отношении коронавируса (COVID-19): борьба с воздействием COVID-19 на детей. Париж: Издательство ОЭСР.
18. Перратон, Х. (1988). Теория дистанционного обучения. В Д. Стюарт, Д. Киган и Б. Холмберг (ред.) Дистанционное образование: международные перспективы (стр. 34-45). Нью-Йорк: Рутледж.
19. Шиффрин Д. Подходы к дискурсу: язык как социальное взаимодействие. Оксфорд: Уайли-Блэквелл; 1994.
20. Доверие, Т. и Уэлен, Дж. (2020). Следует ли обучать учителей дистанционному обучению в экстренных ситуациях? Уроки пандемии COVID-19. Журнал технологий и педагогического образования, 28(2), 189-199.
21. Траст Т., Карпентер Дж. П., Крутка Д. Г. и Киммонс Р. (2020). # Удаленное обучение и # Удаленное обучение. Журнал технологий и педагогического образования, 28(2), 151-159.
22. Varis, P. (2014). Digital ethnography. (Tilburg Papers in Culture Studies; No. 104).

Summary

COVID-19 posed serious challenges to the education system, both globally and in individual countries, forcing a rapid transition from the traditional classroom to the online classroom. In Armenia 2020 after the establishment of the state of emergency due to the epidemic in March, the secondary schools switched to the format of online education. The study of this experience became relevant, aimed at revealing the problems encountered during online education and developing solutions to them.

Numerous international studies have shown that the quality and accessibility of distance learning during the epidemic was directly affected by the availability of the Internet and technical resources, teacher skills and training on online learning tools.

The aim of this article is to find out how students, parents, teachers, policy makers, education managers evaluate the education, the quality and effectiveness of distance education during the epidemic.

Novelty. The quality and effectiveness of distance education in Armenia was assessed using the methodology of discourse analysis.

**Keywords:** *distance education, education quality, education policy, discourse analysis, education in Armenian during COVID-19.*

References:

1. Report on the evaluation of the effectiveness of educational policy in the conditions of the epidemic, 2021, <https://erit.am/documents/pdf/98b2f8f11b81657a85af29f6a02f05e0.pdf>, [15.08.2021].
2. Foucault Michel: *Archeology of Knowledge*. 1996, 50
3. Buysens E. *Communication and linguistic articulation*. - Brussels: Presses University of Brussels, 1969. – P. 191–197.
4. Benveniste E., “Analytical Philosophy and Language,” in *Problems of General Linguistics*, vol. I, (Paris: Gallimard, 1966), 267–276.
5. Michel F., “Words and things: An archeology of the human sciences”, Callimard, 1966
6. Amundsen, C. 1993. *The Evolution of Theory in Distance Education*. In Keegan, D. (Ed.). *Theoretical Principles of Distance Education*: 61-79. London: Routledge.
7. Bartlett, L., & Vavrus, F. (2014). Transversing the vertical case study: A methodological approach to studies of educational policy as practice. *Anthropology & Education Quarterly*, 45(2).
8. Baxter H., *Habermas's Discourse Theory of Law and Democracy*, 50 *Buff. L. Rev.* 205 (2002).
9. Çağatay, İhsan Ulus. 2020. "Emergency Remote Education vs. Distance Education". European Commission. Accessed February 20, 2020.
10. Gudmundsdottir, G. B., & Hathaway, D. M. (2020). "We Always Make It Work": Teachers' Agency in the Time of Crisis. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 239-250.
11. Hanson, D., Maushak, N.J., Schlosser, C.A., Anderson, M.L., Sorenson, C. & Simonson, M. (1997). *Distance education: Review of the literature* (2nd ed.). Washington, DC: Association for Educational Communications and Technology. Ames, Iowa: Research Institute for Studies in Education.
12. Heng, Kimkong & Sol, Koemhong. 2020. "Online learning during COVID-19: Key challenges and suggestions to enhance effectiveness". *Cambodian Education forum*, December. Accessed February 20, 2020.
13. Hodges, C., Moore, S., Lockee, B., Trust, T., & Bond, A. (2020). The difference between emergency remote teaching and online learning. *Educause Review*, 27.
14. HOW MANY CHILDREN AND YOUNG PEOPLE HAVE INTERNET ACCESS AT HOME? Estimating digital connectivity during the COVID-19 pandemic.
15. Keegan, D. (1986). *The foundations of distance education*. London: Croom Helm.
16. Levinson, B. A., Sutton, M., & Winstead, T. (2009). Education policy as a practice of power: Theoretical tools, ethnographic methods, democratic options. *Educational Policy*, 23(6), 767-795.
17. OECD. (2020). *OECD Policy Responses to Coronavirus (COVID-19): Combatting COVID-19's effect on children*. Paris: OECD Publishing.
18. Perraton, H. (1988). A theory for distance education. In D. Stewart, D. Keegan, & B. Holmberg (Ed.) *Distance education: International perspectives* (pp. 34-45). New York: Routledge.
19. Schiffrin D. *Approaches to Discourse: Language as Social Interaction*. Oxford: Wiley- Blackwell; 1994.

20. Trust, T. & Whalen, J. (2020). Should Teachers Be Trained in Emergency Remote Teaching? Lessons Learned from the COVID-19 Pandemic. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 189-199.
21. Trust, T., Carpenter, J. P., Krutka, D. G., & Kimmons, R. (2020). # Remote Teaching & # Remote Learning: Educator Tweeting During the COVID-19 Pandemic. *Journal of Technology and Teacher Education*, 28(2), 151-159.
22. Varis, P. (2014). Digital ethnography. (Tilburg Papers in Culture Studies; No. 104).

*Материал был представлен и отправлен на рецензию: 28.09.2021*

*Принято к публикации: 26.09.2021*

*Рецензент: канд. пед. наук, доцент Самвел Асатрян*

*The material was submitted and sent to review: 28.09.2021*

*Was accepted for publication: 26.09.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Samvel Asatryan*

**371:338.48**

## **ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**Էլոյան Նարեկ**

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և  
սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան*

**Համառոտ ներածական:** Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա աշակերտի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Տուրիզմը գիտության և կյանքի շաղկապման այն կարևորագույն օղակն է, որը հնարավորություն է տալիս հանրակրթական տարբեր առարկաներից ստացած տեսական գիտելիքները անմիջապես կիրառելու և ստուգելու գործնականում [2, էջ 28]:

**Բանալի բառեր:** Տուրիստական պատրաստություն, միջառարկայական կապեր, գիտելիք, կարողություն, դպրոցականներ:

**Հիմնախնդիրը:** Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ողջ ուսումնական գործընթացը կառուցվում է միջառարկայական կապերի հիման վրա:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտության հիմնավորման համար բերում են հետևյալ փաստարկները. «Որպես մեկ ամբողջականություն՝ տարբեր առարկաների շնորհիվ նյութի ուսումնասիրման հնարավորություն» [7]: Եվ այս տեսանկյունից տուրիստական պատրաստությունը, որը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկն է, իր բազմաբնույթ բովանդակությամբ ու կիրառելիությամբ կարող է դիտարկվել այն եզակի միջոցը, որը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ ապահովում է միջառարկայական կապերը:

**Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն:** Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը մանկավարժության համար նոր հիմնախնդիր չէ, և խնդրի լուծումը մշտապես հիմնավորվել է փիլիսոփայական հայացքներով, տարբերակված գործընթացի և գիտական կարողությունների ու հմտությունների ինտեգրման այս կամ այն աստիճանի ընդհանուր զարգացման ընթացքում: Գիտելիքների փոխանցման խնդրին, սովորողների կարողությունների ձևավորմանը, դրանց համադրմանը և նոր իրադրության մեջ կիրառելուն նվիրված են մի քանի մանկավարժների հետազոտություններ [4, 6, 7]: Այսպես, Վ. Ն. Մակսիմովայի կարծիքով միջառարկայական կապերի բարեհաջող իրականացումը դրականորեն է ազդում ուսումնական գործընթացի վրա և նպաստում ակտիվ ձևերի կազմակերպմանը [7]: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով և տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրությամբ:

**Հետազոտության նպատակը:** Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել ֆիզիկական դաստիարակության գործընթացում տուրիստական պատրաստության և հանրակրթական առարկաների միջառարկայական կապերը:

**Հետազոտության նորույթը:** Ներկայացված են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության և հանրակրթական առարկաների միջառարկայական կապերը:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Զբոսաշրջության (տուրիզմի) բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ [1, 3, 5]: Տուրիզմը այն եզակի միջոցներից մեկն է, որը ապահովում է դպրոցականների օրգանիզմի կոփումը, ֆունկցիոնալ վիճակի բարելավումը, բազմակողմանի ֆիզիկական պատրաստությունը և, դրա հետ մեկտեղ, նպաստում է անձի բարոյականային և հայրենասիրական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակությանը [3, 5]:

Տուրիզմի կիրառելիությունը արտահայտվում է արշավների ժամանակ ձևավորված կյանքի համար կարևոր գիտելիքներում ու բազմազան կարողություններում: Վերջիններս ներառում են բովանդակությամբ ու ձևով տարբեր գործողություններ՝ տեղաշարժվել տեղանքի տարբեր պայմաններում, հաղթահարել բնական խոչընդոտներ, կողմնորոշվել քարտեզի ու կողմնացույցի օգնությամբ, կազմակերպել գիշերակաց, ցանկացած պայմաններում խարույկ վառել, սնունդ պատրաստել տարբեր դաշտային պայմաններում, անհրաժեշտ օգնություն ցուցաբերել այրվելու, սառչելու կամ արևահարվելու, միջատների, օձերի խայթոցի կամ այլ վնասվածքների դեպքում:

Հայտնի են տուրիզմի լայն հնարավորությունները կյանքում կիրառական նշանակություն ունեցող բազմաբնույթ շարժողական կարողությունների ձևավորման համար՝ մազլցել և վարցատկ կատարել, տիրապետել գետնանցմանը, սարից իջնելու անվտանգ եղանակներին և այլն:

Նկարում պատկերված են տուրիստական պատրաստության ընթացքում միջառարկայական կապերը:

Ներկայացնենք տուրիստական պատրաստության ընթացքում միջառարկայական կապերի ապահովման մի քանի օրինակ:



• Մաթեմատիկա: Հարթաչափով որոշել լանջի թեքությունը, աչքաչափով՝ գետի կամ գետակի լայնությունը, քայլերի հանրագումարով մոտավոր որոշել հաղթահարված տարածության ընդհանուր երկարությունը:

• Ֆիզիկա: Որոշել արագությունը, տեղեկանալ մթնոլորտային ճնշման, էլեկտրամագնիսական դաշտի մասին:


• Քիմիա: Իմանալ շրջակա միջավայրի աղտոտման գործոնները, կարողանալ տարբերել վտանգավոր նյութերը:

• Աշխարհագրություն: Ծանոթացում տեղանքում ռելիեֆին, դրանց բաղադրամասերի, շերտերի ուսումնասիրում: Տեղանքում արևի կամ կողմնացույցի օգնությամբ կողմնորոշում:

• Կենսաբանություն: Օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրա (նյութափոխակալության բարելավում, ֆունկցիոնալ կարողությունների և աշխատունակության բարձրացում) բնության բնական գործոնների բարենպաստ ազդեցության իմացություն: Պատկերացում ունենալ տեղանքի բույսերի մասին, տարբերել վայրի ուտելի բույսերը, հատապտուղները, սնկերը, ճանաչել դեղաբույսերը, պահպանել բնությունը և այլն:

• Պատմություն: Արշավների կազմակերպում պատմական, ազատագրական, հեղափոխական վայրերում, ծանոթացում տեղանքի պատմամշակութային և կրոնական արժեքներին:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տուրիզմն ու դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն ունեն ինտեգրման լայն հնարավորություն:



**Նկար:** Միջառարկայական կապերը տուրիստական պատրաստության ընթացքում

**Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ:** Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել, որ տուրիստական պատրաստությունը, լինելով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկը,

կարող է իր բազմաբնույթ բովանդակությամբ ու կիրառելիությամբ դիտարկվել այն եզակի միջոցը, որն ապահովում միջառարկայական բազմապիսի կապերը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ:

Ընդգծվում են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության կարևորությունը և իրականացման անհրաժեշտությունը: Նաև պետք է փաստել, որ առկա են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության իրականացման հետ կապված մի շարք հարցեր, որոնք արդիական են և լուծման կարիք ունեն: Հետագա հետազոտություններն ուղղված կլինեն 7-9-րդ դասարանների աշակերտների համար տուրիստական պատրաստության բովանդակության ու դասավանդման մեթոդիկայի մշակմանը և ֆիզիկական դաստիարակության գործընթաց ներդրմանը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Երանոսյան Հ., Չատինյան Ա., Հարությունյան Ջ., Տուրիզմ. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, 392 էջ:
2. Երանոսյան Հ. Մ., Տուրիզմը բոլորի համար: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972, 184 էջ:
3. Դպրոցական տուրիզմը երեխաների ուսումնասիրման արդյունավետ միջոց, Հայկական ՄՍՀ միևիստություն, Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, Երևան, 1968, 22 էջ:
4. Абдуллаева Г. Д., Атажанов И. И., Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук, 2016, N3-3, с. 66-68.
5. Вербя И. А., Голицын С. М., Куликов В. М., Рябов Е. Г., Туризм в школе, Москва, 1983, 160 с.
6. Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N2, с. 41-45.
7. Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.: «Просвещение», 1984, 184 с.

### **МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ В ПРОЦЕССЕ ТУРИСТИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ**

**Элоян Нарек**

*Государственный институт физической культуры и спорта Армении  
Ереван, Армения*

#### **Аннотация**

В действующих стандартах и программах общеобразовательной школы особое внимание уделяется такому построению учебного процесса, которое обеспечивает не только овладение знаниями, но и способствует формированию процессов восприятия предметов, явлений, их анализу, обобщению и самое главное их практическому применению. Весь учебный процесс строится на основе межпредметных связей.

В этом аспекте туристическая подготовка, являясь средством физического воспитания школьников, по своему содержанию и прикладности может рассматриваться как единственное средство, обеспечивающее разностороннюю связь со всеми общеобразовательными предметами в школе.

**Цель исследования:** изучить в процессе физического воспитания межпредметные связи туристической подготовки и общеобразовательных предметов.

Представлены межпредметные связи в процессе туристической подготовки школьников.

Дальнейшие исследования будут направлены на разработку содержания и методики преподавания туризма для учащихся 7-9-ых классов и его внедрения в процесс школьного физического воспитания.

**Ключевые слова:** туристическая подготовка, межпредметные связи, знания, умения, школьники.

### **Список использованной литературы**

1. Ераносян Г., Чатинян А., Арутюнян Дж.: Туризм. учебно-методическое пособие, Ереван, «Армения» издательство, 1976, 392 стр.

2. Ераносян Г., Туризм для всех; Ереван, “Армения” издательство, 1972, 184 стр.
3. Школьный туризм-эффективный способ изучения детей: Министерство Армянской ССР, научно-исследовательский институт педагогических наук. 1968, 22 стр.
4. Абдуллаева Г.Д., Атажанов И.И. Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук.- 2016.-N3-3. – С.66-68.
5. Верба И. А., Голицын С. М., Куликов В.М., Рябов Е. Г. Туризм в школе, Москва 1983,- 160с
6. Гурьев А.И. Статус межпредметных связей в системе современного образования / А.И. Гурьев // Наука и школа. – 2002. – N2. – С. 41–45.
7. Максимова В.Н. - Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.:Просвещение, 1984. - 184 с.

## INTERSUBJECTIVE RELATIONS WITH SCHOOLS DURING TOURISM PREPARATION

**Eloyan Narek**

*Armenian State Institute of Physical Culture and Sports  
Yerevan, Republic of Armenia*

### Summary

In the current curricula of the secondary school and its standards, special attention is paid to the construction of the educational process, which ensures not only the acquisition of knowledge, but also the perception of the subjects, analysis, the formation of the generalization of the activities, phenomena among the schoolchildren, and most importantly, the application of that knowledge in practice. The whole educational process is built on interdisciplinary connections.

From this point of view, tourism training, being one of the means of physical education for schoolchildren, with its diverse content and uniqueness can be considered the only aspect that provides various interdisciplinary connections with all subjects taught in school.

The research aims to study the interdisciplinary connections between tourism training and general education subjects in the process of physical education.

Interdisciplinary connections during the touristic school preparation of schoolchildren are presented.

Further research will be directed to the development of the content and teaching methods of tourism preparation for 7th-9th grade students, as well as the introduction of a process of physical education.

**Keywords:** Tourism training, interdisciplinary connections, knowledge, ability, schoolchildren.

### References:

1. Yerasosyan H., Chatinyan A., Harutyunyan J. Tourism. Educational-methodical manual, Yerevan, “Armenia” Publishing House, 1976, 392 p.
2. Yerasosyan H.M.. Tourism for everyone; Yerevan, "Armenia" Publishing House, 1972, 184 p.
3. School tourism as an effective way to study children. Ministry of the Armenian SSR, Scientific-Research Institute of Pedagogical Sciences, Yerevan 1968, 22 p.
4. Abdullaeva G.D., Atajanov I.I. Interdisciplinary connections in the modern school // Current Problems of Humanities and Natural Sciences, 2016, N3-3, pp. 66-68.
5. Verba I. A., Golitsyn S. M., Kulikov V.M., Ryabov E. G., School Tourism, Moscow, 1983, 160 p.
6. Guryev A.I., The status of interdisciplinary connections in the system of modern education / A.I. Guryev // Science and school, 2002, N2, pp. 41-45.
7. Maksimova V.N., Interdisciplinary communication and improvement of the learning process. M.: Education, 1984, 184 p.

*Материал был представлен и отправлен на рецензию: 28.09.2021*

*Принято к публикации: 26.09.2021*

*Рецензент: канд. пед. наук, доцент Тухманук Мкртчян*

*The material was submitted and sent to review: 28.09.2021*

*Was accepted for publication: 26.09.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Tuxmanuk Mkrtchyan*

**ԱՏԱԿԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ՝  
ՈՐՊԵՏ ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ  
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՈՒՂԻ**

**Խաչատրյան Նարինե**

*Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոց, Հայաստան*

**Համառոտ ներածական:** Ածականի՝ որպես առարկայի հատկանիշ ցույց տվող բառի ուսուցումն սկսվում է դեռևս նախաալբերանական շրջանում գործնական վարժությունների միջոցով, որոնց շնորհիվ հարստանում է աշակերտի բառապաշարը հատկանիշ արտահայտող բառերով: Աշակերտների բառապաշարի մասին նախնական պատկերացում կազմելու համար առաջադրվում են *ինչպիսի՞* հարցին պատասխանող արտահայտություններ, որոնց արդյունքում աշակերտները համոզվում են, որ «միևնույն հատկանիշ ցույց տվող բառը կարող է գործածվել տարբեր առարկա ցույց տվող բառերի հետ» [2]:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Առարկայի հատկանիշ արտահայտող բառերի բազմազանությունն ունի աշակերտի խոսքի՝ բառապաշարի հարստացման ու զարգացման նպատակ, քանի որ այն խթանում է անհատի պատկերավոր մտածողությունը: Ժամանակակից մանկավարժները դրա համար կարևորում են ուսուցման ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակների համատեղումը: Վերջինս ձևավորվում է գոյական-ածական բառակապակցությունների միջոցով կապակցված խոսք կազմելու կարողություն, ունակություն ու հմտություն, ապահովում է անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն արտահայտելու կարողություն, հետևաբար նաև՝ միջանձնային հարաբերություններ ստեղծելու հնարավորություններ [3, էջ 17]:

Մասնագիտական գրականության մեջ հայ մանկավարժ-հեղինակները ածականի ուսուցման համար կարևորել են խոսքային կիրառությունը՝ այսպիսով «ածական» թեման զուգահեռելով որոշիչ թեմային. «...Ածական թեման ուսումնասիրելիս ուսուցիչը պիտի զուգահեռ անցկացնի այդ խոսքի մասի իմաստի և որոշիչ միջև» [5, էջ 103]: Վերջինիս ուսուցման կարևոր առանձնահատկությունն այս դեպքում համարվում է հարցադրումը, որի միջոցով առանձնացվում են խոսքում գործածված, հատկանիշ ցույց տվող բառերը, և դրանք կիրառվում են խոսքային այլ միջավայրերում:

Տարրական դասարաններում ածականի ուսուցման ամփոփման համար առաջադրվում է համագործակցային դաս կազմակերպել՝ «Բերքահավաք» վերնագրով: Աշակերտները բաժանվում են չորս խմբի՝ «գոյական», «ածական», «թվական», «բայ» անվանումներով, որի ավարտին կատարում են փոխակերպման վարժություն՝ գոյականները դարձնում են ածականներ, ածականները՝ բայեր և այսպես շարունակ՝ ըմբռնելով խոսքի մասերի միջև եղած տարբերություններն ու կիրառական կառուցվածքային տարբերությունները [4, էջ 306]:

Ածականի ուսուցման շրջանակներում մասնագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև հատկանիշ ցույց տվող բառերի համադրական ուսուցման եղանակ: Այս դեպքում համեմատության մեջ են դրվում ածականները և մակբայները՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով այն բառերի վրա, որոնք ունեն երկբնույթ կիրառու-

թյուն. մի դեպքում լրացնում են բայերին, մյուս դեպքում՝ գոյականներին: Նման բառերի ուսուցումը նպաստում է խոսքի զարգացմանը, և աշակերտները հասկանում են, որ նույն բառով կարելի է բնութագրել ոչ միայն տարբեր առարկաներ, այլ նաև տարբեր գործողություններ [1, էջ 238]: Այս դեպքում պետք է հատկապես ուշադրություն դարձնել ածականների կիրառական սահմանափակումներին, քանի որ տարբեր բառերին կապակցվելու հնարավորությամբ հանդերձ՝ ածականներն ունեն նաև կիրառական սահմանափակումներ, որոնց անտեղի կիրառությունը կարող է սխալ ու զավեշտալի լինել:

**Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Մեր ուսումնասիրության նպատակն է աշակերտի վերլուծական մտածողությունը զարգացնող իրողությունների բացահայտումը կատարել բառապաշարի հարստացման եղանակով: Այս նպատակին հասնելու համար կարևոր է ածական անվան կիրառական առանձնահատկությունների բացահայտումը, քանի որ այն ունի ուղղակի և փոխաբերական իմաստներով գործածության լայն հնարավորություններ:

**Հետազոտության նորույթը:** Հոդվածում նորովի է ներկայացվել և մեկնաբանվել ածականի կիրառական առանձնահատկությունների ուսուցման գործընթացը, որը նպաստում է ածականի պատկերավոր մտածողության զարգացմանը:

**Բանալի բառեր՝** առարկայի հատկանիշ, նախաայբբենական շրջան, բառապաշար, համեմատական ուսուցում, կապակցված խոսք:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ածականի՝ որպես առարկայի հատկանիշի ուսուցումն սկսվում է գունանուններից, որոնց ճանաչումով ուսուցման հենց առաջին աստիճանում հանձնարարվում է ներկել համապատասան նկարները, այսպես՝ «Բժիշկը հագել է կապույտ խալաթ»: «Զինվորականի համազգեստը կանաչ գույնի է»: «Ձմեռ պապի խալաթը կարմիր գույնի է»: «Կարմիր գույնի է նաև բժշկի գլխարկի խաչը»: «Պարուհու զգեստը սև գույնի է»: Այնուհետև համապատասխան գույներով են բնորոշվում *բանան, խաղող, խնձոր, ելակ, տանձ, լիոն* մրգանունները [7, էջ 4]: Պարզ գունանուններին փոխարինելու են գալիս կազմությամբ բարդ գունանունները, և *մոխրագույն, շագանակագույն, նարնջագույն* և այլ բառերով բնութագրվում են անտառի կենդանիները՝ *փիղը, գետածին, գայլը, աղվեսը, մուկն* ու *կատուն*: Այստեղ գունանուններին զուգահեռ ներկայացվում են *ընտանի* և *վայրի* հատկանիշները, որոնցով բնութագրվում են կենդանի գոյականները [7, էջ 5]:

Մանկավարժական գործունեության ընթացքում կիրառած արդիական մեթոդներով հատկանիշ արտահայտող բառերի ուսուցման ներկայացում: Նախաայբբենական շրջանում հականիշ գույգերով են ներկայացվում *կարճ* ու *երկար, հաստ* ու *բարակ* և այլ ածականներ, որոնցով բնութագրվում են մի դեպքում դպրոց տանող ճանապարհը, մյուս դեպքում՝ կարճ ճանապարհը խորհրդանշող գերանները [7, էջ 6]: *Կշեռք* հասկացության ուսուցման ժամանակ էլ սովորում են *ծանր* ու *թեթև* ածականների կիրառական առանձնահատկությունները [7, էջ 7]: *Հաստ* և *բարակ* հականիշների տարբերակումը ներկայացված է համապատասխան գրքերի նկարներով, որոնցից հաստ գիրքը արջի մոտ է, իսկ բարակը՝ աղվեսի: *Հաստ* ու *բարակ* հասկացությունների ուսուցումը առնչվում է նաև երկրաչափական մարմինների ուսուցմանը. այս հատկանիշներով են բնութագրվում քառակուսի և ուղղանկյուն պատկերները, ինչպես նաև սունկերը, որոնցից հաստերին բնորոշ է *ուտելի*, իսկ բարակներին՝ *թունավոր* հատկանիշը [7, էջ 8]:

Ածականների՝ հականիշներով համեմատական ուսուցումը շարունակվում է հետագա դասերի ընթացքում. ուսուցանվում են *աջ* և *ձախ* հատկանիշները՝ ըստ երթևե-

կույթան կանոնների, որոնց ընթացքում ուսուցանվում են նաև *արագ* և *դանդաղ* հատկանիշները, վերջիններս, ի տարբերություն վերևում ներկայացված բառերի, ավելի հաճախ են լրացնում գործողությունը ցույց տվող բառերին [7, էջ 10-11]: Հենց այստեղ պետք է աշակերտների ուշադրությունը դարձնել հատկանիշ ցույց տվող երկու կարգի բառերի կիրառական առանձնահատկություններին, ըստ որոնց՝ դրանց մի մասը ցույց է տալիս առարկայի, իսկ մյուս մասը՝ գործողության հատկանիշ:

Ուսուցման հաջորդ աստիճանում վերլուծական եղանակով ներկայացվում են նախադասության, բառի, վանկի և հնչյունի մասին գիտելիքներ, որոնք նկար-բառ դիդակտիկ ուսուցման եղանակով առաջին հերթին առնչվում են գոյականների՝ առարկա ցույց տվող բառերին, երկրորդաբար՝ հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերին:

Տառուսուցումն սկսվում է *ա* տառի ընթերցանությամբ ու գրությամբ: Տառերի տեսակները նույնպես տարբերակվում են հականիշ գույգերով՝ մեծատառ և փոքրատառ, տպագիր և ձեռագիր: Հնչյունները տարբերակվում են ձայնավոր և բաղաձայն հատկանիշներով: Այսպիսով՝ լեզվական իրողությունները նույնպես ուսուցանվում են հատկանիշ բառերի ներկայացմամբ, որոնց նշանակությունը իմանալը նպաստում է խոսքակազմության ճիշտ ուսուցմանը:

Այբբենարանում առարկա ցույց տվող բառերին գուգահեռ աշակերտները կարդում են նաև *անուշ* հատկանիշը՝ տառ + նկար ընթերցանության մեթոդով:

«Ածական+գոյական» կապակցություններով բառակապակցությունների ընթերցանությունը հնարավոր է դառնում՝ *ու* տառի ուսուցումից սկսած, որտեղ աշակերտները կարդում են *սուր, սիրուն* հատկանիշները, որոնցով բնութագրվում են *կարկին, մատիտ* առարկաներն ու *Արուսը* [7, էջ 62]:

*Պ* տառի ուսուցման ժամանակ կարդում են *սպիտակ* հատկանիշի անունը՝ բնութագրելով *ամպ, կարաս* առարկաները: *Ը* տառի ուսուցման ժամանակ կարդում են *ընտիր, ընտանի* հատկանիշները՝ բնութագրելով *սունկ* և *կատու* գոյականները [7, էջ 74]: Այսպիսով սկսում են կարդալ փոքրիկ բնագրեր, որոնցում, բացի առարկա և գործողություն նշանակող բառերից, ի հայտ են գալիս հատկանիշ ցույց տվող բառեր, որոնցով կազմվում են բազմակի բառակապակցություններ՝ *սպիտակ սունկ, կարմիր մատուր, ընտիր ընկույզ*: Ածականների գոյականական կիրառությամբ է գործածված *նման* ածականը: «*Նմանը նմանին կսիրի*» առածը աշակերտները կարդում ու մեկնաբանում են որպես «*մեկը մյուսին արժի*» նշանակող արտահայտություն:

Շարունակելով ածականների՝ հականիշներով ուսուցումը՝ աշակերտներին տեղեկություններ են հաղորդվում *լուսնի, լիալուսնի* և *կիսալուսնի* մասին, որտեղ *լի* և *կես* ածականները հանդես են գալիս որպես *լուսին* առարկայի տարբերակման հատկանիշներ: Հատկանիշ ցույց տվող բառի համանուն է նաև *Սպիտակ* քաղաքի անունը, որ աշակերտները կարդում են *յ* տառի ընթերցանության ժամանակ, ծանոթանում Հայաստանի մի շարք քաղաքների: Այստեղ աշակերտները կարդում են *կարմիր մայրամուտ, կապույտ սար, միայնակ ամպ* փոխաբերական իմաստով բառակապակցությունները, հասկանում բառի ուղիղ և փոխաբերական նշանակությունների կիրառական առանձնահատկությունները: Եթե ուղղակի իմաստով կիրառություններում բառերն ունեն կիրառական սահմանափակումներ, ապա փոխաբերական իմաստով կիրառություններում այս սահմանափակումները գրեթե վերանում են, և ցանկացած առարկա ցանկացած հատկանիշով կարող է բնութագրվել՝ նայած նրան, թե հեղինակը ինչ համեմատություն է կատարում և ինչ զգացողություն է ցանկանում հայտնել ընթերցողին:

Ածականի հականիշ գույգերով են կազմվում նաև առածներն ու ասացվածքները, որոնցից աշակերտները կարդում են «*Լավ է գիտունին գերի, քան անգետին՝ սիրելի*» ասացվածքը: Հականիշ գույգերը հիմնականում նույնարմատ են լինում և տարբերակվում են ածանցներով, որոնցից *վախկոտ* և *անվախ* գույգերը ներկայացված են **խ** տառի ուսուցման շրջանակում: Այսպես՝ աշակերտները **չ** տառի ընթերցանության ժամանակ կարդում են **կանաչ** բառը, **դ** տառի ժամանակ՝ **դեղին** բառը:

Այբբենարանի ուսուցման ժամանակ հաճախ ենք անդրադառնում նաև հայկական ժողովրդական հեքիաթներին, որոնց վերնագրերում գոյականներին զուգահեռ կիրառվում են նաև հատկանիշ արտահայտող բառեր, ինչպես՝ «*Քաջ Նազար*», «*Պռչատ աղվես*», «*Կարմիր գլխարկ*» և այլն:

Ուսումնասիրելով «Այբբենարանում» կիրառված ածականները՝ վիճակագրական հաշվումներով պարզեցինք, որ դրանք մոտավորապես 54-ն են, որոնցից հարաբերական են ընդամենը հինգը: Որակական ածականները հիմնականում հանդես են գալիս դրական աստիճանով, միայն վերջին՝ «Հրաժեշտ Այբբենարանին» բանաստեղծության մեջ գործածվել են երկու գերադրական աստիճանով արտահայտված ածականներ: Որակական ածականներին բնորոշ են ինչպես կազմությամբ պարզ, այնպես էլ ածանցավոր ու բարդ լինելը: Ընդ որում՝ կազմությամբ բարդ ածականներով հիմնականում կազմվել են կրկնավոր բառեր:

Ըստ ժամանակակից դպրոցի կրթական ծրագրի՝ «Այբբենարան» դասընթացից հետո սկսվում է հայոց լեզվի և գրականության տարրական ուսուցումը, որ կոչվում է «Մայրենի» [8]:

«Մայրենի» առաջին դասարանի դասագիրքն սկսվում է **բարի** ածականով՝ *բարի գալուստ* արտահայտությամբ, որի շնորհիվ գիրքը պատկերվում է իբրև ընտանիք, տուն, որն ամեն անգամ բացելիս սովորում ես ինչ-որ բան: Առաջին թեման վերնագրված է «Հայերենի կախարդական աշխարհը», որտեղ բառերը կիրառված են փոխաբերական նշանակությամբ, և ներածական խոսքում հանձնարարվում է «*Սովորես ճիշտ խոսել, դառնաս հնարագետ ու սրամիտ*» խոսքը, որից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր հնարագիտություն ու սրամտություն իր նյութական արտահայտությունն է գտնում ճիշտ խոսելու միջոցով [8, էջ 3]:

Վ. Գրիգորյանի «Իմ դասագիրքը» բանաստեղծությամբ է սկսվում գրականության ընթերցանությունը, որտեղ ուղղագրական և ուղղախոսական տարբերություն ունեցող բառերի շարքում ուսուցանվում է **սուրբ** ածականը [8, էջ 4], որից պարզ է դառնում, որ լեզվական իրողությունների ուսուցումը կապված է միմյանց հետ:

Ածականները պատասխանում են **ինչպիսի**<sup>2</sup> հարցին, որը խոսքում կապակցվում է առարկա ցույց տվող բառերին՝ ցույց տալով դրանց որպիսությունը, հատկանիշը: Հ. Թումանյանի «Դպրոցի ճամփան» [8, էջ 5] բանաստեղծության մեջ ներկայացվում են *դժվար, երկար, կարճ, դուրալի* ածականները, որոնք ունեն մեկ ընդհանուր առարկա՝ որոշյալ՝ *դպրոցի ճամփա*, որից պարզ է դառնում, որ մեկ առարկան կարող ենք բնութագրել տարբեր հատկանիշներով, որոնք իրար կա՛մ հոմանիշ, կա՛մ հականիշ են:

Ածականի ուսուցման գործընթացում պետք է կարևորել այն հանգամանքը, որ երեխայի մտապատկերում գոյականի և բայերի թիվն ավելի արագ է աճում, քան ածականներինը: Մա բացատրվում է այն հանգամանքով, որ ծնողները երեխայի հետ շփվելիս ավելի քիչ ուշադրություն են դարձնում առարկայի հատկանիշների և որակի վրա: Ուստի փորձառու մանկավարժները խորհուրդ են տալիս «սովորեցնել խոսքի մեջ

օգտագործել ածականներ, բայեր, որոշիչներ, երեխաների բառապաշարը լրացնել մարդկանց հուզական հաղորդակցմանը վերաբերող բառերով» [9, էջ 35]:

**Եզրակացություններ:** Տեսական գիտելիքները տարրական դասարաններում ուսուցանվում են գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցանությանը գուգահեռ: Այդ իսկ ձևաչափով հանձնարարվում է լեզվական նյութերը ուսուցանել լեզվատրամաբանական առաջադրանքներով, որոնք հիմնականում կատարվում են կրկնության եղանակով՝ առանց կիրառելու «հոլովում», «խոնարհում» եզրույթները. հարցադրման եղանակով ուսուցանվում են գոյականների, ածականների և բայերի ձևափոխական առանձնահատկությունները:

Աշակերտների խոսքի զարգացման տեսանկյունից կարևոր է ուշադրություն դարձնել նաև ածականների լրացումառության վրա: Հատկապես տարրական դասարաններում աշակերտները հաճախ են լսում «գոհ» և «դժգոհ» բառերի կիրառությունները, որոնք կապակցվում են բացառական հոլովի հետ: Այս դեպքում հանդես են գալիս ածականի ինդրառական առանձնահատկությունները, երբ ածականներն են լրացում պահանջում՝ արտահայտված այս կամ այն հոլովով, որոնց ճիշտ կիրառությունը խոսքային կիրառական նշանակություն ունի: Նման կարգի խոսքային կարողությունները զարգացնելու համար առաջադրվում է աշակերտներին ուղղել սխալները, որոնք կարող են ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքներով:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. **Ավետիսյան Գ.**, Մակբայական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկա, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Երևան, 2020:
2. **Գալստյան Հ.**, Մայրենի դաս. ածականի ուսուցումը տարրական դասարաններում: <https://multiurok.ru/files/mayreni-das-atsakani-owsowts-owme-tarrakan-dasaran.html>, հասանելի է 04.04.21:
3. **Խաչատրյան Ս.**, Ածականի բառաքերականական կարգերի ուսուցումը միջին դպրոցում, Սեղմագիր, Երևան, 2014:
4. **Խաչատրյան Ս.**, Լեզվական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ ծրագրային պահանջի, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Գիտական տեղեկագիր, Երևան, 2014:
5. **Մուրացան**, Անմեղ գրույցներ, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963:
6. **Մարգարյան Ա., Համբարձումյան Ս.**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012:
7. **Մարգարյան Վ.**, Այբբենարան, Երևան, 2020:
8. **Մարգարյան Վ.**, Մայրենի 1, Երևան, 2010:
9. **Սմբատյան Լ.**, Բառապաշարի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում// «Նախաշավիղ», 2017, 1, [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2017\(1\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2017(1).pdf), հասանելի է 18.04.21:

### **ИЗУЧЕНИЕ ПРИЛАГАТЕЛЬНОГО КАК СПОСОБ РАСКРЫТИЯ ЭСТЕТИЧЕСКОЙ ЦЕННОСТИ ХУДОЖЕСТВЕННОЙ КНИГИ В ПЕРВОМ КЛАССЕ**

**Хачатрян Нарине**

*Ванадзорская основная школа №6, учительница начальной школы*

#### **Аннотация**

Изучение прилагательного как признака предмета начинается с практических упражнений еще в доалфавитный период, обогащая словарный запас ученика атрибутивными словами, связанными с обучением синонимам и антонимам как концепции «друг» и «противник».



Сравнительное обучение прилагательных с помощью антонимов продолжается с применением особенностей двух категорий атрибутивных слов. Некоторые из них обозначают признак предмета, а другие – признак действия, отвечая на вопросы «какой?» и «как?» соответственно.

Особенно важно аналитическое изучение атрибутивных слов (предложение – словосочетание – слово).

Основная цель обучения прилагательным – раскрыть эстетическую ценность прочитанной художественной книги. В результате, учащиеся обогащают свой словарный запас и развивают речь, что стимулирует визуальное мышление человека. Современные учителя используют сочетание индуктивного и дедуктивного методов обучения. Последний развивает способность и умение формировать связную речь с помощью фраз, состоящих из существительного и прилагательного, и обеспечивает способность свободно общаться и выражать свои эмоции, и, как следствие, дает возможность строить межличностные отношения.

В начальной школе теоретические знания преподаются ученикам параллельно с чтением художественных произведений. Исходя из этого, учителя используют лингвистические и логические задания для преподавания лингвистических материалов, в основном, методом «спирального» повторения.

**Ключевые слова:** признак предмета, доалфавитный период, словарный запас, сравнительное обучение связную речь.

### Список использованной литературы

1. Аветисян Г., Методика изучения многозначных наречий, Ширакский государственный университет, Ученые записки, Ереван, 2020.
2. Галстян А., Урок родного языка: обучение прилагательным в начальной школе
3. Хачатрян С., Обучение лексико-грамматическим категориям прилагательного в средней школе.
4. Хачатрян С., Обучение языковых знаний в начальных классах согласно программе, Ширакский государственный университет, Ученые записки, Ереван, 2014.
5. Мурацян, Невинные разговоры, Сборник стихов, т. 6, Ереван, 1963.
6. Саргсян А., Амбарцумян С., Культура армянского языка и речи, учебное пособие, Ереван, 2012.
7. Саргсян В, Букварь, Ереван, 2020.
8. Саргсян В., Родной язык 1, Ереван, 2010.
9. Смбатян Л., Особенности развития словарного запаса в дошкольном возрасте, Нахашавиг, 1. 2017.

### STUDYING AN ADJECTIVE AS A WAY TO REVEAL THE AESTHETIC VALUE OF A FICTIONAL BOOK IN THE FIRST GRADE

**Khachatryan Narine**

*Vanadzor No. 6 Basic School, Elementary School Teacher*

#### Summary

Starting from the pre-alphabetic period in school, students start studying adjectives as words modifying nouns through practical exercises, which enriches students' vocabulary with attributive words that are used in the form of in form of synonyms and antonyms as “friendly” and “opponent” concepts.

The comparative teaching of adjectives with the help of antonyms is further uses the peculiarities of two categories of modifying words. A group of words modify an object, while another group modifies an action, answering the questions “What kind of?” and “How” respectively.

Analytical learning of attributive words (sentence-word combination-word) is especially important.

The main purpose of teaching adjectives is to reveal the aesthetic value of a fictional book read. As a result, students enrich their vocabulary and develop their speech, which stimulates an individual's visual thinking. Modern teachers use a combination of inductive and deductive teaching methods. The latter develops the ability and skill to form coherent speech through phrases made of a noun and an adjective, and ensure the ability to freely communicate and express one's emotions, and, as a result, gives an opportunity to build interpersonal relationships.

In elementary school, theoretical knowledge is taught to students in parallel with reading works of fiction. Based on this, teachers use linguistic-logical tasks to teach linguistic materials mainly by the method of ‘spiral’ repetition.

**Keywords:** words modifying nouns, pre-alphabetic period, attributive words, comparative teaching, coherent speech.

## References:

1. **Avetisyan G.**, Adverbial polysemantic words and their teaching, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2020.
2. **Galstyan H.**, Native Language Class. Teaching Adjectives in Elementary School.
3. **Khachatryan S.**, Teaching lexical and semantic categories of the adjective in the secondary school
4. **Khachatryan S.**, The Teaching of Language Knowledge in Elementary Classes Based on the Program Requirement, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2014.
5. **Muratsan**, Innocent Conversations, Collection of Poems, Vol. 6, Yerevan, 1963.
6. **Sargsyan A.**, Hambardzumyan S., Culture of the Armenian Language and Speech, Educational Manual, Yerevan, 2012.
7. **Sargsyan V.**, Primer, Yerevan, 2020.
8. **Sargsyan V.**, Native Language 1, 2020.
9. **Smbatyan L.**, Peculiarities of Vocabulary Enrichment in Preschool Age, Nakhshavigh, 1. 2017.

*Материал был представлен и отправлен на рецензию: 08.10.2021*

*Принято к публикации: 27.10.2021*

*Рецензент: канд. биол. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 08.10.2021*

*Was accepted for publication: 27.10.2021*

*Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyan*

**378.147:811.19**

## ՊՐՈՒԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

**Հովհաննիսյան Մերի**

*Երևանի պետական համալսարան,*

*Հայաստան*

**Համառոտ ներածական:** Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է ուսանողների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար: Բուհական դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, ուսանողների թիվը հնարավորություն չեն տալիս դասախոսին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված ուսանողը իրականում ամրապնդել է թեման, թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը: Բացի դրանից՝ լսարանային պայմաններում նույն թեման միևնույն ժա-

մանակահատվածում և միևնույն մեթոդներով, ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր ուսանողներ ունեն տարբեր ընդունակություններ: Ուստի դասախոսները հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուին: «Ինչպե՞ս ենք մենք մտածում» աշխատության մեջ (1909) ամերիկացի փիլիսոփա, հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը: «Մտածմունքն սկսվում է այնտեղ, որտեղ առկա է խնդրահարույց իրավիճակ, և դա խնդիրների լուծումն է»,– ասում է Դյուին: Նրա այս բանաձևը XX դարում ձևավորեց պրոբլեմային ուսուցման հիմքը [6, էջ 68]:

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ. Բրուների հայեցակարգը, որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա: Ճանաչելով տրամաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ՝ Ջ. Դյուին, Ջ. Բրուները, Վ. Բարթոնը նշում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը [7, էջ 35, 9, էջ 16-18]:

Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները, պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ:

**Բանալի բառեր:** Ուսուցման տեխնոլոգիա, ուսուցման մեթոդ, պրոբլեմային ուսուցում, պրոբլեմային հարց, ուսուցման ժամանակակից մեթոդներ, փոխգործուն մեթոդներ, հայոց լեզվի բուհական դասընթաց, քերականության ուսուցում:

**Հիմնախնդիրը:** Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում հայոց լեզվի ուսուցման գործընթացում: Մի կողմից ուսուցման գործընթացում հաշվի են առնվում տեսական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու, համապարփակ ուսուցանելու, համապատասխան մեթոդ ընտրելու, մյուս կողմից սովորողների՝ բառաձևերը ճշգրտորեն կազմելու, սխալ բառաձևեր չկիրառելու, բառագործածության սխալներից զերծ մնալու գործոնները: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լոկ ղեկավարի այդ գործընթացը վերահսկմամբ [8, էջ 54]: Ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը նյութի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Ուսանողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների: Հայերենի քերականության առանձնահատկությունների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաներով ու մեթոդներով կարող է ուղենշային լինել սովորողների՝ հայերենի քերականական համակարգի յուրահատկությունների ընկալման առումով:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Գ. Կ. Մելնկոն իր «Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան» աշխատության մեջ անդրադարձել է պրոբլեմային ուսուցման առանձնահատկություններին՝ այն դիտարկելով որպես ուսուցման ակտիվ տեխնոլոգիա [10, էջ 195]: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է տարբեր մանկավարժների տեսակետները պրոբլեմային ուսուցման վերաբերյալ: Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատյոշկինը, Ա. Վ. Բրուշինսկին, Տ. Վ. Կուրյավցևը, Ի. Յա. Լերները, Ի. Ա. Իլնիցկայան, Ս. Ա. Ռուբինշտեյնը, Լ. Ս. Վիգորսկին, Ա. Ն. Լեոնտևը: «Պրոբլեմային ուսուցում. անցյալը, ներկան, ապագան» կոլեկտիվ մենագրությունում մանրամասնորեն ներկայացվում է ուսուցման նշված տեխնոլոգիայի զարգացման ողջ ընթացքը [9]:

Է. Զավարյանն ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չափանիշների կարևորությունը [3, էջ 44-45]:

Մ. Դավթյանի և այլ հեղինակների «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» աշխատությունում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան դիտարկվում է որպես ուսուցման արդիական մոտեցում: Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում [2, էջ 7]:

**Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

**Հետազոտության նորույթը:** Մանրամասնորեն ներկայացնելով պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները՝ առաջին անգամ վեր են հանվել պրոբլեմային տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, պրոբլեմային իրավիճակների

ստեղծման տարբեր եղանակները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջարկվում են պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ:

1. **Անալոգիայի եղանակ:** Այս դեպքում ուսուցանողը հենվում է սովորողների փորձի վրա կամ արդիականացնում է նրանց նախկինում ստացած գիտելիքները նոր խնդիրների լուծման համար: Օրինակ՝ դերանունների տեսակների ուսուցման ժամանակ դասախոսը, հիմնվելով սովորողների՝ խոսքի մասերի մասին ունեցած գիտելիքների վրա, հակադրության և համեմատության մեթոդներով կարող է ընկալելի դարձնել դերանունների արտահայտած տարբեր իմաստները և համապատասխան խոսքի մասերից ունեցած տարբերությունները: Կարող է կիրառել T-աձև աղյուսակի մեթոդը.

ԴԵՐԱՆՈՒՆ	ԱՇՄԿԱՆ
ԱՅՍՊԻՍԻ ԳԻՐՔ	հետաքրքիր գիրք
ԱՅԴՊԻՍԻ ՄԱՐԴ	լավ մարդ
ԱՅՆՊԻՍԻ ԲԱՆ	գարմանալի բան

Այսպես սովորողների համար ակնհայտ է դառնում՝ դերանվան հատկանշային իմաստը դրսևորվում է ընդհանրական ձևով, առանց կոնկրետացման, իսկ ածականի դեպքում առկա է հատկանշային հստակ իմաստ:

2. **Մակաձական - վերլուծական - համադրական եղանակ:** Սովորողներն ինքնուրույն ուսումնասիրում են երևույթն ու փաստերը և անհրաժեշտ եզրակացություններ կատարում: Օրինակ՝ ուսանողներին հանձնարարվում է տարբեր տեքստերից դուրս բերել հոգնակի թվով կիրառված գոյականներ: Ձևակերպվում է պրոբլեմային խնդիր՝ ըստ օրինակների՝ սահմանել գոյականի թվի քերականական կարգին առնչվող կանոնները: Այնուհետև առաջադրվում է հարց՝ ի՞նչ հոգնակերտ մասնիկ կստանան *մեծատուն, թոնրատուն, դեղատուն, ստորակետ, վերջակետ, ժամկետ, տեսակետ, ատամնաշար, ֆիլմաշար, գրաշար, պատշար, նստացույց, գորացույց, կողմնացույց, ժամացույց, սեպագիր, անձնագիր, պատմագիր, գյուղագիր, նոնահատ, գարեհատ, փայտահատ, դրամահատ, մատնաչափ, հարթաչափ, հանքահոր, հանքափոր* բառերը: Ուսանողները Վենի գծապատկերում գրում են նշված բառերը՝ առանձնացնելով հոգնակիակազմության երկու կանոն.

✓ մեջբերված օրինակները բարդ գոյականներ են, որոնք ունեն միավանկ գոյական վերջնաբաղադրիչ,

✓ առաջին շարքի գոյականները *-եր* հոգնակերտ են ստանում, քանի որ վերջնաբաղադրիչ գոյականը պահպանում է իր իմաստը, իսկ երկրորդ շարքի գոյականների վերջնաբաղադրիչը չի պահպանում իր իմաստը, հետևաբար նշված բառերը *-ներ* հոգնակերտ մասնիկ են ստանում:

3. **Ուսումնասիրվող այս կամ այն երևույթի պատճառների որոնում:** Պրոբլեմային ուսուցման այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ խնդրի լուծման կամ նոր գիտելիքների ձեռքբերման համար պահանջվում է գործածել ավելի վաղ ուսումնասիրված

սկզբունք կամ օրինաչափություն: Օրինակ՝ *ինչո՞ւ ժանգոտել, մրոտել, կեղտոտել, ցեխոտել* և նմանօրինակ բայեր բազմապատկական չեն: Եթե սովորողը ի մի բերի ածականի կազմության մասին ունեցած գիտելիքները, կկարողանա նշված պրոբլեմային հարցի պատասխանը հիմնավորել: Նշված բայերը կազմված են *-ոտ* ածանց ունեցող ածականներից և չունեն իրենց սկզբնաձև անորոշ դերբայը, որին բազմապատկական *-ոտ-* ածանցը ավելացնելով՝ կարող էին կազմել բազմապատկական բայաձևեր, բացի դրանից՝ նշված բառերը չեն արտահայտում նաև այդ բայերին բնորոշ իմաստ:

**4. Հակասական փաստի հաղորդում:** Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նաև սովորողներին հակասական լեզվական իրողությունների, փաստերի հաղորդում: Վերջիններս հստակ օրինակներով պետք է կարողանան հիմնավորել ներկայացվող լեզվական փաստերի հակասականությունը: Դիտարկենք օրինակ: Դասախոսը պնդում է, որ *կառչել, երկնչել, մարտնչել, զբոսնել, խթանել* բայերը սուկաձանցավոր են, քանի որ ունեն *-չ-*, *-ն-*, *-ան-* սուկաձանցներ: Ուսանողները բայի կազմության թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքների հիման վրա կարող են բացատրել, որ նշված բայերը ածանցավոր չեն.

- *-Ն-*, *-չ-* ածանց ունեցող բայերի դեպքում ածանցն ընկնում է հարակատար, վաղակատար, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար, անցյալ կատարյալ, հրամայական ապառնիի ձևերում: Եթե կազմենք համապատասխան բայաձևերը, ակնհայտ կդառնա, որ բերված օրինակներում *-ն-* և *-չ-* ածանց չեն:

- *-Ան-* ածանց ունեցող բայերի անցյալի հիմքը ցոյական է՝ *-աց-* բաղադրիչով, ինչպես՝ *մեծանալ-մեծացա, իմանալ-իմացա*, իսկ *խթանել* բայի դեպքում նման փոփոխություն չկա՝ *խթանեցի, խթանի՛ր* և այլն:

**5. Լեզվաբան(ներ)ի կարծիքի հիման վրա պրոբլեմային իրավիճակների ստեղծում:** Ուսանողներին առաջադրվում է հարց: Նախկինում գրական հայերենում պայմանական եղանակի ժխտական խոնարհման կանոնավոր ձևեր են համարվել *չեմ կարդալ, չեի կարդալ, չեմ գրի, չեի գրիլ* բայաձևերը, իսկ ժողովրդախոսակցական լեզվում գործածվող *չեմ կարդա, չեի կարդա, չեմ գրի, չեի գրի* ձևերը դիտարկվել են ոչ կանոնավոր [1, էջ 81]: Լեզվի հետագա զարգացման ընթացքում հաղթանակեց ժողովրդական ձևը, որը Ա. Ղարիբյանն անվանեց ըղձական [4, էջ 262], հետագայում Գ. Սևակը նշված դերբային տվեց ժխտական անվանումը [5, էջ 187]: Ինչո՞վ էին պայմանավորված նշված դերբային տրված *ըղձական* և *ժխտական* անվանումները: Ակնկալվող պատասխաններն են.

- ըղձական անվանումը պայմանավորվել է նրանով, որ այս դերբայը ձևով նման է ըղձական եղանակի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքին, օրինակներ՝ *գրի, խոսի, խաղա, իմանա* և այլն,

- ժխտական անվանումը պայմանավորված է նրանով, որ այս ձևաբայը կիրառվում է միայն ենթադրական կամ պայմանական եղանակի ժխտական ձևերի կազմության ժամանակ, օրինակներ՝ *կգրի – չի գրի, կխոսի – չի խոսի, կխաղա – չի խաղա, կիմանա – չի իմանա* և այլն:

**Եզրակացություն:** Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը: Հայոց լեզվի բուհական դասընթացում, հատկապես քերականության ուսուցման ժամանակ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամ-

րապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: «Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Աբեղյան Մ., Տարրական քերականություն, Թիֆլիս, 1910:
2. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
3. Զավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4:
4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937:
5. Սևակ Գ., Հայոց լեզվի տեսություն, հ. Ա, Երևան, 1939:
6. Дьюи Дж., Психология и педагогика мышления / Пер. с англ. Н. М. Никольской; Под ред. (и с предисл.) Н. Д. Виноградова, Москва: «Мир», 1915.
7. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
8. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998.
9. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманитар. ун-та, 2010.
10. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005.

## **ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ТЕХНОЛОГИИ ПРОБЛЕМНОГО ОБУЧЕНИЯ В ВУЗОВСКОМ КУРСЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

**Оганнисян Мери**  
*ЕГУ, Армения*

### **Аннотация**

Проблемное обучение является технологией развития учащихся, формирования их убеждений, применения изученного на практике. Она используется при возникающих в процессе обучения проблемных ситуациях и выдвигает проблемные вопросы. Эта технология обучения, отвечая на выдвинутые проблемные вопросы, активизирует познавательную деятельность учащихся, развивает мышление, позволяет пополнить багаж знаний учащегося.

Применение технологии проблемного обучения в вузовском курсе предполагает подготовительную работу. Во-первых, необходимо в отдельности изучить учебный материал всей темы и каждого урока, выделить основные идеи и сформулировать для учащихся цель обучения, чтобы показать, что в конце урока студент должен уметь, знать, уметь понимать, определять, какие другие навыки должен приобрести. Во-вторых, нужно выбрать для студентов дополнительные материалы (например, книги, различные интернет-ресурсы), а также дать им разные задания, тесты. В зависимости от объема учебного материала работа, организованная в соответствии с технологией проблемного обучения, может включать в себя весь урок или его часть.

Технология проблемного обучения обеспечивает индивидуализацию с точки зрения обучения, скорости усвоения, уровня независимости, методов обучения, способов контроля и самоконтроля. Она предусматривает создание положительных мотиваций обучения за счет новизны содержания, появления эмоционального содержания, организации учебных исследований и преодоления познавательных трудностей. В вузовском курсе армянского языка использование технологии проблемного обучения эффективно, в особенности, при обучении грамматике, в частности, при изучении семантических, прикладных особенностей частей речи, грамматических категорий,

глагольных аффиксов, видо-временных форм глагола, посредством сочетания приемов проблемного обучения с интерактивными методами.

**Ключевые слова:** технология обучения, метод обучения, проблемное обучение, проблемный вопрос, современные методы обучения, интерактивные методы, вузовский курс армянского языка, обучение грамматике.

#### **Список использованной литературы**

1. Абемян М., Элементарная грамматика, Тбилиси, 1910.
2. Гарибян А., Введение в изучение истории армянского языка, Ереван, 1937.
3. Давтян М. и др., Подходы к разработке и интеграции учебных программ, Ереван, 2004.
4. Дьюи Дж., Психология и педагогика мышления / Пер. с англ. Н. М. Никольской; Под ред. (и с предисл.) Н. Д. Виноградова, Москва: «Мир», 1915.
5. Заварян Э., Примеры применения проблемного обучения в школьной биологии, Научно-методический аналитический журнал «Педагогика», Ереван, 2008, № 3/4.
6. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
7. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998.
8. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманит. ун-та, 2010.
9. Севак Г., Теория армянского языка, Ереван, 1939.
10. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005.

### **PECULIARITIES OF APPLICATION OF PROBLEM-BASED LEARNING TECHNOLOGY IN THE UNIVERSITY COURSE OF THE ARMENIAN LANGUAGE**

*Hovhannisyan Mary  
YSU, Armenia*

#### **Summary**

Problem-Based Learning is a technology for the development of students, the formation of their beliefs, the application of what has been learned in practice, which is used when problematic situations arise in the teaching process and raises problematic questions. This teaching technology, answering the raised problematic questions, activates the cognitive activity of students, develops thinking and allows replenishing the luggage of the student's knowledge.

The application of the Problem-Based Learning technology in the university course supposes the preparatory work. First of all, it is necessary to study the teaching material of the entire topic and each lesson separately, highlight the main ideas and formulate the learning goal for students in order to show that at the end of the lesson the student should learn, know, be able to understand and determine what other skills should be acquired. Secondly, it is necessary to choose additional materials for students (for example, books, various Internet resources), as well as to give them different assignments and test-works. Depending on the volume of the educational material, the work organized in accordance with the technology of Problem-Based Learning may include the whole lesson or a part of it.

The Problem-Based Learning technology provides individualization in terms of learning, speed of apprehension, the level of independence, teaching methods, the methods of control and self-control. It foresees the creation of positive motivations of teaching due to the novelty of the content, the appearance of emotional content, the organization of educational researches and overcoming of cognitive difficulties. In the university course of the Armenian language, the application of the Problem-Based Learning technology is effective, especially when teaching grammar, in particular, when studying the semantic and applied features of parts of speech, grammatical categories, verb affixes, aspect and tense forms of the verb, through the combination of problematic teaching techniques with interactive methods.

**Keywords:** teaching technology, teaching method, problem-based learning, problematic issue, modern teaching methods, interactive methods, the university course of the Armenian language, teaching grammar.



## References:

1. Abegyan M., Elementary grammar, Tbilisi, 1910.
2. Davtyan M. et al., Approaches to the development and integration of curricula, Yerevan, 2004.
3. Dewey J., Psychology and Pedagogy of Thinking / Per. from English N. M. Nikolskaya; Ed. (and with a foreword) ND Vinogradov, Moscow: "Mir", 1915.
4. Garibyan A., Introduction to the study of the history of the Armenian language, Yerevan, 1937.
5. Matyushkin A. M., Problematic situations in thinking and learning, Moscow: "Pedagogy", 1972.
6. Osmolovskaya I. M., Organization of differentiated education in a modern secondary school, M., Voronezh, 1998.
7. Problematic learning: past, present, future: Collective monograph: in 3 vols, Vol. 1, Ed. E. V. Kovalevskaya, Nizhnevartovsk: Nizhnevartovsk publishing house. humanizes. University, 2010.
8. Selevko G. K., Encyclopedia of educational technologies. In 2 volumes, Vol. 1, Moscow: "Public education", 2005.
9. Sevak G., Theory of the Armenian language, Yerevan, 1939.
10. Zavaryan E., Examples of application of problem-based teaching in school biology, Scientific-methodical analytical journal "Pedagogy", Yerevan, 2008, № 3/4.

*Материал был представлен и отправлен на рецензию: 26.09.2021*

*Принято к публикации: 30.10.2021*

*Рецензент: канд. фил. наук, доцент Арменуи Арзуманян*

*The material was submitted and sent to review: 26.09.2021*

*Was accepted for publication: 30.10.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Armenuhi Arzumanyan*

**378.17**

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Պապիկյան Արսեն**

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,  
Հայաստան*

**Համառոտ ներածական:** Արդի ժամանակաշրջանում կարևորվում է ֆիզիկական դաստիարակության ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջը, որոնք պետք է ունենան ոչ միայն գիտելիքների բարձր մակարդակ, այլև տիրապետեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Միանգամայն հասկանալի է, որ ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողները պետք է ժամանակակից այս պահանջները կարողանան արդյունավետորեն իրականացնել մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագետների պրոֆեսիոնալ մանկավարժական պատրաստության հիմնախնդիրները տարբեր տարիների ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ հեղինակների կողմից [13, էջ 24]:

**Հիմնախնդիրը:** Մանկավարժական պրակտիկան ֆիզիկական դաստիարակության մասնագետի պատրաստման ողջ համակարգի անբաժանելի մասն է, որի միջոցով ամրապնդվում և կատարելագործվում են ինստիտուտում տեսական ու գործնական պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացվում, միաձույլ դրսևորվում և գնահատվում են ուսանողների պրոֆեսիոնալ-մանկավարժական պատրաստության բոլոր կողմերը՝ տեսական, գործնական, բարոյահոգեբանական, դաստիարակչական և այլն:

Ըստ Ն. Ն. Միվցևի (Н. Н. Сивцев, 2011)՝ մանկավարժական պրակտիկան ապագա մասնագետների համար մանկավարժական տեսական և անմիջական գործունեությունը կապող օղակ է: Պրակտիկայի ընթացքում նրանց մոտ ձևավորվում են մանկավարժական կարողությունների տարբեր բաղադրիչներ՝ ճանաչողական, կառուցողական, կազմակերպչական, հաղորդակցական և արտահայտչական, բացի այդ՝ իրականացվում են նաև հարմարողական, ուսուցողական, դաստիարակչական, զարգացնող գործառույթները:

**Բանալի բառեր:** Մանկավարժական պրակտիկա, ուսանողներ, պատրաստվածություն, կարողություններ և հմտություններ, բարձրագույն ֆիզկուլտուրային կրթություն:

**Հետազոտության նպատակը ու խնդիրները:** Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի դերը բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում: Նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի դերը բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում,
2. փաստաթղթերի, գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում:

**Հետազոտության գիտական նորույթը:** Բացահայտվել են մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում, ինչպես նաև երևան են հանվել նրա կազմակերպման ու անցկացման արդյունավետությունը բարձրացնելու ուղիները:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ներկայումս մասնագետների գործնական պատրաստվածությունը ֆիզկուլտուրային կրթության մասնագետների թույլ օղակներից մեկն է: Վ. Մ. Կորեցկին (В. М. Корецкий, 1998), Վ. Տ. Չիչիկինը (В. Т. Чичикин, 1995) նշում են, որ պրակտիկայի ընթացքում կատարվող աշխատանքներում ուսանողները գործնականում դժվարանում են կիրառել տեսական գիտելիքներ, դրսևորել մասնագիտական կարողություններ, ինչը դժվարացնում է մանկավարժական խնդիրները լուծելու և հետագայում մանկավարժական գործունեությանը հարմարվելու գործընթացները:

Տարբեր հեղինակներ՝ Տ. Վ. Բոնդարչուկը, Ե. Վ. Միրոգորոդսկայան և Օ. Վ. Վիրկը (Т. В. Бондарчук, Е. В. Миргородская, О. В. Вирк, 2011), մանկավարժական գործունեության պատրաստվածությունը դիտարկում են որպես անձի արժեքավոր մասնագիտական նշանակություն ունեցող կարողություն, որը բաղադրված է միմյանց փոխկապակցված կառուցվածքային տարրերից՝ դրդապատճառներ, հետաքրքրություններ, մասնագիտական գիտելիքներ և կարողություններ:

Արդյունավետության հիմնական պայմանն է բովանդակությունում ներառել այնպիսի առաջադրանքներ և աշխատանքներ, որոնք արտացոլում են ապագա մասնագիտական գործունեությունը, նպաստում են կարևոր կարողությունների և հմտությունների ձևավորմանը [5, էջ 192]: Հեղինակը նշում է, որ ֆիզկուլտուրային կրթության բակավորիատի համակարգում ուսումնառության ողջ տարիների ընթացքում նախատեսվում են ուսումնական, ճանաչողական, մանկավարժական և մասնագիտական


պրակտիկաներ, որոնց միջոցով ապահովվում է մասնագիտական կարողությունների ձևավորումը:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը հստակորեն ցույց է տալիս, որ միջոց էլ ուսանողների պատրաստությունը պրակտիկաներին (մանկավարժական, մասնագիտական) լիարժեք չի կատարվել [7, էջ 8-11, 6, էջ 26]:

Գրական աղբյուրներին անդրադարձը [3, էջ 172-177, 12, էջ 130-135] ցույց է տալիս, որ ուսանողները մանկավարժական պրակտիկայի ընթացքում և արտադասարանական աշխատանքների իրականացման ժամանակ դժվարանում են իրականացնել դաստիարակչական, ֆիզկուլտուրային-առողջարարական, աշակերտների առաջադիմության, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի գնահատման, վարժությունների կատարման ժամանակ սխալների բացահայտման և ուղղման, մանկավարժական վերլուծության խնդիրները:

Ներկայումս Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողների պատրաստվածությունը պետք է ունենա հետևյալ բնութագիրը՝ կենտրոնացված պետական կառավարում, մասնագետների պատրաստման միասնական մոդել, ապագայում գործնական աշխատանքներում որոշվող խնդիրներ:

Ներկայումս Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում պրակտիկայի կազմակերպման համակարգն ունի հետևյալ կառուցվածքը (գծապատկեր 1).



Գծապատկեր 1. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրակտիկայի կառուցվածքը

Ե. Վ. Կրյակինան (E. B. Крякина, 2006) մասնագետների պատրաստության համակարգում առանձնացնում է հետևյալ փուլերը: Նրա կարծիքով **նախնական փուլը** ներառում է մեթոդական բնույթի ուսումնագործնական պարապմունքներ բազային մարզաձևերով: Այստեղ ստացած գիտելիքները և կարողությունները լրացվում են ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի դասընթացի նյութերով: Ուսումնական պրակտիկայի գործընթացում ուսանողների մոտ ձևավորվում են այնպիսի կարողու-

թյուններ և հմտություններ, որոնք թույլ են տալիս ինքնուրույն իրագործել ուսուցչի և մարզիչ-մանկավարժի գործառնությունները, այնուհետև դրանք տարբեր տեսակի ուսումնական հաստատություններում մանկավարժական պրակտիկայի գործընթացում կատարելագործվում են:

Պրակտիկայի **առաջին փուլում** ուսանողի աշխատանքները պայմանավորված են նախադպրոցական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության կազմակերպչական ձևերի տարբեր մեթոդիկաների տիրապետմամբ:

**Երկրորդ փուլում** ուսանողները սովորում են հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի բազային աշխատանքային համակարգը, ուսումնասիրում են պլանավորման հիմնական փաստաթղթերը և տարբեր տեսակի աշխատանքների հաշվառումը, ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման առանձնահատկությունները և դասղեկի աշխատանքները: Ուսանողներին մանկավարժական պրակտիկային պատրաստելիս հատուկ ուշադրություն է դարձվում ուսումնադաստիարակչական գործընթացի հետևյալ կողմերին.

- կարողանալ ձևակերպել սեփական գործունեությունը մեկ տարվա, կիսամյակի՝ տրված կոնկրետ թեմայի ուսուցման, առանձին դասերի համար,
- ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներն անցկացնել դպրոցական ծրագրով, ինչպես նաև վերլուծել և գնահատել իր և գործընկերների գործունեությունը:

Նշված աշխատանքները պրակտիկայի արդյունավետ անցկացման կարևոր պայմաններ են:

Մանկավարժական բուհի ուսանողների մասնագիտական պատրաստվածության գործընթացում մեծ տեղ է զբաղեցնում ուսումնական պրակտիկան [1, էջ 110-114, 7, էջ 7-10]: Մենք ուզում ենք անդրադարձ կատարել ուսումնական պրակտիկային, քանի որ այն կազմակերպվում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի բոլոր կուրսերում և տարբեր ժամաքանակով ընդգրկված է գործնական ամբիոնների գործող ծրագրերում: Հետևաբար ուսումնական պրակտիկան ուսանողների՝ մանկավարժական պրակտիկային նախապատրաստվելու կարևորագույն գործընթաց է: Տարբեր ամբիոնների ուսումնական պրակտիկայի ծրագրերը վերլուծելով և համեմատելով մանկավարժական պրակտիկայի ծրագրերի հետ՝ բացահայտվեց, որ մանկավարժական պրակտիկայի պահանջներն ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման տեսանկյունից անհրաժեշտորեն արտացոլված չեն, ուստի ուսումնական պրակտիկայի բովանդակությունը պետք է համաձայնեցնել մանկավարժական պրակտիկայի ծրագրին:

Բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում մանկավարժական պրակտիկան ուսումնադաստիարակչական գործընթացի օրգանական մասն է, որն ապահովում է ապագա ուսուցիչների տեսական պատրաստության համադրումը գործնական աշխատանքի հետ և անցկացվում է ուսումնադաստիարակչական հաստատություններում: Մանկավարժական պրակտիկայի ծրագրերի վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել հետևյալ բաժինները՝ կազմակերպչական, ճանաչողական, ուսումնական, մեթոդական, դաստիարակչական, արտադասարանական, ֆիզկուլտուրային, զանգվածային և գիտահետազոտական [2, էջ 3-8]:

Վերը նշված ծրագրի բաժիններն ուղղված են ապահովելու ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելու մանկավարժական կարողություններ, որոնք նպաստում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի բազմաբնույթ գործունեության արդյունավետ իրականացմանը:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցիչների, մարզիչների, մեթոդիստների, ֆիթնես հրահանգիչների ու ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետների պատրաստման գործում առանցքային տեղ է զբաղում մանկավարժական պրակտիկան: Նրա բովանդակությունից և անցկացման մակարդակից են կախված ուսանողների մանկավարժական-մասնագիտական հետագա հաջողությունները:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Գրիգորյան Յու. Գ., Պապիկյան Ա. Ռ., Ֆիզկուլտուրայի մասնագետների ուսումնական պրակտիկայի արդյունավետության բարձրացման ուղիները, Միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 110-114:
2. Պապիկյան Ա. Ռ., Ծրագիր բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման, Երևան, 2010, էջ 3-8:
3. Балановская Л. Г., Процесс формирования педагогической толерантности студентов физкультурного вуза // Научные труды: ежегодник, Омск: СибГУФК, 2011, с. 172-177.
4. Бондарчук Т. В., Миргородская Е. В., Вирк О. В., Структурно-функциональная модель готовности педагога по физической культуре к оздоровительной деятельности в процессе профессиональной подготовки студентов // Теория и практика физической культуры, 2011, № 4, с. 54-57.
5. Беспалько В. П., Слагаемые педагогической технологии / В. П. Беспалько, М.: «Педагогика», 1989, 192 с.
6. Володина В. С., Формирование профессиональной готовности будущих учителей физической культуры посредством активных методов обучения: Автореф. дис... канд. пед. наук, Красноярск, 2007, 26 с.
7. Ивановский Ю. В., Амирова Л. А., Педагогические условия профессиональной социализации будущих преподавателей физической культуры на этапе вузовского обучения. // Теория и практика физической культуры. 2009, № 4, с. 8-11.
8. Копаев В. П., Интегративный потенциал планирования урока физической культуры и проблемы его реализации в условиях учебной практики // Физическая культура: воспитание, образование, тренировка, 2014, № 5, с. 7-10.
9. Корекцкий В. М., Профессионально-педагогическая подготовка студентов физкультурных вузов в системе дисциплин. «Специализации». Автореф. дис... док. пед. наук, М., 1998, 45 с.
10. Крякина Е. В., Педагогическая практика в структуре профессиональной подготовки студентов факультета физической культуры // Теория и практика физической культуры, 2006, № 4, с. 20-21.
11. Сивцев Н. Н., Формирование профессиональной компетентности будущих специалистов в сфере физической культуры и спорта в условиях непрерывной педагогической практики. Научно-практическая конференция "Совершенствование подготовки кадров в области физической культуры и спорта в условиях модернизации профессионального образования в России", 31 марта-2 апр. 2011 г.: материалы / М-во спорта, туризма и молодеж. политики РФ, М., 2011, с. 83-87.
12. Смирнова Е. И., Особенности развития общекультурных компетенций студентов педагогического вуза в физкультурной деятельности // «Педагогическая наука: прошлое, настоящее, будущее»: материалы международной заочной научно-практической конференции. Часть II. (30 марта 2011г.), Новосибирск: Изд-во «ЭНСКЕ», 2011, с. 130-135.
13. Фомичев А. В., Готовность педагога физической культуры к деятельности самообразования и ее развитие в процессе повышения квалификации: Автореф. дис. канд. пед. наук, М., 2014, 24 с.
14. Чичикин В. Т., Теоретические основы формирования профессиональной готовности специалиста в системе физкультурно-педагогического образования: Автореф. дис. д-ра пед. наук, М., 1995, 34 с.

## ПЕДАГОГИЧЕСКАЯ ПРАКТИКА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ФИЗКУЛЬТУРНОГО ОБРАЗОВАНИЯ

Папикян Арсен

*Государственный институт физической культуры  
и спорта Армении, Армения*

### Аннотация

В настоящее время в сфере физического воспитания возрастает потребность в высококвалифицированных кадрах, которые должны иметь не только высокий уровень знаний и практических умений, но и владеть современными информационными технологиями. Понятно, что студенты института физкультуры должны эти требования успешно реализовать в процессе педагогической практики.

Проблема профессиональной подготовки специалистов физической культуры и спорта изучалась многими авторами.

Цель исследования: изучить роль педагогической практики в системе высшего физкультурного образования.

В системе высшего физкультурного образования педагогическая практика является органической частью учебно-воспитательной работы, которая обеспечивает сочетание теоретической подготовки и практических навыков будущих учителей и проводится в учебно-воспитательном заведении. Анализ программ по педагогической практике позволил выделить следующие разделы: организационный, познавательный, учебный, методический, воспитательный, внеклассной, спортивно-массовой работы и исследовательский.

**Ключевые слова:** педагогическая практика, студенты, подготовленность, умения и навыки, высшее физкультурное образование.

### Список использованной литературы

1. Григорян Ю. Г., Папикян А. Р., Пути повышения эффективности практики подготовки специалистов по физическому воспитанию, Сборник научных статей 41-й Международной конференции, Ереван 2014, с. 110-114.,
2. Папикян А. Р., Программа организации и проведения бакалаврской педагогической практики, Ереван, 2010, с. 3-8,
3. Балановская Л. Г., Процесс формирования педагогической толерантности студентов физкультурного вуза // Научные труды: ежегодник, Омск: СибГУФК, 2011, с. 172-177.
4. Бондарчук Т. В., Миргородская Е. В., Вирк О. В., Структурно-функциональная модель готовности педагога по физической культуре к оздоровительной деятельности в процессе профессиональной подготовки студентов. // Теория и практика физической культуры, 2011, N 4, с. 54-57.
5. Беспалько В. П., Слагаемые педагогической технологии / В.П.Беспалько, М.: «Педагогика», 1989, 192 с.
6. Володина В. С., Формирование профессиональной готовности будущих учителей физической культуры посредством активных методов обучения: Автореф. дис... канд. пед. наук, Красноярск, 2007, 26 с.
7. Ивановский Ю.В., Амирова Л.А., Педагогические условия профессиональной социализации будущих преподавателей физической культуры на этапе вузовского обучения //Теория и практика физической культуры, 2009, № 4, с. 8-11.
8. Копаев В. П., Интегративный потенциал планирования урока физической культуры и проблемы его реализации в условиях учебной практики. // Физическая культура: воспитание, образование, тренировка, 2014, N 5, с. 7-10.
9. Корекцкий В. М., Профессионально-педагогическая подготовка студентов физкультурных вузов в системе дисциплин. " Специализации". Автореф. дис... док. пед. наук, М., 1998, 45 с.
10. Крякина Е. В., Педагогическая практика в структуре профессиональной подготовки студентов факультета физической культуры // Теория и практика физической культуры, 2006, N 4, с. 20-21.
11. Сивцев Н. Н., Формирование профессиональной компетентности будущих специалистов в сфере физической культуры и спорта в условиях непрерывной педагогической практики. Научно-практическая конференция "Совершенствование подготовки кадров в области физической культуры и спорта в условиях модернизации профессионального образования в России", 31 марта-2 апр. 2011 г.: материалы / М-во спорта, туризма и молодеж. политики РФ, М., 2011, с. 83-87.
12. Смирнова Е. И., Особенности развития общекультурных компетенций студентов педагогического вуза в физкультурной деятельности // «Педагогическая наука: прошлое, настоящее,

будущее»: материалы международной заочной научно-практической конференции. Часть II. (30 марта 2011г.), Новосибирск: Изд-во «ЭНСКЕ», 2011, с. 130-135.

13. Фомичев А. В., Готовность педагога физической культуры к деятельности самообразования и ее развитие в процессе повышения квалификации: Автореф. дис. канд. пед. наук, М, 2014, 24 с.

14. Чичикин В. Т., Теоретические основы формирования профессиональной готовности специалиста в системе физкультурно-педагогического образования: Автореф. дис. д-ра пед. наук, М., 1995, 34с.

## PEDAGOGICAL PRACTICE IN THE SYSTEM OF HIGHER PHYSICAL CULTURE EDUCATION

**Papikyan Arsen**

*Armenian State Institute of Physical Culture and Sport*

### Summary

Nowadays there is a demand for highly qualified specialists in the field of physical education, who must not only have a high level of knowledge, but also be proficient in modern information technologies.

It is absolutely clear that students of the institute of physical culture must be able to realize effectively these modern requirements within their pedagogical practice.

Main issues of professional pedagogical training of specialists in the field of physical culture and sport have been investigated over the years by various authors.

**The aim of the investigation** is to study the role of the pedagogical practice in the system of higher physical culture education.

Pedagogical practice is considered an organic part of the educational process in the system of the higher physical culture education, which ensures the combination of theoretical training of future teachers with practical work, and is conducted in educational institutions. Analysis of programs of pedagogical practice allowed us to separate the following sections: organizational, cognitive, educational, methodical, tutorial, extracurricular, physical culture massive and scientific-research.

**Keywords:** Pedagogical practice, students, training, abilities and skills, higher physical culture education.

### References:

1. Grigoryan Yu. G., Papikyan A. R., Ways to improve the efficiency of the practice of training specialists in Physical Education. Collection of scientific articles of the 41<sup>st</sup> International Conference, Yerevan, 2014, pp. 110-114.

2. Papikyan A. R., Program for Organizing and Conducting Bachelor's Teaching Practice, Yerevan, 2010, pp. 3-8.

3. Balanovskaya L.G., The Process of Formation of Pedagogical Tolerance of Physical Education Students // Scientific works: yearbook, Omsk: SibSUPE, 2011 p. 172-177.

4. Bondarchuk T. V., Mirgorodskaya E. V., Virk O. C., Structural and functional model of readiness of a Physical Education teachers for health-improving activities in the process of professional training of students. // Theory and Practice of Physical Education, 2011, N 4. pp. 54-57.

5. Bepalko V. P., Components of Pedagogical Technology / V. P. Bepalko, Moscow: Pedagogy, 1989, p.192.

6. Volodina V. S., Formation of professional readiness of future Physical Education teachers through active teaching methods: Author of dissertation... Candidate of Pedagogical Science.- Krasnoyarsk, 2007, p. 26.

7. Ivanovskaya Yu. V., Amiramova L. A., Pedagogical conditions for the professional socialization of future Physical Education teachers at the stage of University education. // Theory and Practice of Physical Education. 2009, No. 4, pp. 8-11.

8. Копяев В. П., The integrative potential for planning a Physical Education lesson and the problems of its implementation in the conditions of educational practice. // Physical Education: Upbringing, Education, Training, 2014, N 5 pp. 7-10.

9. Koretsky V. M., Vocational and pedagogical training of students of Physical Education universities in the system of disciplines. "Specialisations". Author of dissertation... Doctor of Pedagogical Sciences, Moscow, 1998, p.45.

10. Kryakina E. V., Pedagogical practice in the structure of professional training of students of the Faculty of Physical Education // Theory and Practice of Physical Education, 2006, N 4, pp. 20-21.

11. Sivtsev N. N., Formation of professional competence of future specialists in the field of Physical Education and Sports in the conditions of continuous pedagogical practice. Scientific and practical conference “Improvement of Training in the Field of Physical Education and Sports in the Conditions of Modernisation of Vocational Education in Russia”, March 31- April 2 2011: materials / Ministry of Sports, Tourism and Youth Policy of the Russian Federation, Moscow, 2011, pp. 83-87.

12. Smirnova E. I., Features of development of general cultural competencies of pedagogical university students in Physical Education // Pedagogical Science: Past, Present, Future”: materials of the international correspondence scientific and practical conference. Part II. (March 30, 2011). Novosibirsk: ENSKE Publishing House, 2011, pp. 130-135.

13. Fomichev A. V., Readiness of a Physical Education teacher for self-education activities and its development in the process of advanced training. Author of dissertation Candidate of Pedagogical Sciences, M, 2014, pp. 24.

14. Chichikin V. T., Theoretical foundations of formation of professional readiness of specialist in the system of Physical Education and Pedagogical Education: Author of dissertation... Doctor of Pedagogical Science, Moscow, 1995, pp. 34.

*Материал был представлен и отправлен на рецензию: 25.10.2021*

*Принято к публикации: 13.11.2021*

*Рецензент: доктор пед. наук, проф. Роберт Азарян*

*The material was submitted and sent to review: 25.10.2021*

*Was accepted for publication: 13.11.2021*

*Reviewer: Doctor of Sciences, Prof. Robert Azaryan*

81` 367.7

## ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**Մարգարյան Արտաշես**

*Երևանի պետական համալսարան,*

*Հայաստան*

**Համառոտ ներածական:** Շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումը ներառված է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսումնական ծրագրերում: Դրանց ուսուցում նախատեսված է նաև ոչ մասնագիտական ֆակուլտետներում, քանի որ այդ միջոցների ու եղանակների իմացությունը և ճիշտ կիրառությունը խոսքում գործնական նշանակություն ունի: Խոսքում հանդիպող շարահյուսական տարբեր սխալների շարքում կապակցմանն առնչվող սխալներն էական տեղ են զբաղեցնում:

**Հիմնախնդիրը:** Բանասիրական ֆակուլտետներում շարահյուսության, հետևաբար նաև կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումն իրականացվում է ավելի մեծ խորությամբ՝ քննության առնելով նաև տեսական մի շարք հարցեր, իսկ ոչ մասնագիտական ֆակուլտետներում ուշադրությունն առաջին հերթին սևեռվում է կիրառական խնդիրների վրա: Այս դեպքում տեսական հարցերին անդրադարձ կատարվում է գործնականում կիրառելու համար: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է ընտրել ճիշտ մեթոդներ:

**Հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է ներկայացնել շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների վերաբերյալ այն մոտեցումները, որոնք առկա են բուհական դասագրքերում ու ձեռնարկներում և բացահայտել այն մե-



թողները, որոնց կիրառումով հնարավոր է ավելի մատչելի ներկայացնել նյութը՝ գործնականում ամրապնդելով ուսանողների գիտելիքները:

**Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն:** Շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին անդրադարձել են բուհական դասագրքերի ու ձեռնարկների գրեթե բոլոր հեղինակները՝ Ս. Ասատրյանը [2], Ս. Գյուլբուդադյանը [6], Ռ. Իշխանյանը [8], Խ. Բաղդիկյանը [5, 8], Ա. Պապոյանը [10], Լ. Եզեկյանը [7] և ուրիշներ: Այս թեման ներկայացված է նաև ոչ մասնագիտական ֆակուլտետների համար նախատեսված դասագրքում [3]: Հռոլվածում ներկայացված և վերլուծված են հեղինակների մոտեցումները և նյութի մատուցման ձևերը:


**Հետազոտության նորույթ:** Հռոլվածում փորձ է արվում ներկայացնելու ուսուցման այն մեթոդները, որոնց կիրառությունն ավելի արդյունավետ է դարձնում շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումը: Մասնավորապես առաջարկվում է թեման ուսուցանելիս կատարել նախադասություններում առկա կապակցությունների վերլուծություն՝ վերհանելով յուրաքանչյուրում կիրառված կապակցական միջոցներն ու եղանակները, մեկնաբանելով դրանց առանձնահատկությունները:

**Բանալի բառեր:** Շարահյուսական կապակցման միջոցներ և եղանակներ, համաձայնություն, կառավարում, խնդրառություն, առդրություն, բառաձև, կապ, շաղկապ, շարադասություն, հնչերանգ, ուսուցման մեթոդներ:

Շարահյուսական կապակցման միջոցների ու եղանակների ուսուցումն առնչվում է տեսական և կիրառական մի շարք խնդիրների: Ներկայումս գործածվող բուհական դասագրքերում ու ձեռնարկներում որպես շարահյուսական կապակցման միջոցներ հիմնականում նշվում են բառաձևերը, կապերն ու շաղկապները, շարադասությունը, հնչերանգը, իսկ որպես կապակցման եղանակներ՝ համաձայնությունը, կառավարումը (կամ խնդրառությունը) և առդրությունը: Մեր քննած բուհական դասագրքերում ու ձեռնարկներում կապակցման միջոցները ներկայացնելիս հեղինակները հետևյալ մոտեցումներն են ցուցաբերել: Ս. Ասատրյանը կապակցման միջոցները քննելիս նշում է *բառաձևերը, կապերն ու շաղկապները, շարադասությունը և հնչերանգը* [2, էջ 33-49]: Կապակցման միջոցներն այսպես են ներկայացնում նաև Ա. Պապոյանը [10, էջ 9], Լ. Եզեկյանը [7, էջ 318-321]: Ս. Գյուլբուդադյանը նշում է. «Հայերենի շարահյուսական կապակցության միջոցները երկուսն են՝ *ա) հնչութային* (հոլովման, խոնարհման վերջավորություններ, հերթագայություն, հոգնակերտ և առկայության վերջավորություններ, կապեր, շաղկապներ), *բ) վերհնչութային* (շարադասություն, հնչերանգ)» [6, էջ 14]: Ռ. Իշխանյանը հետևյալ ձևով է ներկայացնում. «...Ինչպես դժվար չէ նկատել, կապակցման միջոցները երկու տեսակ են՝ *ա) քերականական միջոցներ* (բայի խոնարհման, գոյականի և դերանվան հոլովման, դեմքի ու թվի ձևեր և այլն) և *բ) բառային*, այն է՝ կապեր ու շաղկապներ» [8, էջ 35-36]: Հնչերանգի և շարադասության կապակցական դերը հեղինակը քննում է կոնկրետ միավորների կապակցությունը ներկայացնելիս (ենթակա-ստորոցյալ, բացահայտիչ-բացահայտյալ և այլն): Խ. Բաղդիկյանը շեշտում է քերականական կարգերի արտահայտման ձևերը՝ առանձնացնելով *ձևույթային* (թեքույթավորում, հերթագայություն, հոգնակերտ և առկայացման ցուցիչներ) և *բառային* (կապեր և շաղկապներ) միջոցներ [5, էջ 7-8, նաև 9, էջ 7-8]: Ինչպես տեսնում ենք, հեղինակների մոտեցումների միջև կան թե՛ ընդհանրություններ, թե՛ տարբերություններ:

Ուսանողները բառաձևերի կազմությունն ու քերականական իմաստները ուսանած են լինում շարահյուսությանը նախորդող բաժինը՝ ձևաբանությունը անցնելիս, ուստի դժվար չի լինում ընկալել դրանց կապակցական դերը: Բավական է միևնույն շարահյուսությամբ ներկայացնել քերականորեն չփոխված և անհրաժեշտ ձևերով փոխված բառաշարքեր, և պարզ կդառնա, որ նախադասություն (կապակցություն) ձևավորվում է միայն երկրորդ դեպքում (օրինակ՝ *Ծառ ճյուղ օրորել քամի – Ծառի ճյուղերն օրորվում էին քամուց*):

Կապակցման մյուս միջոցները՝ կապերն ու շաղկապները, ուսանողները նույնպես ուսումնասիրում են ձևաբանություն բաժնում: Իրենց հիմնական գործառնությունը լինելով քերականական՝ կապերն ու շաղկապները ձևաբանության մեջ առաջին հերթին ուսումնասիրվում են հենց կապակցական գործառնության տեսանկյունից, ուստի շարահյուսության ուսուցման ժամանակ հեշտ է լինում նրանց այդ դերը բացատրելը: Դասախոսը բերում է օրինակներ, որոնցում շարահյուսական կապերն իրականացել են կապերի ու շաղկապների միջոցով: Դա կարելի է ակնառու ցույց տալ՝ զուգահեռներ անցկացնելով հոլովաձևերով ու կապական կառուցներով արտահայտված միևնույն անդամների միջև, օրինակ՝ *խոսել դասից/դասի մասին*: Պետք է ուսանողների ուշադրությունը հրավիրել կառույցների ներքին կապերի վրա: Այս դեպքում առկա է երկու կապակցում. կապը կապակցվում է գերադաս անդամին, իսկ կապի խնդիրը՝ կապին՝ նրա հետ դառնալով լրացում: Այսինքն՝ իրականանում են շարահյուսական հետևյալ առնչությունները.



Թեման բացատրելիս տեղին է գործածել լուսապատկերային ցուցադրություն:

***Создание открытого языкового пространства для эффективного усвоения учащимися синтаксического материала.***

Учитель-словесник должен создать для учеников открытое языковое пространство. Шаг на пути к созданию открытого языкового пространства – введение социальной практики. Свои синтаксические знания учащиеся основной школы могут реализовать в конкретной практической деятельности: написание заметки или статьи в газету, проведение внеклассного мероприятия, помощи в организации и проведении традиционной декады украинского языка и литературы. Благодаря проблемно-исследовательской деятельности развивается продуктивное, творческое мышление учащихся на уроке, приобретает опыт самоанализа, рефлексии, критической самооценки; лучше усваивается синтаксический материал, формируется социальная компетентность ученика, которая необходима в системе основных сфер самоопределения личности.

Растет роль учителя как консультанта, организатора сбора и аккумуляции информации. Он становится режиссером взаимодействия учащихся с языковым материалом. Такой способ обучения вырабатывает у детей творческий, проблемный подход, позволяющий видеть и формулировать проблему; выдвигать гипотезу и находить способ ее проверки; собирать данные и анализировать их и предлагать методику их обработки.

Внедрение проблемно-поискового подхода дает такие положительные результаты:

- формируются коммуникативные умения и навыки школьников;
- создается атмосфера комфортности и успешности обучения;
- растёт активность учащихся на уроке;
- обогащается опыт школьников в ведении полемики, вырабатывается умение находить единственно правильное решение.

Особенностью изучения синтаксиса сложного предложения в основной школе является то, что синтаксический материал изучается на основе связи со всеми другими разделами. Чтобы решить проблему качественного усвоения синтаксического материала, нужна система упражнений, которая должна обеспечить усвоение учащимися теоретических знаний по синтаксису в практическом аспекте и активно формировать их коммуникативные умения и навыки. Предпочтение должно отдаваться активным формам изучения синтаксиса, разнообразным задачам творческого характера на речевом материале: трансформации, моделированию, конструированию синтаксических единиц; составлению предложений и небольших текстов; выбору необходимых речевых средств для построения синтаксических конструкций.

Среди упражнений и заданий в процессе изучения синтаксиса Н. Дикой были выделены следующие:

- 1) когнитивно-деятельностные: рецептивные, которые требуют от учащихся восприятия, осознания и фиксации в памяти полученной информации, группировки лингвистических понятий по указанным признакам, нахождения ключевых терминов;
- 2) репродуктивные: связанные с умением воспроизводить изученное, подбирать лингвистические понятия по определенным критериям;
- 3) мотивационно-ориентировочные: направленные на развитие умения определять то или иное лингвистическое понятие;
- 4) производительные: требуют от учеников творчески применять знания, составлять конспект и выражать собственное мнение;
- 5) оценочно-контрольные: упражнения и задания, которые предусматривают развитие умения проверять правильность определений лингвистических понятий, оценивать ответы в соответствии с разработанными требованиями, прогнозировать конечный результат в соответствии с коммуникативной ситуацией.

В диссертации Н. Солодюк определены лингводидактические основы функционирования интерактивных методов обучения на уроках украинского языка. Особое внимание Н. Солодюк уделяет методу проектов, основанном на самостоятельной деятельности учащихся. Главная задача метода проектов – показать ученикам их заинтересованность в приобретенных знаниях. Метод проектов всегда ориентирован на самостоятельную деятельность учащихся, формирует умение самостоятельно выбирать различные решения, пути получения информации, генерировать идеи, гипотезы, прогнозировать их решения.

Проблеме реализации метода проектов посвящены труды многих исследователей (Н. Голуб, А. Горошкиной, А. Караман, С. Караман, А. Кучерук, Н. Солодюк и др.).

Лингводидактами доказано, что для формирования коммуникативной компетентности учащихся в их проектной деятельности особенно существенным является использование речи не в учебных упражнениях, а в их естественном предназначении – для налаживания контакта с одноклассниками в процессе парной и групповой форм работы.

На основании анализа трудов С. Пилюгиной, А. Полат и др., собственных наблюдений А. Горошкина определила критерии использования исследовательских проектов на уроках украинского языка в основной школе и в старших классах:

- а) наличие значимой в исследовательском творческом плане проблемы, требующей интеграции знаний;
- б) самостоятельная деятельность учащихся (индивидуальная, парная, групповая);
- в) определение проблемы, задач исследования;
- г) структурирование содержательной части проекта (указание поэтапных результатов);



- д) выдвижение гипотезы;
- е) обсуждение методов исследования;
- ё) обсуждение способов оформления конечных результатов (презентаций, творческих отчетов, защит и т.п.).

#### ***Понятие когнитивной методики.***

Современная коммуникативная направленность занятий по украинскому языку в основной школе предполагает организацию системы знаний, умений и навыков, которая дает возможность ученику сформировать ряд компетенций (синтаксическую, лингвистическую, социокультурную и т.д.). В сферу преподавания украинского языка постепенно входит понятие *когнитивного метода*. Целью *когнитивной методики* является овладение учащимися концептов – глубинных значений развернутых содержательных структур текста с целью формирования умений адекватного восприятия текстовой информации и создание собственных (устных и письменных) высказываний в соответствии с коммуникативной целью, развития их познавательной активности, воспитания национального самосознания, уважения к языковым традициям украинского народа и желания подражать эстетическим и этическим нормам общения. Опирается *когнитивная методика* на педагогические разработки В. Сухомлинского, К. Ушинского, лингвистические исследования Ф. Бацевич, С. Ермоленко, М. Кочерган, А. Селиван, В. Мельничайко, А. Никитиной, А. Горошкиной, М. Пентилюк, А. Федик, Г. Яворской и многих зарубежных ученых.

*Когнитивно-направленное обучение* имеет личностно-обусловленный характер. Основным средством обучения украинскому языку в основной школе, на наш взгляд, в когнитивно-коммуникативной методике является текст. Текст является посредником между участниками общения, важным компонентом в структуре коммуникативного акта между адресантом (тем, кто высказывается) и адресатом (тем, кто воспринимает высказывания). Текст позволяет определить задачи на всех уровнях, а также способствует качественному усвоению стилей речи, способов объединения предложений в пределах сложного синтаксического целого, средств связи предложений в тексте, осуществить актуальное членение предложения и т.д.

Большинство современных лингвистов подчеркивают взаимосвязь синтаксиса предложения и синтаксиса текста, необходимость изучения структуры текста в связи с типологией предложения, поскольку «именно предложение является той ячейкой, на основе которой, путем интеграции ряда предложений по законам текстового синтаксиса строится текст любой длины» [2, стр. 24].

Понимание и восприятие учениками текста должны составлять единый процесс. Современные лингвисты выделяют четыре уровня понимания текста. Первый уровень характеризуется осознанием того, о чем говорится, темы высказывания, ее поверхностным пониманием. Для второго уровня свойственно понимание того, что говорится, становление смысловых связей, композиционной структуры текста. Осознание того, какими средствами автор реализует свой замысел, то есть проникновение не только в содержание, но и в форму текста – третий уровень понимания текста. Четвертый уровень понимания характеризуется выявлением глубинного содержания, проникновением в подтекст, осознанием цели и идеи высказывания. В *когнитивно-коммуникативной методике* лидируют такие упражнения:

- *аналитические*, связанные с анализом текстового материала;
- *ассоциативные*, которые побуждают учеников к выявлению эмоционально-чувственного отношения к тексту и к учебному материалу;
- *коммуникативные*, предусматривающие привлечение учащихся к активной коммуникативной деятельности, направленные на формирование интеллектуально-креативных способностей учащихся: дару слова, мышления, речи, внимания, наблюдательности и тому подобное;
- *исследовательские*, предусматривающие привлечение учащихся к творчеству через поиск, путем создания и решения *проблемных ситуаций*.

*Когнитивная методика* создается на основе принципов креативности, единства развития речи и мышления, принципа интерактивности, интенсивного использования фоновых знаний, принципа осознания познавательной направленности и др.

*Принцип креативности.* Суть его заключается в обеспечении результативной творческой деятельности учащихся основной школы, в стимулировании их языкотворчества в устной и письменной форме, анализа сложных синтаксических конструкций, анализа и выработки текстов разных типов, стилей и жанров речи. Развитие речи и мышления учащихся основывается на учете двух основных функций языка – *мыслительной и коммуникативной*. Именно этот принцип и обуславливает реализацию когнитивной методики.

*Принцип интерактивности* заключается в организации совместной деятельности учащихся по усвоению информации о синтаксисе сложного предложения и формированию у них умений конструировать сложные предложения, находить различные типы сложных предложений в тексте, выполнять творческие задания, учиться реконструировать предложения и др.

Ученый М. Кларин создает модель творческого поиска: от видения и постановки проблемы к выдвижению гипотез, их проверки и тому подобное. В эту модель творческого поиска входят: исследования, моделирование игры, совместная разработка позиций во время дискуссии, принятия решений [7, стр. 110-132].

*Принцип осознанной познавательной направленности* способствует формированию у учащихся *положительной мотивации* в усвоении синтаксических и лингвистических знаний, а также способствует высокому уровню речевой культуры, которая проявляется в совершенном владении всеми видами речевой деятельности. Положительная мотивация и самостоятельность на уроках создают благоприятные условия для реализации лично ориентированного, развивающего обучения. Использование интегрированного обучения на уроках словесности обеспечивает ученикам основной школы самостоятельность в творческом овладении знаниями, умениями и навыками, создает систему взаимодействий между участниками учебного процесса.

Учитель-словесник должен работать над повышением мотивационной сферы учащихся. Этому способствуют кейс-уроки, бинарные уроки, также уроки, на которых используются такие методы обучения, как наблюдение, эвристическая беседа, учебные дискуссии, создание ситуации заинтересованности и успеха, метод проектов и др.

Использование различных методов и форм мотиваций на уроках родного языка способствует качественному усвоению синтаксического материала учениками, снижает утомляемость детей, создает комфортные условия обучения.

Ян Коменский считал интерес основой обучения, ведь оригинальная форма познания помогает избежать однообразия, шаблонности, способствует широкому применению эффективных методов и приемов усвоения учащимися новых знаний и формирования у них творческих способностей.

Над проблемой мотивации в поведении и деятельности человека в педагогике и психологии работали многие отечественные и зарубежные ученые: Л.С. Выготский, К.К. Платонов, Е.П. Ильин, С.Б. Каверин, Д.А. Зарайский, К. Хорни, Г.М. Йеркс, А.Б. Гончарова и другие.

Одним из путей формирования позитивного отношения учащихся к обучению является создание системы мотивов деятельности личности, которая подвергается педагогическому управлению и обеспечивает определение поведения учащихся и их отношение к изучению предмета родного языка. Существует несколько теорий положительной мотивации деятельности человека, но для учителя важно одно: овладение способами создания на уроке родного языка такой учебной среды, в которой бы ученики чувствовали внутреннюю потребность учиться.

Интересным и одновременно эффективным для развития самостоятельности учащихся основной школы является *бинарный урок*. *Бинарные уроки* позволяют интегрировать знания

из различных областей для решения одной проблемы. *Бинарный урок* является одной из форм проекта. Такой урок является средством повышения положительной мотивации ученика по изучению предмета, поскольку создает условия для практического применения знаний.

План подготовки к *бинарному уроку*:

1. Определить тему, цели и задачи урока.
2. В зависимости от темы, целей и задач урока определяется его тип.
3. Выбирается наиболее эффективное сочетание методов и приемов в соответствии с поставленной целью и содержанием учебного материала.
4. Работаем над структурой урока. Акцент делается на самостоятельной познавательной деятельности учащихся, создании проблемных ситуаций с учетом логики учебной дисциплины.
5. Определяется степень участия каждого ученика.

### **Кейсы**

Эффективными для усвоения синтаксического материала в основной школе являются также *кейсы*. *Кейсы* (ситуационные упражнения) имеют четко определенный характер и цели. Как правило, они связаны с проблемой или ситуацией, которая существовала или существует сейчас. С методической точки зрения *кейс* - это специально подготовленный учебный материал, содержащий структурированное описание ситуаций, заимствованных из реальной практики. *Технология «кейс»* развивает:

- практические навыки – формирование на практике навыков использования теории, методов и принципов;
- творческие навыки - генерация альтернативных решений;
- аналитические навыки - классифицировать, выделять существенную и несущественную информацию, анализировать, представлять и добывать ее, мыслить четко и логично;
- коммуникативные навыки - умение вести дискуссию, защищать свою точку зрения, убеждать оппонентов, составлять короткий и убедительный отчет и тому подобное.

Эффективность обучения с помощью *кейс-метода* очевидна. Дети учатся творчески мыслить, активизируют свои способности, гораздо эффективнее усваивается синтаксический материал и тому подобное. Практическая ситуация вызывает в учащихся интерес к процессу обучения, так как становится ясно, каких теоретических знаний не хватает для решения проблемы.

*Кейс-уроки* позволяют одновременно с изучением синтаксических тем, органично использовать навыки учащихся, такие как критическое мышление, сообразительность, системность и коммуникабельность. Это креативный метод с драматическим сценарием и возможностями выбора, чего невозможно добиться обычными уроками. Ценными являются также дискуссии, которые разворачиваются в классе. Во время *кейс-уроков* время летит незаметно, что положительно сказывается на мотивации учащихся и их стремлении изучать еще и другие кейсы.

*Кейсы-упражнения* дают ученику возможность применять определенные приемы и широко использовать материал кейсов. Манипулировать цифрами в контексте реальной ситуации гораздо интереснее, чем делать простые упражнения.

*Кейсы-случаи* – это очень короткие кейсы. Такого типа кейсы могут использоваться во время урока для демонстрации того или иного понятия, или как тема для обсуждения. Такие кейсы не требуют от учащихся специальной подготовки к началу занятий.

*Научно-исследовательские кейсы* ориентированы на включение ученика в исследовательскую деятельность.

Различают также кейсы по способу подачи материала:

- *печатный кейс* (содержит в себе таблицы, диаграммы, иллюстрации и т.д.);
- *мультимедиа кейс* (современный, наиболее популярный кейс, но зависит от технического оснащения учреждения);

- *видео кейс* (содержит фильм, аудио- и видеоматериалы).

### ***Выводы и перспективы дальнейших исследований направления.***

Многие актуальные образовательные задачи, а именно: формирование аналитического мышления, стимулирование активности и инициативности учащихся в учебном процессе, способность самостоятельно принимать решения, - решаются благодаря внедрению на уроках украинского языка современных интерактивных методов обучения. Благодаря созданному учителем открытого языкового пространства и современных методов обучения, отношение учащихся к изучению родного языка становится более сознательным и ответственным. Дети охотно выполняют классные и домашние упражнения, активно включаются в коллективный анализ языкового материала и т.п.

Когнитивная методика обучения родному языку в основной школе направлена на создание атмосферы сотрудничества, активизацию познавательной деятельности каждого ученика, его творческой самостоятельности, усиление ответственности за результаты обучения, развитие эрудиции школьников, совершенствование их коммуникативной компетентности и др.

Принципы и закономерности когнитивной методики базируются на определенной системе, которая определена нами как базовая категория, именуемая подходом, и основывается на конкретном лингводидактическом инструментарии: методах, принципах, приемах и средствах обучения.

Успешное овладение знаниями, умениями и навыками по синтаксису предложения в значительной степени зависит от форм и методов, которые выбирает учитель-словесник. Современные методисты подчеркивают, что учитель-филолог должен быть знаком с главными достижениями современного синтаксиса предложения и текстоведением.

### **Список использованной литературы**

1. Варзацкая Л., Кратасюк Л., Интерактивные методы обучения: лингводидактические основы / Л. Варзацкая, Л. Кратасюк // Дивослово, 2005, № 2, с. 5-9.
2. Волкова С. С., О синтаксической сущности понятий «единица текста» и «текстуальная связь», М., 1988, Вып. 8, с. 22-30.
3. Дидук Г., Реализация когнитивного принципа обучения в процессе коммуникативно-лингвостилистической работы на уроках украинского языка / Г. Дидук // Научные записки Тернопольского государственного педагогического университета имени В. Гнатюка. Серия: Педагогика. Лингводидактика, 2004, № 1, с. 56-60.
4. Доленко Н. Т., Кващук А. Г., Современный украинский язык. Киев: Высшая школа, 1992, 253 с.
5. Голуб Н. Б., Л. В. Галаевский, Обучение синтаксиса на уроках укр. языка в 8-9 классах, М. : «КОНВИ ПРИНТ», 2018, 128 с.
6. Горошкина А. Н., Современный урок украинского языка: от планирования до проведения / А. Н. Горошкина, Л. А. Попова. - Харьков: Основа, 2010, 111 с.
7. Кларин М. В., Педагогическая технология в учебном опыте. М. В. Кларин. М.: Народное образование, 1989, 225 с.
8. Пентилюк М. И., Культура речи и стилистика / Н. И. Пентилюк, М. : Башня, 1994, 240 с.
9. Филипенко А. С., Основы научных исследований. Киев: Академическое издательство, 2005, 208 с.
10. Шульжук К. Ф., Сложные многокомпонентные предложения в украинском языке. К. Ф. Шульжук. М.: Высшая школа, 1990, 181 с.

### **MODERN SYNTAX COMPETENCE OF BASIC SCHOOL STUDENTS AND ITS ROLE IN THE FORMATION OF A NEW PERSONALITY OF A STUDENTS**

**Shchupko Svetlana**

*Western Ukrainian*

*National University, Ternopil, Ukraine*

### ***Summary***

The article deals with a modern approach to the study of sentence syntax in the intermediate school. The method of projects is relevant at the present stage of studying syntax. The essence of the project is to

guide students to the formation of a problem, the so-called key question. Thematic issues are often difficult to understand and contradictory. In this way, it leads students to reflect, search, and explore. Pupils learn to think outside the frame, have improved learning outcomes, and the creativity of each child also increases. When using the project method, it is important to: formulate hypotheses, use research methods, analyze the data obtained.

To enhance the educational and cognitive activity of students in the classroom, a cognitive methodology was introduced, aimed at the intellectual development of students; modeling of educational situations that induce various types of speech activity. The goal of the cognitive methodology is the mastery of concepts by students - the deep meanings of the detailed content structures of the text, the formation of skills for adequate perception of textual information and the creation of their own (oral and written) statements, increasing interest in the language, etc.

**Keywords:** *scientific approach to the study of syntax in intermediate school, open language space, binary lesson, cases, syntactic competence, experience of introspection, cognitive technique.*

### References:

1. Varzatska L., Kratasiuk L., Ynteraktyvnye metody obucheniya: lynchvodydaktychny osnovy / L. Varzatska, L. Kratasiuk // *Dyvoslovo*, 2005, № 2, S. 5-9.
2. Volkova S. S., O syntaksycheskoi sushchnosti poniatyi «edynytsa teksta» y «tekstualnaia sviaz», M. 1988, Vyp. 8, S. 22-30.
3. Diduk H., Realyzatsiya kohnytyvnogo pryntsypa obucheniya v protsesse kommunykativno-lynhvostylstychnoy raboty na urokakh ukraynskoho yazyka / H. Diduk // *Nauchnye zapysky Ternopolskoho hosudarstvennogo pedahohycheskoho unyversyteta imeni V. Hnatiuka. Seryia: Pedahohyka. Lynthvodydaktyka. - 2004. - № 1. - S. 56-60.*
4. Dolenko N. T., Kvashchuk A. H., *Sovremennyi ukraynskyi yazyk*. Kyev: Visshaia shkola, 1992. 253 s.
5. Holub N. B., L. V. Halaevskyi, *Obuchenye syntaksysa na urokakh ukr. yazyka v 8-9 klassakh. - M.: «KONVY PRYNT», 2018, 128 s.*
6. Horoshkyna A. N., *Sovremennyi urok ukraynskoho yazyka: ot planyrovaniya do provedeniya* / A. N. Horoshkyna, L. A. Popova, Kharkov: Osnova, 2010, 111 s.
7. Klaryn M. V., *Pedahohycheskaia tekhnolohiia v uchebnom opyte. M. V. Klaryn. M.: Narodnoe obrazovanye, 1989, 225 s.*
8. Pentyliuk M. Y., *Kultura rechy i stilistika* / N. Y. Pentyliuk, M.: Bashnia, 1994, 240 s.
9. Fylypenko A. S., *Osnovy nauchnykh issledovaniy*. Kyev: Akademicheskoe izdatelstvo, 2005, 208 s.
10. Shulzhuk K. F., *Slozhnye mnohokomponentnye predlozheniya v ukraynskom yazyke*. K. F. Shulzhuk, M.: Visshaia shkola, 1990, 181 s.

*Материал был представлен и отправлен на рецензию: 18.10.2021*

*Принято к публикации: 12.11.2021*

*Рецензент: канд. пед. наук, доцент Аревик Казарян*

*The material was submitted and sent to review: 18.10.2021*

*Was accepted for publication: 12.11.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Arevik Khazaryan*

**«ԵՐԵՔ ԲԱՆԱԼԻ ԵՎ ՄԵԿ ԿՈՂՊԵՔ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արզումանյան Արմենուհի  
ԵՊՀ, Հայաստան

**Համառոտ ներածական:** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները՝ վերտառությամբ հողվածում փորձել ենք ցույց տալ մեթոդի կիրառման տարբեր մոտեցումները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով և աշակերտների տարիքային խմբով: Մեթոդի կիրառման յուրահատկությունները տեսանելի ենք դարձրել հայ գրականության դպրոցական ծրագրում ներառված գրական երկերի վերլուծության հիման վրա:

**Բանալի բառեր:** Համեմատական-վերլուծական մտածողություն, գաղափարական խնդիրներ, կենսափիլիսոփայական շերտեր, պատկերակերտման միջոցներ:

**Հիմնախնդիրը:** Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, անցած նյութի համակարգում և ամփոփում, գիտելիքների ընդհանրացում:

**Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն:** Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված մի շարք գիտական հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008), «Ուսուցման արդյունավետ հնարներ» (Ս. Խաչատրյան, «Էր. Ֆ. Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020), Technology for literacy teaching and learning. New York. Houghton Mifflin Company (Valmont W., 2006), Classrooms that work (Allington R., Cunningham P., Boston, Allyn and Bacon, 2004):

Վերոնշյալ հեղինակները փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

**Հոդվածի նպատակն է** հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ մեթոդով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

**Հետազոտության նորույթն է** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման տարբեր մոտեցումների դիտարկումը: Առաջին անգամ,

ուսուցանվող նյութով պայմանավորված, քննաբանվել են մեթոդի կիրառման տարբեր մոտեցումներ՝ շեշտադրելով դրանց արդյունավետությունը, առավելությունները:

**Հիմնական նյութի շարադրանքը:** «Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը հիմնականում կիրառվում է նյութի ամփոփման փուլում: Մեթոդի էությունը հետևյալն է. ուսուցչի կողմից առաջադրված ելակետային հարցադրման պատասխանը գտնելու համար տրվում են տվյալ գրական երկի բովանդակությունից բխող բնորոշումներ, ուղղորդող, հուշող, տվյալ հարցը ինչ-որ չափով ամբողջացնող բնութագրումներ, որոնք այն բանալիներն են, որոնց օգնությամբ պետք է բացվի կողպեքը՝ հիմնական հարցադրումը: Կիրառվող բանալիների թիվը պայմանական է. այն կարող է լինել երեք և ավելի ու կախված է ուսուցանվող նյութի ծավալից, հարցադրման բովանդակությունից, աշակերտների իմացական մակարդակից [5]: Վերոնշյալ մեթոդը կարելի է կիրառել տարբեր մոտեցումներով՝ պայմանավորված աշակերտների տարիքային խմբերով և ուսուցանվող նյութով:

### **Մոտեցում 1-ին**

«Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդը ցածր դասարաններում կարելի է կիրառել հետևյալ կերպ. որևէ ստեղծագործություն, բանաստեղծություն, հեքիաթ ուսուցանելուց հետո ուսուցիչը կարող է մեթոդի օգնությամբ ստուգել, թե որքանով են աշակերտները նյութը յուրացրել, որքանով են հիշում անցած ստեղծագործությունը: Օրինակ՝ Թումանյանի առակների ու լեգենդների ուսուցման ամփոփման փուլում ուսուցիչը կարող է բանալի բառերի, բառակապակցությունների օգնությամբ ստուգել իր կողմից առաջադրված կողպեքի (նյութի իմացությունը ստուգող հարցադրման) բացման աշակերտների հմտությունները: Բնագրի ընթերցումը ստուգելու համար կարելի է կազմել հետևյալ բանալի բառերն ու բառակապակցությունները.

Կողպեք («Շունն ու կատուն») – բանալիներ (գդակ, գառան մորթի, ցրցամ տալ):

Կողպեք («Չարի վերջը») – բանալիներ (մի սար, մի ծառ, կկու, աղվես):

Կողպեք («Մի կաթիլ մեղրը») – բանալիներ (խանութպան, ասլան շուն, կատու):

### **Մոտեցում 2-րդ**

Միջին դասարաններում մեթոդը կարելի է կիրառել հետևյալ կերպ. ուսուցանվող ստեղծագործությունից պետք է ընտրել գրական երկի բովանդակությունը ներկայացնող երեք պարբերություն, կերպարները բնութագրող սյուժետային հատվածներ, արտասյուժետային տարրեր, որոնք կլինեն այն բանալիները, որոնցով աշակերտը կկարողանա բացել կողպեքը՝ նշելով ստեղծագործության անվանումը և ամբողջացնելով բովանդակությունը: Ուսուցիչը տվյալ հեղինակի ստեղծագործությունների ուսուցման ամփոփման փուլում կարող է այդ գրողի պատմվածքների կերպարների խիստ բնութագրական հատվածներից պատրաստել բանալի-պատկերներ և դրանց միջոցով ստուգել ուսուցանված նյութի՝ աշակերտների կողմից ընկալման մակարդակը: Օրինակ՝ Նար-Դոսի պատմվածքների ուսուցման ամփոփման փուլում «Ես և նա» պատմվածքից որպես բանալիներ կարելի է օգտագործել բնագրային այն հատվածները, որտեղ առավել ընդգծված են պատմվածքի կերպարների նկարագիրը, հերոսների հոգեբանությունը, որոնց հիման վրա աշակերտները կգտնեն կողպեքի՝ պատմվածքի գաղափարական հարցադրման բացահայտման ճանապարհը: Որպես բանալիներ կարելի է առանձնացնել սյուժետային հետևյալ հատվածները՝ «Մի կորած մարդու հիշատակարանից» հեղինակային գրառումը, պատմվածքի առաջին հերոսի՝ Եսի սիրած աղջկա՝ իրեն ուղարկած նամակը, Ջուլետտայի Անտոնիոյին ուղղված երկտողը: Այս հատվածների ընթերցումից հետո աշակերտները կնշեն գրական երկի

անունը, կամբողջացնեն ստեղծագործության բովանդակությունը և կշեշտադրեն պատմվածքի գաղափարական հարցադրումները՝ կյանքի հասցրած դժվարություններից չընկրկել, սոցիալական անհավասարությունից առաջացած խոչընդոտները պատճառ չդարձնել կործանման, այլ, ընդհակառակը, ուժ ստանալ պայքարելու, հասնելու ցանկալի բարձունքներին՝ մերժելով «վերևի» ու «ներքի»՝ սոցիալական հակադիր բևեռների վճռորոշ լինելը:

### **Մտտեցում 3-րդ**

Բարձր դասարաններում, հատկապես ավագ դպրոցի հումանիտար հոսքում, մեթոդը կարելի է կիրառել այնպիսի նյութի ուսուցման ժամանակ, որը առավել խորքային վերլուծություն է պահանջում: Այս դեպքում մեթոդը կարելի է կիրառել նյութի մատուցման փուլում՝ ուսուցանվող թեմայի առաջին ժամերին՝ դրոշակի գեղարվեստական պատկերներ դիտարկելով որպես բանալիներ ելակետային հիմնախնդրի բացահայտման համար: Եթե տվյալ գրական երկում կան խորհրդանշական պատկերներ, որոնք խտացնում են տվյալ հեղինակի կենսափիլիսոփայությունը, աշխարհայացքը, կենսամտածողությունը, այդ դեպքում խորհրդանիշ պատկերները կարելի է դիտարկել որպես բանալիներ՝ բացելու համար կողպեքը՝ ստեղծագործության գաղափարական հարցադրումները: Օրինակ՝ Հ. Մաթևոսյանի «Բեռնաձիեր» շարքի պատմվածքները՝ «Ալխո», «Նարինջ գամբիկը», «Նժույգս, նժույգս» ստեղծագործություններն ուսումնասիրելիս ուսուցիչը կարող է վերոնշյալ մեթոդի օգնությամբ բացատրել մաթևոսյանական կենսափիլիսոփայության հիմնական շեշտադրումները:

Ուսուցիչը պետք է նշի, որ Մաթևոսյանի գեղագիտական տիրույթում ձիապատկերը կարելի է դիտարկել որպես խորհրդանիշ, որն ունի խոհափիլիսոփայական, հոգեբանական տարաշերտ խաչաձևումներ: Մեծ է պատկերի ներքին տարողությունը. ձիապատկերում երևում են գյուղական կյանքի բազմազան տեսագծերը, վարպետորեն գուգորդվում են մարդու և ձիու մտորումները, երազանքներն ու հիպոթափությունները: Ձիապատկերի հոգեբանական դաշտը գոյավորվում է գյուղաշխարհի կենսաձևերի և այդ եզերքի մարդու աշխարհընկալման գուգորդումներով: Ձիապատկերը մաթևոսյանական պատումում ունի հետաքրքիր կառուցվածքային տրոհում՝ նժույգ-գամբիկ-հովատակ-բեռնաձի, որոնք էլ ուսուցիչը կարող է կիրառել որպես բանալիներ՝ իր վերլուծական խոսքը նպատակակետին հասցնելու կամար: Ձիապատկերի կառուցվածքային այս շերտերում տեսանելի է Մաթևոսյանի աշխարհայացքի և կենսափիլիսոփայության ծիրը:

Մաթևոսյանական պատումում ձիապատկերն ունի իմաստային հետաքրքիր զարգացումներ: Մաթևոսյանական ձիապատկերի կառուցվածքային տարաձևումները՝ **նժույգ-գամբիկ-հովատակ-բեռնաձի**, որպես հոգեբանական դրսևորումների խորհրդանիշ, իմաստային փոփոխությունների ընթացք ունեն: Ձիապատկերի հոգեբանական հետազոծի նախակետը նժույգ-ձի պատկերային միավորն է, որի խոհական ընկալումների տիրույթում շեշտադրվում են մարդկային երազանքը, երազի թևերին ճախրող հույզերն ու սպասումները, հոգու՝ դեպի գեղեցիկը հավերժական սլացքը: Ձիապատկերի կառուցվածքային վերջին հանգրվանը՝ բեռնաձին, դառնում է հոգնաբեկ աշխատավորի, իր հող ու ջրին անքակտելի կապերով ագուցված ռանչպարի խորհրդանիշ, մարդ, որն իր ուսերին է տանում աշխարհի բեռը՝ դառնալով յուրօրինակ մի բեռնաձի: Իսկ նժույգ-բեռնաձի պատկերների միջտարածական տիրույթում կան ձիապատկերի այլ գուգորդումներ՝ *գամբիկ, հովատակ, քուռակ*, և ձիու հումանիշային այս շարքը պատկերի մեջ դառնում է մարդկային հարաբերությունների բացահայտման միջնոր-



դավորված օղակ, որոնցից յուրաքանչյուրում երևում են մարդկային հոգու տարբեր շերտեր, աշխարհայացքային տարբեր մոտեցումներ:

Ուսուցիչը պետք է նշի, որ երազի ու իրականության, պատրանքի ու դառը ճշմարտության, գեղեցիկի ու ցավի բախումից ծնվող մարդկային հոգու դրաման է մաթեմատիկական ձևապատկերի հոգեբանական տարածքում: Իսկ հույզերի այդ ճանապարհի նախակետի՝ նժույզի հոգեբանական շեշտադրումը սկսվում է պատումի խորագրից՝ **«Նժույզս, նժույզս»**: Ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչու է պատմվածքի խորագրում *նժույզ* բառը կրկնվում, ինչու է երկու դեպքում էլ գործածվում *ս* ստացական հոդը: Սովորաբար գրական երկի խորագիրը դառնում է ստեղծագործության մեջ շեշտադրված գաղափարական հարցադրումների բացահայտման բանալին: Թեև ողջ պատմվածքում Մաթևոսյանը չի գործածում *նժույզ* բառը, բայց գրական երկի խորագրի նման անվանումով շեշտադրում է այն միտքը, որ թեև ծմակուտյան աշխարհում իր հող ու ջրին նվիրված յուրաքանչյուր հողագործ իր տեսակի մեջ յուրօրինակ մի բեռնաձի է, բայց նրանց մեջ եղել է կամ կա այն խենթ ու կրակոտ նժույզի տեսիլքը, որը յուրաքանչյուրի համար խիստ անհատական է: Նրանցից յուրաքանչյուրը հոգու նվիրական անկյուններում պահում է երազ-նժույզի ցնորք-պատրանքը՝ որպես հեռուներում մնացած, երազի թևերին ճախրող ցանկություն, երազանք, որը տխուր ու հոգսաշատ ներկայի գորշ գույների հետ անհամատեղելի է: **Մ** ստացական հոդը պատկերի մեջ ձեռք է բերում յուրաքանչյուրի հուզաշխարհի խիստ անձնական հոգեբանական տիրույթ. պատկերի գեղագիտական այս հնարքը շեշտադրում է և՛ սիրահարված պատանի հեղինակի՝ վաղվա օրվա իր երազանքի միայն իրենը դարձնելու ձգտումը, և՛ Փոքր հորեղբոր՝ Թիֆլիսի քաղաքային կյանքի փոթորկուն ալիքների մեջ ծփացող անհասանելի սիրո՝ Կարինեի երազ պատկերի հավերժ զգացողության խորհուրդը, և՛ հեղինակի մոր՝ քաղաքին մոտիկ գյուղի աղջկա՝ քաղաքային կյանքի պատրանքի անընդհատ վերհիշումը, և՛ հեղինակի հոր՝ դեպի Մախաչկալա ձգվող պատանեկան երանելի հուշերի արթնացումը: Նրանցից յուրաքանչյուրը, կքած առօրյա հոգսերի ծանր բեռն տակ, միևնույն է, իր հոգու խորքում ունի իր երազանքների նժույզը...:

**Նժույզ-ձիապատկերի** խորհուրդը առավել ընդգծվում է Փոքր հորեղբոր հուզաշխարհի ելևէջումների զուգորդումներում: Հեղինակը ցույց է տալիս հերոսի՝ մինչ գյուղաշխարհի գրված ու չգրված օրենքների համաձայն բեռնաձի դառնալը այդ կարգավիճակին ամրագրվելու հոգեբանական նախնական ճանապարհը: Իսկ այդ ճանապարհին մարդկային հույզերի հոգեբանական անցումները գրեթե միշտ համահունչ են նժույզ-բեռնաձի հոգեբանական անցումային տարածությանը, որտեղ տեսանելի են երազի և իրականության հակադրությունը, հոգու լուսավոր երազանքների և կյանքի առօրյա խնդիրների բախումը:

Փոքր հորեղբայրը հինգ տարի Թիֆլիսում ծառայելուց հետո վերադարձել է գյուղ՝ իր հետ բերելով մեծ աշխարհի շնչառության երանելի զգացողության պատրանքը, տեսլացած երազ աղջկա՝ Կարինեի սիրատոչոր հայացքի տաք ելևէջումները: Նրա հույսերն ու սպասումները փշրվում են՝ բախվելով տխուր իրականության պահանջներին: Գյուղական կյանքի հրամայականը՝ վերադառնալ գյուղ, ստանձնել ծեր ծնողների խնամքն ու հոգատարությունը, ընտանիքի առօրյա հոգսերի բեռը, փշրում է հերոսի երազի ճախրանքը, ու կամաց-կամաց նրա մեջ մեռնում է լուսավոր երազների նժույզը...: Մաթևոսյանական պատումում նժույզից բեռնաձի կեցության ձևերի անցումը կատարվում է դրամատիկ հոգեվիճակների զուգորդումներով: Փոքր հորեղբոր մեջ հեշտորեն չի մարում նժույզայինը: Պատումի հենց սկզբում տեսնում ենք նրա մեջ

արթնացած երագ-նժույզի պայքարը իրականության դեմ: Իրականության տխուր գույներին ծառս է լինում նրա ներաշխարհի նժույզը՝ կռիվ տալով նախագահի, դպրոցի տնօրենի, հարազատների դեմ...: Պատումում ձիապատկերը դառնում է հերոսի հոգեբանական անցումների արտահայտման տարածական դաշտ: Փոքր հորեղբայրը երամակից ընտրում է չորս տարեկան մի ձի, որն իր նման հիսուներեք ձիերի մեջ տարբերվում էր իր սլացքով, իր անսանձ պոռթկումով, ինչպես «շիկացած ածուխ»: Պատմվածքում «**շիկացած ածուխ ձի, հանգած ածուխ ձի**» պատկերներում որոշյի փոփոխությունը իր մեջ խտացնում է հերոսի հոգեվիճակը: Հերոսի հուզաշխարհում ավելետող զգացողությունները շիկացման, այրումի աստիճանի փոթորկում են նրա ներաշխարհը: Նա հույս ունի, որ յուրայինները կհասկանան իրեն՝ թույլ տալով հեռանալ գյուղից դեպի երագ ափեր: Մակայն նա անկարող է անտեսել յուրայինների հորդորները, և կյանքի չգրված օրենքները հանգցնում են հոգու կրակը [1]: Հերոս-ձիապատկեր զարգացումներին զուգահեռ՝ բացվում է մարդկային հոգու դրաման. վիրավոր ձիուն պետք է սպանել. սա է կյանքի օրենքը, երագ Կարինեին պետք է մոռանալ. սա է իրականության հրամայականը: Եվ մեծ եղբոր հրամանով փոքրը սպանում է ձիուն, իսկ դա կատարվում է ցավի տակ անզգայացած, անզորությունից անէացած. աշխարհն ու հեռաստանները անտեսանելի ու անընկալելի էին նրան. «Եվ իրեն խլացրած՝ չլսելով արտույտների ճախրը, և իրեն բթացրած՝ չզգալով հովի գնգոցը լեռնային վճիտ օդում, Փոքր հորեղբայրը գնաց դեպի ձին» [4]: Եվ ձին սատկեց, երագը մարեց..., բայց պետք էր նաև ձին քերթել...»: Ձիապատկերի հաջորդող հատվածում՝ ձիու սպանելուց մինչև ձին քերթելը, բացվում են հերոսի հուզաշխարհի բարդ շերտերը, հակադիր հոգեվիճակներից ծնված հոգեցունց զգացողությունները: Եղբայրների վեճը դառնում է երագի և իրականության բախման հոգեբանական աստղձ, որին միահյուսվում են ձիապատկերի զարգացումները: Լայիս է Փոքր հորեղբոր հոգին. Կարինե, Թիֆլիս, երագ... դրանց ի հակադրություն՝ գյուղական կյանք, ծնողների խնամք, Լուսիկ...: Հոգեվիճակների այս բախմանը զուգահեռ՝ շարունակվում է ձիու և մարդու ճակատագրերի միաձուլումը: Փոքր հորեղբայրը մեծի հրահանգով սրում է կացինը, դառնացած բարձրանում լեռը և գրեթե խելագար քերթում ձին: «Եվ չկային նրա համար հովի գնգոցը, արտույտների ճախրը, արտույտների երգը: Եվ լեշակեր բորենու պես ետ տալով հողը, նա քերթեց ձին» [4, էջ 326]: Ձիապատկերի այս տարածքը դառնում է հերոսի երագի կորստի վերջին հանգրվան. աշխարհի գույներին ու ձայներին անհաղորդ՝ երագաթափ է լինում մարդկային հոգին, փշրվում է երագ տեսիլքը, մարում է մարդու մեջ նժույզը:

Ուսուցիչը պետք է նշի, որ ձիապատկերի զարգացումների հետագիծը՝ **նժույզ-զամբիկ-հովատակ-բեռնաձի**, հարընթաց շարժ ունի: Ձիապատկերի հաջորդ հոգեբանական շերտը՝ **զամբիկ-հովատակ**, հոգեբանական զարգացումների հետաքրքիր ընթացք ունի: «**Նարինջ զամբիկը**» պատմվածքում ձիապատկերի նախնական դրսևորումներում տեսանելի է առհասարակ բնության մեջ երկու հակադիր սեռերի՝ էգի և արուի (ձիապատկերում՝ զամբիկ և հովատակ) հարատև կապի խորհուրդը՝ որպես տեսակի շարունակության, լինելիության ճանապարհի նախակետ: Այդ կապը ամուր թելերով ձգում է երկու սեռերի բնագոյային արթնացումները՝ որպես բնությունից ժառանգած վեհագույն ցանկություն, որը հզոր է և՛ կենդանական աշխարհում, և՛ մարդկային հարաբերություններում: Բնության մեջ տեսակի շարունակման բնագոյային կանչը դառնում է ձիապատկերի հոգեբանական տարածական կենտրոնը, իսկ տեսակի պահպանման բնության մեջ նախասահմանված ձևը՝ էգի ու արուի սեռային մղումների բարձրա-

կետը՝ բեղմնավորման ձգտումը՝ պատկերի ներքին շնչառությունը: Պատումում նարնջագույն հովատակի՝ դեպի էգ ձին սլացքի նկարագրությունը դառնում է յուրօրինակ գեղանկարչական պատկեր: Գրականագետ Վ. Գաբրիելյանը, մաթևոսյանական խոսքը որակավորելով որպես բանաստեղծական արձակ, գրում է. «Բայց ահա նարնջագույն հովատակի հարձակումը ուրիշ մի բեռնաձիու վրա, նրա վարգը բանաստեղծական գեղեցիկ մի պատկեր է» [2, էջ 169]: «Հուրհրատող նարինջը այդ կանաչ աշխարհի մեծ արեգակի տակ վառվելով թռչում էր դեպի էն խեղճ բեռնաձին, ասես քամին հրդեհ էր քշում, և պղնձագույն պոչը հազիվ չէր պոկվում, հազիվ էր հասցնում նրա էտնից» [4, էջ 329]: Եվ այս պատկերին հաջորդում է մարդկային բնական մղումը. «-Ու խ, մարդ ձի պիտեր» [4, էջ 329]: Ձիապատկերից լսելի դարձող ազատության բնագրի, կրքի, այրումի շնչառությունը ցանկալի է մարդ արարածին. անսանձ վայելումի, հոգու և ազատության կանչի նույն մոլեգին բախումները կան մարդկային հոգում:

Ուսուցիչը պետք է ցույց տա, թե ինչպես են մաթևոսյանական ձիապատկերում աստիճանաբար խտանում գույները, ուժգնանում է պատկերի ներքին ռիթմը. ձիու վարգը դառնում է դեպի ազատություն տենչացող ոգեղեն ուժի խորհուրդը, որը պատրաստ է փշրել ամեն կապանք ու խոչընդոտ՝ ազատության բաղձալի ափերը հասնելու համար: Շարժուն, գունեղ, բառային կրկնությունների ուժգնացումներով հագեցած ձիապատկերը դարձյալ ավարտվում է մաթևոսյանական փիլիսոփայության ընդգծված շեշտադրումով. երկրային տարածքներում երազ ազատության բաղձալի ճախրանքը կեցության առօրեական ձևերի մեջ խեղդվում է, կորցնում է տիեզերական տարածքներ հասնելու ուժը: Այո՛, ափսոս, որ երազ ցանկության ազատության ալիքներում ճախրանքը ընդհատվում է երկրային արժեքների գնահատումների տիրույթում: Չամբիկ ձին անպտուղ է, գյուղացու կեցության ճանապարհին՝ անցանկալի: Ձին հայտնվում է քաղաքում՝ կրկեսում: Սպանվում է նրա մեջ ազատ հեռաստանների, անձայրածիր արտերի, զրնգուն հովերի կանչը: Լինելիության նոր ձևի մեջ նա օտար է ինքն իրեն, իր աշխարհին, իր էությանը: Նրա մեջ մարել են հեռուներում մնացած եզերքի կեցության ձևերի մեջ ամրակայված զգացողությունները՝ հովատակի սարսափը ջլերի մեջ, չարաճճի երեխաներից ծեծվող, բռտերից քրքրվող բեռնաձիու անհանգստությունները, դեպի կանաչ տարածքները սլանալու ցանկությունը. նա ապրում էր առանց ինքն իրեն...: Օտարվեց, որովհետև չծնեց, չբարձվեց, չսնքաց... նրա մեջ մեռավ բեռնաձին...

Ուսուցիչը պետք է նշի, որ կենսափիլիսոփայության այս հենքի վրա Մաթևոսյանը ստեղծում է **նժույգ-բեռնաձի** գուգահեռը՝ հաստատելով բեռնաձիու՝ որպես ստեղծարար կյանքի խորհրդանիշ: Բեռնաձին՝ որպես գաղափարական խտացման տարածական դաշտ, առավել տեսանելի և շեշտադրված է «**Ալխոն**» պատմվածքում: Մաթևոսյանական ձիապատկերի տարաշերտ կառույցներում առավել ընդգրկուն է բեռնաձիու պատկերը՝ որպես աշխատանքի ու արարումի վեհագույն խորհուրդը խտացնող ուժ, հոգսաշատ կյանքին դիմակայելու և ազգայինի պահպանման խորհրդանիշ: Ձիապատկերի՝ որպես պատկերակերտման գեղագիտական միավորի մոտեցումը ինքնանպատակ չէ. այն ասելիքի շեշտադրման տարածական դաշտն է: Ձիապատկերի ձևակառույցները, ինչպես յուրաքանչյուր պատկեր, միշտ էլ ձևավորվում են շեշտադրման որոշակի սկզբունքով: Ժողովրդական կյանքի ակունքներից սնվող մաթևոսյանական կենսահայեցողությունը խտացված է ձիապատկերի ենթաշերտերում: Պատումում բեռնաձիու պատկերի կառուցվածքային ամբողջության մեջ մեծ խորհուրդ է ստանում գեղագիտական մի միավոր՝ մենախոսությունը, որը տեսանելի է միայն բեռնաձիու պատկերում: Այստեղ էլ ձիապատկերը հյուսվում է մարդու և կենդանու ներաշխար-

հային հույզերի խաչաձևումներով: Պատումի սյուժետային գործողությունների առանցքում Ալխո ձիու և գյուղացի Գիքորի մենախոսություններն են: Հետաքրքիրն այն է, որ Ալխոյի և Գիքորի մենախոսությունների կենսափիլիսոփայության ծիրը գրեթե նույնն է: Ալխոն և Գիքորը, որը թեև գոյատևումի ճանապարհին ունեցել է սայթաքումներ, աշխարհագնահատման նույն հարթության վրա են: Պատումում ձիապատկերը հյուսվում է մարդուն ու աշխարհը արժևորելու խոհափիլիսոփայական հենքի վրա: Աշխարհի գնահատումների դիտարկումները ինքնատիպ զարգացում են տալիս ձիապատկերին: Հետաքրքիր է պատումում ձիապատկերի ներքին ձգողական դաշտը. ոչ թե ձին է իր մտորումներով ու աշխարհընկալումներով մոտենում մարդուն, այլ հակառակը՝ մարդը՝ ձիուն. սա է Սաթևոսյանի աշխարհագնահատման ուղղությունը: Իսկ այս ճանապարհին մարդը, ավելի մոտենալով բնության անաղարտ ակունքներին, մաքրագործվում է: Սյուժետային զարգացումներին, դեպի Ղազախ տանող ճանապարհի ոլորանների կծկումներին զուգահեռ՝ շեշտադրվում են Ալխոյի և Գիքորի աշխարհարժևորման մոտեցումները, որոնք երևում են նրանց մենախոսություններում: Իսկ այդ մոտեցումները երևոյթների գնահատումների շատ հարթակներում նույնանում են, որը կատարվում է մարդու՝ դեպի կենդանու՝ բեռնաձիու ներաշխարհային թափանցումների արդյունքում: Գիքորը, գոյատևումի իր ճանապարհին հաճախ բախվելով մարդկանց արատավոր երևույթներին, երբեմն ինքն էլ գնալով զարտուղի ճանապարհով, այնուամենայնիվ, ներսում կատարվող այդ բախումների արդյունքում հասկանում է, որ ինքն էլ մի բեռնաձի է, իրեն այնքան հարազատ է զգում Ալխոյին: Եվ այդ կետից նրանց աշխարհագնահատման մեկնակետը նույնանում է: Նախ՝ աշխատանքը՝ արարումի խորհուրդն է դեպի հավերժի ճամփան տանող միակ ուղին: Գետափին տեսնելով կանանց՝ Ալխոն թախծում է. «... Վիթխարի մարդաթողը անում էր իր փափուկ պտույտները արևի տակ: Եվ այդ ամենը հանգած ու հզոր էր, ինչպես չաշխատող ջրաղացի ջուրը, ոտքի վրա փտող ծառը, տակին փոված արտ չունեցող արևը» [4, էջ 164]: Թախծում է Ալխոն, որովհետև այդպես ճիշտ չի կառուցվում կյանքի ընթացքը, որովհետև ծուլությունը՝ այդ «վիթխարի մարդաթողը», խեղում է գեղեցիկ կյանքի անընդհատ նորոգող ու ստեղծարար ուժի խորհուրդը: Ձիու լուռ մտորումները բարձրաձայնվում են Գիքորի կողմից որպես անբան աղջիկներին ուղղված հորդոր-պատգամ՝ գեղեցիկի արարման գույներով զարդարել կյանքի ճանապարհը: Գիքորը մերժում է անգամ հարազատներին, որոնք մեղկ կյանքի ուղին են ընտրում: Գիքորի աշխարհագնահատման այս գիծը առավել ընդգծվում է ձիապատկերի հոգեբանական շերտերում: Բեռան տակ կքած ձին հասկանում է, որ ճշմարիտը իր անցած ու անցնելիք ճանապարհն է, որովհետև չնայած հարատև բեռան ծանրությանը, այն թոթափելու ցանկությանը, «պայտվելու սարսուռին և պայտվածի միամիտ գոռոգությանը», հեռուներից կանչող զամբիկի կարոտին և հովատակի վայրի հարձակումներին՝ ինքը պետք է անցնի այս մեծ աշխարհի մեջ իր բաժին ճանապարհը, իրեն սահմանված տարիների ընթացքը ստեղծողի, արարողի օրհնանքով լեցուն պետք է լինի:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ ուսուցիչը, «երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդի օգնությամբ կառուցելով իր վերլուծական խոսքը, ձիապատկերները դիտարկելով որպես բանալի կառույցներ, պետք է դրանց միջոցով բացի կողպեքը՝ ծմակուտյան աշխարհի կենսափիլիսոփայությունը, որը, շաղախված գյուղական կենցաղի ճշմարիտ գույներով, դառնում է մաթևոսյանական պատումի գեղագիտական ատաղձը:

«Երեք բանալի և մեկ կողպեք» ուսուցման ժամանակակից մեթոդը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային ուսումնասիրությանը: Աշակերտները կարո-

ղանում են ամբողջական նյութը ելակետային հարցադրումներով տարանջատել և դրանց միջոցով ձեռք բերել գեղարվեստական պատկերի գեղագիտական առանձնահատկությունները բացահայտելու հմտություններ: Նրանց մոտ զարգանում են վերլուծական մտածողությունը և հետաքրքիր եզրահանգումներ կատարելու կարողությունները [3]:

### **Օգտագործած գրականության ցանկ**

1. Աղաբեկյան Կ., Հրանտ Մաթևոսյան, Ծմակուտի վիպասը, ԵՂՀ հրատ., Եր., 1988:
2. Գաբրիելյան Վ., Դիտարկումներ գրականության ճանապարհին, Եր., ԵՂՀ հրատ., 2018:
3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, «Էր. Ֆ. Էբերտ հիմնադրամ», 2020:
4. Մաթևոսյան Հ., Երկեր, հ.1, Երևան, 1985:
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008:

### **«ТРИ КЛЮЧА И ОДИН ЗАМОК»: ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ**

**Арзуманян Армению**  
*ЕГУ, Армения*

#### **Аннотация**

**Краткое введение.** В данной статье мы попытались показать различные подходы к применению рассматриваемого метода «трех ключей и одного замка», связанные с характером изучаемого материала и возрастной группой учащихся. Свообразные особенности применения метода проявились при анализе литературных произведений, включенных в школьную программу армянской литературы.

**Ключевые слова и словосочетания.** Сравнительно-аналитическое мышление, идеологические задачи, биофилософские слои, средства иконописания.

**Проблема исследования:** выявить особенности применения трех ключей и одного замка современного метода обучения, преимущества метода как интересной формы обучения: возможность более глубокого анализа материала, систематизация и обобщение прошедшего материала, обобщение знаний.

В методической литературе есть ряд научных исследований, посвященных вышеуказанной проблеме: «Современные методы обучения, приемы, упражнения», Лорийский филиал, г. Ванадзор, 2008 г., «Эффективные приемы обучения», С. Хачатрян, Фонд Эр. Ф. Эберт, Армения, 2020 г., Филиал Лори, г. Ванадзор, 2008 г., «Эффективные приемы обучения», С. Хачатрян, фонд Эр. Ф. Эберт, Армения, 2020 г., Вальмон, Бт, «Технология для обучения грамоте и обучение». Нью-Йорк. Компания Хоутон Миффлин, 2006 г., Эллинг Р.И Каннингем П. «Классные комнаты, которые работают». Бостон, Элли и Бэкон, 2004 г.

Вышеупомянутые авторы пытались по-своему представить особенности, присущие современным методам обучения, особенности применения.

**Цель статьи:** с интересными наблюдениями выявить сущность вышеуказанного метода, принципы обучения материала данным методом, указав и обосновав преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода преподавания, особенности, вытекающие из цели обучения.

**Новизной исследования** является рассмотрение различных подходов к применению современного метода обучения трех ключей и одного замка. Впервые были проанализированы различные подходы к применению метода, обусловленные обучаемым материалом, с акцентом на их эффективность, преимущества.

#### **Список использованной литературы**

1. Агабекян К., Г. Матевосян, "Повесть Цмакута", Ереван, 1988.
2. Габриелян В., Наблюдения по пути литературы, Ереван, пр. ЕГУ, 2018.
3. Хачатрян С., "Эффективные приемы обучения, "Фонд Эр. Ф. Эберт", 2020.
4. Матевосян Г., Сочинения, № 1, Ереван, 1985.

### THREE KEYS AND ONE LOCK FEATURES OF THE APPLICATION OF THE MODERN TEACHING METHOD

Arzumanyan Armenuhi  
YSU, Armenia

#### Summary

**A brief introduction.** In the article entitled "Three keys and one lock features of the application of the modern teaching method", we tried to show different approaches to the application of the method related to the nature of the material being taught and the age group of students. The peculiar features of the application of the method were made visible on the basis of the analysis of literary works included in the school curriculum of Armenian literature.

**Keywords and phrases.** Comparative-analytical thinking, ideological tasks, biophilosophical layers, means of icon painting.

**The problem of the research** is to identify the features of the use of three keys and one lock of the modern teaching method, the advantages of the method as an interesting form of learning: the possibility of a deeper analysis of the material, systematization and generalization of the past material, generalization of knowledge.

Անժխտելի է, որ հասարակության զարգացումն ու առաջընթացը պայմանավորված են նաև բնակչության առողջության մակարդակով: Ուստի անհրաժեշտ է պարզել, թե ինչ դերակատարություն ունի մանկավարժական վալեոլոգիան ոչ միայն մարդու դաստիարակության և ուսուցման, այլև հասարակության առողջության պահպանման ու բարելավման գործում: Առողջության մասին գիտելիքների փոխանցումը մարդկանց դեռևս չի նշանակում, որ դրանց հետևելով՝ նրանք առողջ կենսակերպ կվարեն: Դրա համար անհրաժեշտ է մարդու մոտ ստեղծել կայուն շարժառիթ առողջության, առողջության մշակույթի ձևավորման համար: Իսկ դա անհրաժեշտ է ձևավորել դեռևս նախադպրոցական տարիքից և առավել հիմնավոր տեսական և գործնական գիտելիքների շարունականությունն ապահովել հանրակրթության ոլորտում:

Այսօր պետության կողմից երեխաների առողջության պաշտպանության իրավունքի ճանաչումը, որը ամրագրված է ինչպես միջազգային տարբեր պայմանագրերում ու հռչակագրում, այնպես էլ ազգային օրենսդրության մեջ, պետությանը պարտավորեցնում է դեռահասներին տրամադրել տեղեկություններ ու կրթական ծառայություններ իրենց առողջության պահպանման ու բարելավման վերաբերյալ: Այս գործընթացում բացառիկ դերակատարություն ունի մանկավարժական վալեոլոգիան, որը զբաղվում է աճող սերնդի առողջության և առողջ սպրելակերպի մշակույթի ձևավորմանն ուղղված ուսուցման և դաստիարակության հարցերով, առողջարարական ժամանակակից տեխնոլոգիաների ուսուցմամբ ու կիրառմամբ, մանկավարժական-մեթոդական այն զինանոցի կիրառման խնդիրներով, որոնք էականորեն ուղղված են երեխայի ֆիզիկական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը, առողջության պահպանմանը, անձի համակողմանի զարգացմանը սոցիալականացման համատեքստում:

Մանկավարժական առողջագիտությունն ինքնուրույն ոլորտ է, ուստի սովորողների առողջության պահպանման ու ամրապնդման, առողջությունը որպես արժեք դիտարկելու և կարևորելու, պատասխանատու վարքագիծ ձևավորելու նպատակով կա-

րևորում ենք կրթության համակարգի բոլոր մակարդակներում իրականացվող նպատակաուղղված, հետևողական ու համալիր կրթադաստիարակչական աշխատանքների իրականացումը: Այսօր առավել, քան երբևէ, առողջ ապրելակերպ վարելու դպրոցականների պատրաստականությունն ապահովելու համար յուրաքանչյուր տարիքային շրջանում անհրաժեշտ է նպատակաուղղված ձևավորել գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետումը խթանող պահանջմունքներ ու շարժառիթներ, որոնք թույլ կտան ինքնուրույնաբար օգտվել առողջ ապրելակերպի տեխնոլոգիաներից, արժևորել առողջության դերն անձի ձևավորման ու սոցիալականացման գործում:

**Բանալի բառեր:** Առողջ ապրելակերպ, վալեոլոգիական մշակույթ, վալեոլոգիական դաստիարակություն, վալեոլոգիական վարքագիծ, թերշարժունություն, ՏՏՏ վնասակար ազդեցություն (հեռախոս, համակարգիչ), վալեոլոգիական կրթություն:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Հիմնախնդրի վերաբերյալ խոր և համապարփակ ուսումնասիրությունները (Մինասյան Ս. Ս., Թումանյան Գ. Ս., Կարապետյան Ի. Կ., Բրեխման Ի. Ի., Դուբրովսկի Վ. Ի. և ուրիշներ) փաստում են, որ նշված հիմնախնդիրը արդիական հնչեղություն ունի և պահանջում է ժամանակին բնորոշ նորովի մոտեցում՝ կիրառելով դրանց լուծման իրավիճակային մոտեցումներ և արդյունավետ ուղիներ:

**Հիմնախնդրի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել երեխայի առողջության և ժամանակակից տեխնոլոգիաների փոխադարձ կապը՝ բացահայտելով վերջիններիս վնասակար ազդեցության հետևանքներն ու կանխարգելման ուղիները:

**Հետազոտության նորույթ:** Նորովի մեկնաբանվել ու վերլուծվել է սովորողների առողջության և ՏՏՏ-ների փոխադարձ կապը մանկավարժական առողջագիտության, վալեոլոգիական կրթության, վալեոլոգիական մշակույթի, վալեոլոգիական վարքագծի ձևավորման տեսանկյունից:

**Հիմնական նյութի շարադրանքը:** 21-րդ դարը բնորոշվում է բնակչության հիվանդության և մահացության աճով, «քաղաքակրթության հիվանդություններով»՝ ալերգիա, հիպերտոնիա, շաքարախտ, ներոզ, այսօր արդեն մի նոր վարակ ևս՝ թագավարակ, որոնք մեր օրերում մարդկության և յուրաքանչյուր ազգի առջև ծառայած կարևորագույն խնդիրներից են: «Առողջությունն այն աստիճան է հավասարակշռում կյանքի մնացած բարիքները, որ իրականում առողջ չքավորը երջանիկ է հիվանդ թագավորից» (Արթուր Շոպենհաուեր) [15]:

Իրավմամբ, առողջությունը բացարձակ արժեք է, որովհետև առանց առողջության չկա ոչինչ, և եթե կա առողջություն, ապա կա ամեն ինչ: Ըստ էության, յուրաքանչյուր ոք, ով այս կամ այն արժեքի կրողն է, պատասխանատվություն է կրում այդ արժեքի համար:

«Արժեք» հասկացությունը լայն իմաստ ունի: Տարբերում ենք նյութական, հոգևոր, մնայուն, բարոյական, ազգային և համաշխարհային արժեքներ (սեր, ընտանիք, երեխա, նյութական բարեկեցություն, հոգևոր արժեքներ, ազատություն՝ խոսքի, մտքի, ընտրության և այլն): Այս ամենի բազմազանության մեջ առողջությունը դիտարկվում է գերագույն արժեք:

21-րդ դարի մարդը հակասության մեջ է իր բնության հետ: Մեզնից յուրաքանչյուրը ցանկանում է առողջ լինել՝ իր գիտելիքներին համահունչ, սակայն, երբ հերթը հասնում է գործելուն, գրեթե ոչինչ չի արվում: Սա նշանակում է, որ մարդուն պետք են ոչ միայն

տեսական գիտելիքներ առողջության, այս կամ այն հիվանդության կանխարգելման մասին, այլև անհրաժեշտ է սերմանել բարձր պատասխանատվություն սեփական անձի և առողջության նկատմամբ:

Առողջությունը կյանքի բնական, բացարձակ և կայուն արժեքներից է, որը լիարժեք կյանքի հիմնական պայմանն ու գրավականն է: Առողջության առկայությամբ են պայմանավորված տարբեր ծրագրերի իրականացումը, ծագած խնդիրների, մարտահրավերների հաջողությամբ հաղթահարումը, իսկ նրա բացակայությունը խաթարում է կյանքի բնականոն կենսագործունեությունը, կյանքի բնականոն ռիթմը: «Հիվանդությունը մի բուժիր, բուժի՜ր սեփական կյանքդ: Եթե չկա առողջություն, իմաստությունը լռում է: Եթե չկա առողջություն, արվեստը չի ծաղկում, հարստությունն անօգուտ է ու բանականությունը՝ անգոր» (Հերոդոտոս Հալիկառնասցի, Ք.ա. 5-րդ դար) [8]: Հետևաբար առողջության պահպանման ու բարելավման խնդիրը տարիքային բոլոր շրջափուլերում, ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ մեր օրերում, ժամանակի հրամայականն է ու արդիական:

Այսօր պետության կողմից երեխաների առողջության պաշտպանության իրավունքի ճանաչումը, որն ամրագրված է ինչպես միջազգային տարբեր պայմանագրերում ու հռչակագրում [9], այնպես էլ ազգային օրենսդրության մեջ [7], պետությանը պարտավորեցնում է երեխաներին տրամադրել տեղեկություններ ու կրթական ծառայություններ իրենց առողջության պահպանման ու բարելավման վերաբերյալ: Այս գործում բացառիկ է մանկավարժական վալեոլոգիայի դերը, որը զբաղվում է աճող սերնդի առողջության և առողջ ապրելակերպի ձևավորման ուղղված ուսուցման ու դաստիարակության հարցերով, որոնք ուղղված են անձի ֆիզիկական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը, անձի համակողմանի զարգացմանը սոցիալականացման համատեքստում [5]:

21-րդ դարաշրջանի դպրոցը ստանձնել է կարևոր առաքելություն՝ լուծելու անձի համակողմանի և ներդաշնակ զարգացած, ակտիվ ու պատասխանատու անձի դաստիարակության և առողջության պահպանման խնդիրը: Այսօր Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի շատ երկրներում վալեոլոգիական կրթության տարրերը ներառված են դպրոցական ծրագրի պարտադիր բաղադրիչների շարքում: Հայաստանում ևս «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակներում խրախուսվում են առողջ կենսակերպի, մշակույթի ձևավորումը, առողջ սննդի օգտագործումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները և ազգային-մշակութային ավանդույթները: Դասընթացը, խրախուսելով առողջ ապրելակերպը, քարոզում է հրաժարվել վնասակար սովորույթներից, ծխելուց, ալկոհոլից և թմրանյութերից [2], նաև նախագոյացնում վաղահաս սեռական հարաբերությունների, սեռավարակների և ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկի մասին՝ վերջնարդյունքում ընդունելով առողջությունը որպես արժեք [3]: Ի վերջո, դասընթացի ավարտին սովորողը իմանում է, որ հիվանդությունը առողջական վիճակի վատթարացման հետևանք է, որը պայմանավորված է մի շարք գործոններով.

- ❖ առողջ ապրելակերպի մասին գիտելիքների ցածր մակարդակ, ինչը կարող է ուղեկցվել թմրամոլությամբ, ալկոհոլամոլությամբ, ծխամոլությամբ, թերշարժունությամբ և այլն,

- ❖ առողջ ապրելակերպի մասին տեղեկատվության անբավարար մակարդակ,

- ❖ ֆիզիկական, մտավոր աշխատանքի անարդյունավետ և հանգստի ոչ ճիշտ կազմակերպում,

❖ ընտանիքում և աշխատանքային կոլեկտիվում բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի առկայություն և այլն:

Մրանցից յուրաքանչյուրն ունեն իրենց անմիջական ազդեցությունը սովորողների առողջ ապրելակերպի ձևավորման և առողջության պահպանման գործում, սակայն կներկայացնենք այն գործոնները, որոնք, 20-րդ դարից սկսած, որպես տեխնոլոգիական բացառիկ ձեռքբերում, իրենց հետ բերել են նաև լուրջ խնդիրներ, որոնք ուղղակիորեն ազդել են հասարակության, մասնավորապես երիտասարդ սերնդի առողջության վրա: Այսպես, 21-րդ դարն արդեն անհնար է պատկերացնել առանց համակարգչային տեխնիկայի, որը զբաղեցրել է մարդկային կենսագործունեության բազմաբնույթ ոլորտներ, անփոխարինելի դարձել աշխատավայրում, այսօր նաև արդեն երեխաների ուսուցման գործընթացում: Ինչպես իրավացիորեն նշում է ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովը, «Ժամանակակից կրթության կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում» [10, էջ 250]:

Տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում նպաստում է երեխաների ստեղծագործական ակտիվությանը, ընդհանուր զարգացվածությանը՝ խթանելով ինքնուրույնությունը: Այլ խոսքով՝ համակարգչային տեխնոլոգիան դարձել է տեղեկատվության, գործնական, աշխատանքային հաղորդակցման արդյունավետ միջոց, մինչդեռ դրական կողմերին զուգահեռ՝ չենք կարող չանդրադառնալ այն բացասականին, որով համակարգիչն ազդում է մարդու, մասնավորապես երեխաների առողջության վրա: Վերջիններիս շրջանում գերակայում է թերշարժունությունը, գրեթե բացակայում են շարժուն խաղերը՝ գերապատվությունը տալով համակարգչային խաղերին: Եվ որ ամենավտանգավորն է, անձի ձևավորման գործում գրեթե բացակայում է կարևորագույն սոցիալական պահանջմունքը՝ մարդ-մարդ հաղորդակցումը՝ իր տեղը զիջելով մարդ-տեխնիկա շփմանը: Բացի դրանից՝ համակարգիչն ունի էլեկտրամագնիսական ճառագայթման միանգամից 2 աղբյուր՝ մոնիտորը և CPU unit-ը՝ համակարգչի այն տուփը, որում գտնվում են բոլոր հիմնական հանգույցները: Համակարգչից օգտվողը զուրկ է անվտանգ հեռավորության վրա աշխատելու հնարավորությունից, նաև համակարգչի ազդեցությունը երկարաժամկետ է, ընդհուպ մինչև 12 ժամից ավել: Մինչդեռ ըստ մասնագիտական տեղեկատվության՝ 6 ժամից ավել համակարգչով աշխատանքը կարող է վնաս հասցնել առողջությանը: Հարկ է իմանալ, որ համակարգիչը ողնաշարի և բազմաթիվ օրգան-համակարգերի (շնչառական, տեսողական, սիրտ-անոթային) հիվանդությունների առաջացման աղբյուր է: Բժշկական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ համակարգչից պարբերաբար օգտվողների մոտ զարգանում են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ օստեոխոնդրոզը, տեսողության խանգարումը և այլն: Ավելին, խնդիրն առավել ակնհայտ է մանկության և դեռահասության շրջանում, երբ ողնաշարը դեռևս ձևավորման փուլում է, և համակարգչի առջև երկարատև նստելը կարող է ողնաշարի ախտաբանական կորացումների պատճառ դառնալ: Դեռահասության տարիքում գտնվող երեխաների զգալի մասը ամբողջ օրը տարված է համակարգչային խաղերով: Հատկապես վտանգավոր են կրակոցներ, բռնություն պարունակող խաղերը, որոնք հետագայում նշանակալից ազդեցություն են թողնում երեխայի էմոցիոնալ և ֆիզիկական դաստիարակության վրա՝ ձևավորելով վարքային մոդել: Ընդ որում, որոշ խաղեր հաղթահարելու ձգտումը երեխային գցում է կախվածության մեջ, ինչն էլ կարող է հանգեցնել նյարդային լարվածության, մարդ-մարդ շփման խաթարման: Նման իրավիճակում մասնագետները խորհուրդ են տալիս զբաղվել մարմնամարզությամբ, լողով, մանուալ թերապիայով, պահպանել աշխատանք-



քային ճիշտ ռեժիմ, որը թույլ է տալիս ոչ միայն կասեցնել բոլոր բացասական գործոնների ազդեցությունը, այլև ամրապնդել առողջությունը:

Ի՞նչ անել.

• աշխատանքի յուրաքանչյուր կես ժամից հետո փակել աչքերը, թուլացնել դեմքի մկանները,

- կատարել ոչ բարդ մարզանք,
- կատարել ձեռքերի և դաստակների մերսում,
- մոնիտորի էկրանն ուղղել դեպի լույսի աղբյուրը,
- մինչև 3 տարեկան երեխաներին խստիվ արգելել համակարգչից օգտվել և այլն:

Համակարգչային տեխնոլոգիաներից ոչ պակաս բջջային հեռախոսն է դարձել մեր կյանքի անքակտելի բաղադրիչներից մեկը: Բջջային հեռախոսների մասին պրոֆ. Ռ. Էյդենը գրում է. «Պատմության մեջ առաջին անգամ մենք մեր ականջին պահում ենք հզոր ռադիոհաղորդիչ, որը գլխուղեղից գտնվում է մոտավորապես 25 սմ հեռավորության վրա: Որպես կանոն, շատ քչերն են հակված բարձր հոգնելիությունը, քնկոտությունը, գրգռվածությունը, նյարդայնությունը, մրսածությունը և վիրուսային հաճախացած հիվանդությունները, գլխացավը, աչքերի սուր ծակոդ ցավերը կապել բջջային խոսակցությունների հետ» [10, էջ 253]: Ուստի բջջային հեռախոսները, ևս իրենց առաջանցիկ նշանակությամբ հանդերձ, ունեն բացասական մի շարք ազդեցություններ. բջջային հեռախոսներից արձակվող ճառագայթներն անմիջականորեն ազդում են մարդու առողջության վրա՝ առաջացնելով նյարդաֆիզիոլոգիական բազմաբնույթ խանգարումներ (ականջացավ, մաշկի գրգռում, գլխացավեր, տեսողության խանգարում, սրտխառնոց և այլն): Նրանցից գեներացվող վնասակար էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության տակ մարդու մարմնում տեղի է ունենում իմունային համակարգի լարման ռեակցիա, որը նվազեցնում է մարմնի դիմադրությունը հիվանդություններին և այլ արտաքին վնասակար հետևանքներին: Բջջային հեռախոսների վնասը անհամաչափ է այլ սարքերի հետ, քանի որ բջջային հեռախոսը գործարկման պահին գտնվում է աչքերի և ուղեղի մոտ: Ավելին, այս ճառագայթահարման մակարդակը չի կարող համեմատվել այլ տեխնիկական միջոցների հետ, այսինքն՝ բջջային հեռախոսների վնասը գերազանցում է տասնյակ անգամ համակարգչի, հեռուստատեսության կամ անլար հեռախոսի վնասակար հետևանքները: Թեպետ հեռախոս արտադրողներն ամեն կերպ փորձում են հիմնավորել հեռախոսի անվտանգ ազդեցությունն օրգանիզմի վրա, սակայն կյանքն այլ բան է վկայում, իսկ մասնագետները փաստում և գիտականորեն հավաստում են հակառակը: Այսպես, չինական անկախ փորձագիտական խմբի կատարած հետազոտության արդյունքները փաստում են, որ ճառագայթումը միանշանակ վնասում է մարդու ԴՆԹ կոդը կամ այլափոխում է լյարդի արտադրած լեդին՝ դարձնելով էլ ավելի թունավոր [11]:

Վիճակագրական տվյալները [1] փաստում են, որ ժամանակակից երիտասարդության, այդ թվում՝ նաև երեխաների գերակշիռ մասն օգտվում է բջջային հեռախոսների ծառայությունից, սակայն նրանցից շատերը նույնիսկ չգիտեն, թե ինչպես կարելի է պաշտպանվել վնասակար ազդեցությունից: Այս ճառագայթումն ազդում է երեխայի ուղեղի ռիթմի վրա՝ վնաս հասցնելով իմունային համակարգին, որը գտնվում է զարգացման ու ձևավորման փուլում: Ի վերջո, բջջային հեռախոսի ճառագայթումը ապակայունացնում է մարմնի բջիջները, խաթարում նյարդային համակարգի գործառույթը, առաջացնում գլխացավեր, քնի խանգարումներ և հիշողության կորուստ: Ավելին, եթե երեխային դեռ վաղ տարիքից սովորեցնեն զրազիտորեն օգտվել հեռախոսից, ապա

վտանգի աստիճանը զգալիորեն կնվազի: Իսկ ի՞նչ է անհրաժեշտ սովորեցնել դպրոցում երեխաներին դասընթացի շրջանակներում.

➤ չպահել ականջակալը ականջի մոտ,

➤ որքան հնարավոր է, հեռախոսը հեռու պահել, որովհետև դրանով կրկնապատկվի հեռավորությունը դեպի ուղեղ, ինչը նշանակում է, որ ավեհավաքից ճառագայթած ուժը դեպի ուղեղ կնվազի 4 անգամ,

➤ հեռախոսը պահել ներքևից, որը համեմատաբար թուլացնում է ավեհավաքի ազդեցությունը,

➤ երեխային հնարավորինս ուշ տրամադրել բջջային հեռախոս, իսկ տրամադրելուց էլ ավելի ցածր կլանման տոկոսադրույք ունեցող (sar) հեռախոսներ, որոնք իջեցնում են ռիսկի բացասական ազդեցությունը,

➤ կիրառել օպտիմալ օգտագործման եղանակ՝ կրճատելով միկրոալիքային էներգիայի քանակը,

➤ խոսակցության տևողությունը չգերազանցի 1-2 րոպեն,

➤ չքնել բջջային հեռախոսի մոտ և այլն:

Ակնհայտ է, որ կրթօջախը կարող է մեծ դեր ունենալ վերոնշյալ խնդրի լուսաբանման, վալեոլոգիական նվազագույն գիտելիքների, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման գործում: Յուրաքանչյուր մանկավարժի առաքելությունն է ուսուցման և դաստիարակության նպատակն ուղղորդել առողջ, կիրթ սերունդ դաստիարակելու պատվաբեր գործին: Այս գործընթացը երկկողմանի է. մի կողմից՝ վալեոլոգիական գիտելիքներով զինված ուսուցիչներ, մյուս կողմից՝ նույն գիտելիքներով զինել աշակերտներին:

**Եզրակացություն:** Անհրաժեշտ է գիտականորեն մոտենալ առողջության հարցերին՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Մեր կյանքի անբաժան մաս կազմող համակարգչային տեխնոլոգիաների ու հեռախոսի բացասական ազդեցությունները կարող են հաղթահարվել, եթե կրթօջախներում սովորողները ստանան համապատասխան գիտելիքներ:

Անտարակույս, անժխտելի են համակարգչային տեխնոլոգիաների ներդրման և կիրառման անհրաժեշտությունն ուսուցման գործընթացում, բջջային հեռախոսների առկայությունը մեր կյանքում, սակայն անհրաժեշտ է ցանկացած հարց դիտարկել միմիայն սովորողների առողջության, նրա պահպանման ու ամրապնդման տեսանկյունից:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), Հայաստանի վիճակագրական տարեգիրք, /<http://www.armstat.am/file/doc/99504368.pdf/>:

2. Ալեքսանյան Լ., Մուրադյան Ա. և ուրիշներ, Առողջ ապրելակերպ: Ուսուցչի ձեռնարկ 8-9-րդ դասարանների համար, Եր., 2003:

3. Ալեքսանյան Լ., Մուրադյան Ա. և ուրիշներ, Առողջ ապրելակերպ: Ուսուցչի ձեռնարկ 10-11-րդ դասարանների համար, Եր., 2004:

4. Ալեքսանյան Լ., Մուրադյան Ա. և ուրիշներ, Կյանքի հմտություններ: Ուսուցչի ձեռնարկ 7-րդ դասարանի համար, Եր., 2002:

5. Աշիկյան Ա. Ա., Մանկավարժական առողջագիտության դերը սովորողների աշխատունակության բարձրացման և գերհոգնածության կանխարգելման գործում, «Կրթությունը 21-րդ դարում», Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, Եր., 2020, թիվ2 (4), էջ 183:

6. Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդական հիմունքները հանրակրթական դպրոցում: Ուսումնական ձեռնարկ՝ երկու մասով, I մաս, Եր., 2015, էջեր 31-40:
7. «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենքը, 1996, 27.06, Հոդված 7:
8. Կրկյաշարյան Ս., Պատմահայր Հերոդոտոսը, Պատմություն ինը գրքից, Եր., 1986:
9. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, 1989, 20 նոյեմբեր, Հոդված 6, 24:
10. Մինասյան Ս. Ս., Ադամյան Ծ. Ի., Առողջագիտություն: Դասագիրք բուհի համար, Եր., 2008, էջ 74:
11. Քոլին Քեմփբել, Չինական հետազոտություն, Առողջության մասշտաբային հետազոտության արդյունքներ, Չինաստան-Քորնել-Օքսֆորդ նախագիծ, 1998:
12. Гончаров Т.А., Мельник А.М., Здоровье-смолоду, Казан, 1987, 144 с.
13. Дубровский В. И., Валеология: Здоровый образ жизни: Уч. Для вузов /предисл. Агаджанян Н. А./, Изд. 2-\*-\*е, Серия, 2001, 33.
14. Кураев Г.А., Войнов В.Б., Валеология: словарь терминов, Ростов-на-Дону, 2002, 90 с.
15. Шопенгауэр А., Большая Советская энциклопедия, под. Ред. А.М. Прохорова-3-е изд., М., 1969.

## СОВРЕМЕННЫЕ ТЕХНОЛОГИИ И ЗДОРОВЬЕ ЧЕЛОВЕКА

**Ашикян Арменуи**  
*ЕГУ, Армения*

### Аннотация

**Краткое введение.** Современные научно-технические, промышленные, экономические прогрессы, беспрецедентное развитие ИТ и неотъемлемая составляющая общественной жизни, кажется, должны были способствовать развитию цивилизации и резкому улучшению жизненного уровня человечества. Между тем, в действительности, на пути этих беспрецедентных подъемов и бурного развития человека столкнулся с рядом проблем и вызовов, нарушающих его жизнь, здоровье, нормальную жизнедеятельность, которые заслуживают внимания и требуют соответствующего отношения к ним и их решения.

Поэтому необходимо выяснить, какую роль играет педагогическая валеология не только в воспитании и обучении человека, но и в деле сохранения и улучшения здоровья общества. Для этого необходимо создать у человека стабильную мотивацию для сохранения здоровья, для формирования культуры здоровья. А это необходимо сформировать еще с дошкольного возраста и обеспечить последовательность теоретических и практических знаний в сфере общего образования.

Во все времена молодежь и безопасность находятся в центре внимания. Вообще, уважение к каждому человеку начинается с отношения общества к ребенку. Любящее детей общество заботится об обеспечении и сохранении их здоровья, создавая условия для полноценного воспитания, развития и проявления их способностей. Следовательно, для урегулирования и претотвращения этой проблемы требуется комплексный подход со стороны всех заинтересованных структур.

Сегодня признание государством права на защиту здоровья детей, закрепленного как в различных международных договорах и декларациях, так и в национальном законодательстве, обязывает государство предоставлять подросткам информацию и образовательные услуги по охране и улучшению их здоровья. Исключительную роль в этом процессе играет педагогическая валеология. Она занимается вопросами обучения и воспитания подрастающего поколения, которые направлены на формирование культуры здоровья и здорового образа жизни, на обучение и применение современных оздоровительных технологий, проблемами применения того педагогически-методического арсенала, который существенно направлен на удовлетворение физических и духовных потребностей ребенка, сохранение его здоровья, всестороннее развитие личности в контексте социализации.

Более того, мероприятия, направленные на укрепление здорового образа жизни, являются лучшим вкладом в общеобразовательную школу, а также в здоровье населения, и, как результат, положительно сказываются на экономическом благосостоянии страны. С целью формирования ответственного поведения мы придаем важность осуществлению целенаправленных, последовательных и комплексных учебно-воспитательных работ на всех уровнях системы образования. Сегодня, как никогда, для обеспечения готовности школьников вести здоровый образ жизни в каждом возрастном периоде необходимо целенаправленно формировать требования и мотивы, стимулирующие владение знаниями, способностями и навыками, которые позволят самостоятельно пользоваться технологиями здорового образа жизни, достойно оценивать роль здоровья в формировании и социализации личности.

## Список использованной литературы

1. Конвенция ООН "о правах ребенка", 1989г., 20 ноября, статья 6, 24.
2. Закон РА "О праве ребенка", 1996, 27.06, статья 7.
3. Ашикян А. А. "Роль педагогической санации в повышении работоспособности учащихся и предотвращении переутомления», "образование в 21-м веке", научно-методический международный рецензируемый журнал, N2(4) Ереван 2020, стр. 183
4. Алексанян л., Мурадян А. и другие, навыки жизни, пособие для учителя для 7-го класса, Ереван 2002.
5. Алексанян л., Мурадян А. и другие, здоровый образ жизни. Пособие для учителей для 8-9 классов, Ереван, 2003,
6. Алексанян л., Мурадян А. и другие, здоровый образ жизни. Пособие для учителей для 10-11 классов, Ереван, 2004,
7. Учебно-методический учебный комплекс в общеобразовательной школе.:
8. Гончаров Т. А., Мельник А. М., здоровье-смолоду, Казань, 1987, 144 стр. ,
9. Минасян С. М., Адамян Ц. И., здравоохранение, учебник для вуза, Ереван, 2008, стр. 74.
10. Дубровский В. С., Валеология: здоровый образ жизни: обучение должно быть часто. Для вузов / предисл .Агаджанян Н. А./ , Поп. 2 - \* - е.серия: 2001, 33:
11. Курайев г. а. В. Б., Валеология-словарь терминов, Ростов-на-Дону, 2002, 90 стр.

## MODERN TECHNOLOGIES AND HUMAN HEALTH

Ashikyan Armeni  
YSU, Armenia

### Summary

**Brief introduction:** Today's scientific, technical, industrial, economic progress, unprecedented development of IT and an integral component of public life, it seems, should have contributed to the development of civilization and a sharp improvement in the standard of living of mankind. Meanwhile, in reality, on the path of these unprecedented rises and rapid developments, a person has faced a number of problems and challenges that disrupt his life, health, normal life, which deserve attention and require appropriate attitude and solutions.

Therefore, it is necessary to find out what role pedagogical valeology plays not only in the upbringing and training of a person, but also in preserving and improving the health of society. To do this, it is necessary to create a stable motivation for health in a person, for the formation of a health culture. And this needs to be formed from preschool age and ensure consistency of theoretical and practical knowledge in the field of general education.

At all times, youth and safety are in the spotlight. In general, respect for every person begins with the attitude of society towards the child. A society that loves children takes care of ensuring and preserving their health, creating conditions for full-fledged upbringing, development and manifestation of abilities. Therefore, to resolve and prevent this problem requires a comprehensive approach from all interested structures.

Today, the State's recognition of the right to protect children's health, enshrined in various international treaties and declarations, as well as in national legislation, obliges the State to provide adolescents with information and educational services to protect and improve their health. Pedagogical valeology plays an exceptional role in this process, it deals with the issues of education and upbringing of the younger generation aimed at forming a culture of health and a healthy lifestyle, training and the use of modern health technologies, the problems of applying those pedagogical and methodological Arsenal that are significantly aimed at satisfying the physical and spiritual needs of the child, maintaining health, comprehensive personal development in the context of socialization.

Moreover, measures aimed at strengthening a healthy lifestyle are the best contribution to general education schools, as well as to the health of the population, and, as a result, have a positive impact on the economic well-being of the country. In order to form responsible behavior, we attach importance to the implementation of targeted, consistent and comprehensive educational work at all levels of the education system. Today, more than ever, in order to ensure the readiness of schoolchildren to lead a healthy lifestyle in each age period, it is necessary to purposefully form requirements and motives that stimulate the possession of knowledge, abilities and skills that will allow them to independently use healthy lifestyle technologies, adequately estimate the role of health in the formation and socialization of personality.

## References:

1. The UN Convention "on the rights of the child", 1989 November 20, article 6, 24.
2. The RA law "On the right of the child", 1996, 27.06, article 7.
3. Alican A. A. "the Role of pedagogical rehabilitation in improving the health of students and the prevention of overwork", "education in the 21st century", scientific-methodical international peer-reviewed journal, N2(4) Yerevan, 2020, p. 183
4. Aleksanyan L., Muradyan A. and others, life skills, teacher's manual for the 7th grade, Yerevan 2002.
5. Aleksanyan L., Muradyan A. and others, healthy lifestyle. Manual for teachers for grades 8-9, Yerevan, 2003,
6. Aleksanyan L., Muradyan A. and others, healthy lifestyle. Handbook for teachers for grades 10-11, Yerevan, 2004,
7. Educational-methodical complex in secondary school.
8. Goncharov, T. A., Miller, A. M., and health in his youth, Kazan, 1987, p. 144 ,
9. Minasyan S. M. Adamyan, I. Q., health, a textbook for University, Yerevan, 2008, p. 74.
10. Dubrovsky, V. S., Valeology: healthy lifestyle: training should be often. For universities / preface .Aghajanyan N. A./, Pop. 2 - \* - E.series: 2001, 33:
11. Kurayev G. A. V. B., Valeology-dictionary of Terms, Rostov-on-Don, 2002, 90 p.

*Материал был представлен и отправлен на рецензию: 28.09.2021*

*Принято к публикации 30.10.2021*

*Рецензент: канд пед. наук, канд.пед. наук, доцент Лусине Айрапетян*

*The material was submitted and sent to review: 28.09.2021*

*Was accepted for publication: 30.10.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Lusine Hayrapetyan*

37.012

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՏՐՈՊՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ «ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

**Ղազարյան Արևիկ**

*Երևանի պետական համալսարան,  
Հայաստան*

**Համառոտ ներածական:** Յուրաքանչյուր գիտաճյուղի զարգացման համար անհրաժեշտ են ձևավորման նախադրյալներ, որոնք տարբեր մեթոդաբանական հիմքեր ունեն: Մանկավարժական անտրոպոլոգիական մտքի զարգացման նախադրյալները ձևավորվել են հայ ժողովրդի բնահյուսության մեջ: Դրանք հնարավորություն են տալիս տեսնելու, թե զարգացումը ինչ ընթացք է ունեցել, կանխատեսելու զարգացման հեռանկարները:

**Բանալի բառեր:** Մանկավարժական անտրոպոլոգիական օրինաչափություններ, ամբիվալենտություն, գիտաճյուղի զարգացման նախադրյալներ:

**Հիմնախնդիրը:** «Մասնա ծոեր» դյուցազնավեպի վերլուծությունը մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ հնարավորություն կտա հիմնավորելու, որ այս գիտաճյուղի մտքի ձևավորման նախադրյալներն առկա են նաև հայ ժողովրդի բնահյուսության մեջ՝ ձևավորելով համամարդկային և ազգային արժեքներ, դաստիարակչական մոդելներ, որոնք անգնահատելի դերակատարում կունենան մանկավարժական անտրոպոլոգիական մտքի հետագա զարգացման վրա:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտություններ:** Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունները իրականացվել են մանկավարժության երիտասարդ գիտաճյուղերի՝ մանկավարժական մարդաբանության (Բիմ-Բադ Բ., Մակսակովա Բ., Մալյակովա Ն., Օզուրցով Ա.), մշակութային մարդաբանության (Դորբենկո Բ., Օրլովա Է., Կրուկլին Բ., Պոմիեշինսկի Ա.), մանկավարժական արտելոգիայի (Սլաստենին Վ., Չիժակով Գ., Կոնդակով Ա., Գուդաչեկ Յ., Մարդյան Ռ.): շրջանակներում: Վերլուծելով և համադրելով տարբեր մոտեցումներն ու կարծիքները՝ կարելի է ասել, որ ցանկացած նոր գիտաճյուղի նախադրյալները կարելի է գտնել ժողովրդական բանահյուսության մեջ: Ընդհանուր մարդաբանական օրինաչափություն է բոլոր ժողովուրդներն ունեն դյուցազնավեպեր:

**Նոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ վերլուծել «Մասնա ծոեր» էպոսը, որը, հայ ժողովրդի սոցիալական անձնագիրը լինելուց բացի, նաև կենսաբանական ծրագիրը ներկայացնող գոյապահպանական էվոլյուցիա է էպոսի համապատասխան ճյուղերով, զարգացման ընթացքով:

**Հետազոտության նորույթը:** «Մասնա ծոեր» էպոսը ներկայացվել է մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցմամբ՝ փաստելով, որ էպոսում առկա են գիտաճյուղի ձևավորման նախադրյալները:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Հայ իրականության մեջ առկա են բոլոր նախադրյալները նոր գիտաճյուղի՝ մանկավարժական անտրոպոլոգիայի ձևավորման և զարգացման համար: Ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես ժողովրդական հեքիաթները, բալլադները, դյուցազնավեպը՝ էպոսը, ամբարում են տարբեր գիտաճյուղերի զարգացման համար արժեքավոր մոտեցումներ և գաղափարներ: Մարդկության ֆիլոգենետիկ զարգացման ընթացքում տարբեր ժողովուրդների դաստիարակչական համակարգում ձևավորվել են համանման էպոսներ բնության, շրջապատող աշխարհի ճանաչողության, մարդկային փոխհարաբերությունների ձևավորման և զարգացման, դաստիարակչական մոդելների, երազանքների, կանխատեսվող արդյունքների վերաբերյալ: «Մարդկությունը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ընտրությունն անհրաժեշտ է, հետևանքը անխուսափելի: Այսօրվա սխալը կարող է լինել անուղղելի, այսօրվա մեղքը՝ մահացու: Ուստի ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների անկասելի թվացող շարունակական առաջընթացն այսուհետ պետք է իրականացվի մարդու որպես անկրկնելի ցեղային տեսակի պահպանմանը նպատակամղված սոցիալական, իրավական և բարոյագիտական նոր նորմերի ստեղծմամբ, որոնց միջոցով պետք է վերահսկել, իսկ հարկ եղած դեպքում՝ սահմանափակել մարդու սրբության սրբոց բնությունն անհարկի արհեստական ներխուժման՝ սոցիոմշակութային իմաստով վտանգավոր փորձարկումներից, ըստ էության՝ փրկել մարդուն մարդուց» [3, էջ 33]: Մարդ բանական տեսակը զարգացում է ապրում՝ փոփոխելով սեփական բնութագիրը. «Մարդը զարգացող էակ է զարգացող աշխարհում: Նրան բնորոշ է իր շրջապատը փոփոխելու կարողությունը» [4, էջ 13]: Պատմության ընթացքում մարդը, մի կողմից, գոյամարտում է իր ինքնությունը պահելու համար, մյուս կողմից՝ փորձում որակապես փոփոխել իր շրջապատը, ապրելու մոտեցումները, այսինքն՝ ժամանակի, տարածության խնդիր, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է պատմական անտրոպոլոգիան՝ ներառելով պատմական պայմանները, արարքները, համոզումները [4, էջ 21]:

«Մասնա ծոեր» էպոսը ամբողջացնում է հայ ժողովրդի իմաստությունը. այն հայ էթնոսի սոցիալական անձնագիրն է: Ինչպես Մանուկ Աբեղյանն է գիտականորեն հիմնավորում «Հայ ժողովրդական վեպ» ուսումնասիրության «Հեքիաթ և վեպ» ենթա-

գլխում, էպոսում մեր առաջ ծավալվում են և՛ հեքիաթային պյուժեներ՝ մոտիվներ, առասպելներ, և՛ դյուցազնական սխրագործություններով լի երգեր ու զրույցներ, պատմական իրական միջադեպեր [2, էջ 27-32]:

Մեր էպոսը համամարդկային, **ընդհանուր** օրինաչափության հենքի վրա ձևավորում է **յուրահաստուկը**՝ հայ ազգին բնորոշ, որից հետո **եզակին**՝ տվյալ անձին բնութագրող: ...Հրաշք է կատարվում. կյանքի աղբյուր համարվող Մարութա Բարձրիկ Սուրբ Աստվածածինը Սանասարին է հանձնում Թուր Կեծակին (կայծակնային սուր) և Քուռկիկ Ջալալին: Առասպելական ձևն ուներ աննկարագրելի արտասովոր հատկություններ, մարդկային լեզվով խոսելուց բացի՝ նաև կարողանում էր անձայրածիր ճանապահներ անցնել և թռչել մինչև արեգակ: Կենսատու ջրերում Սանասարը ձեռք է բերում նաև անխոցելի զենք ու զրահ, իսկ բազուկի վրա դրոշմվում է յուրօրինակ մի խաչ: Ծովի ջուրը Սանասարին դարձնում է իրական մի հսկա [1]: Հերոսները գոյապայքար են մղում իրենց զարմի շարունակության համար: Այդ հերոսներն օժտված են գերբնական ուժով, կրակոտ ու շիտակ բնավորությամբ, չարը կործանելու և բարին հաստատելու վճռականությամբ: Նրանք ներկայացնում են հորից որդի արյունակցական կապ և անձնուրացորեն կոչվում են հանուն իրենց երկրի անկախության: Բնորոշ է, որ Սանասարն ու Բաղդասարը նախ տներ են կառուցում իրենց մոտ բնակություն հաստատած աղքատ ընտանիքների համար, ապա՝ կառուցում Մասնաբերդը: Կամ՝ Մեծ Մհերը, գոտեմարտի մեջ մտնելով առևտրական բանուկ ճանապարհի վրա հայտնված առյուծի հետ, սպանում է գազանին և փրկում Սասունը սովի վտանգից: Ուշագրավ է նաև նույն Պղնձե քաղաքում Քառասուն-Ճյուղ-Ծամի ազատագրման համար նրանց մղած կռիվը: Սանասարը ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Սակայն դա նրան հեշտությամբ չի հաջողվում, որովհետև աղջիկը բանտարկված է ծովում նստած նույն մահվան ուժի վիշապի և վերջինիս երկվորյակ թագավորի կողմից, որն աղջկա հայրն է համարվում: «Այդտեղ փակված աղջիկը,– գրում է Մ. Աբեղյանը,– նույն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը հափշտակել է» [2, էջ 27-28]:

«Մասնա ծոերի» բոլոր չորս ճյուղերը շաղկապվում են իրար՝ իբրև մեկ ընդհանուր և ամբողջական հորինվածք՝ ընդգծելով այն պատմական իրողությունը, թե արաբական բռնապետության դեմ հայության ազատագրական պայքարը շարունակել են մի քանի սերունդներ: Այսպիսի տրամաբանական զարգացող օրինաչափությունների շղթան մանկավարժական անտրոպոլոգիայի գերակա հիմնախնդիրներից մեկն է, որտեղ դրսևորվում է ընդհանուրի, յուրահաստուկի, եզակիի մանկավարժական անտրոպոլոգիական օրինաչափությունների դիալեկտիկան: Դավիթը աճում էր ժամով և վայրկյանով՝ դրսևորելով հայ դյուցազուն նախնիներին բնորոշ գծերը [1]:

Չանդրադառնալով էպոսի բազմաբնույթ գործառնություններին, առանձնահատկություններին և գոյապահպանական ակունքին, որի մասին բազմիցս խոսվել է տարբեր գիտությունների շրջանում, փորձենք ներկայացնել «Մասնա ծոեր» էպոսը մանկավարժական անտրոպոլոգիական կողմով: Մանկավարժական անտրոպոլոգիական տեսանկյունից տարբեր ժողովուրդների էպոսները սոցիալ-հոգեբանական, արժեքային, իմացական միջավայր են, որտեղ մարդ տեսակը, ունենալով համապատասխան գենետիկական կոդով պայմանավորված կենսաբանական ծրագիր, Սասուցի Դավթի միջնորդավորված կերպարի օգնությամբ տեսական մակարդակում հնարավոր հարմարման մեխանիզմներ է ձեռք բերում՝ սոցիալական ծրագիրը դրսևորելու համար: Էպոսում կենսաբանական ծրագիր-սոցիալական ծրագիր-պատմամշակութային ծրագրերի եռամիասնական դիալեկտիկական ամբողջության քննարկումը նույնպես մանկավարժա-

կան անտրոպոլոգիական հիմնախնդիր է, որտեղ էպոսների հերոսները ապագայում կանխատեսվող դաստիարակչական մոդելում ազատագրական պայքարի, հայի հպարտ անկոտրում կամքի, հզոր բազկի, ազնվության, ապրումակցման որակների արտահայտման սոցիալական ազենտներ են: Յուրաքանչյուր ազգային դյուցազնավեպ սոցիալական, ուսուցողական, դաստիարակչական իրավիճակային մոդել է, որում շեշտադրվում են տվյալ ազգին բնորոշ մշակութային նրբերանգային գույները, կոլորիտը, ազգային առանձնահատկությունները, հոգեկերտվածքը, վարքագծային, դաստիարակչական, հաղորդակցական մոդելները, ապագան կանխատեսելու հնարավոր տարբերակները: Գլխավոր հերոս Դավթի կերպարում անհատական զարգացման ընթացքում դրսևորվում է զարգացման շարժիչ ուժերի ամբիվալենտությունը, որը մանկավարժական անտրոպոլոգիայի տեսանկյունից նույնպես առանցքային հիմնախնդիրներից է, որը հնարավորություն է տալիս ընտանեկան, սեռային, դերային, մշակութային սոցիալականացում ապահովելու: Կքննարկենք երեք խումբ մանկավարժական անտրոպոլոգիական խնդիրներ:

Վերլուծության համար ընտրել ենք դյուցազնավեպը, քանի որ հայ իրականության մեջ այն առավելագույնս բնութագրում է հայ ազգի հավաքական կերպարը, մտածողության, վարքագծային առանձնահատկությունները, օրհասական պահերին իրավիճակ գտնելու, հպարտությամբ ազատ ապրելու, պետական մտածողության անձնուրաց դրսևորումները: Երբ քննարկում ենք ընդհանուր-հատուկ- եզակիի օրինաչափությունները, ապա ընդհանուր օրինաչափությունները վերլուծելիս նկատում ենք՝ բոլոր ժողովուրդներն ունեն էպոսներ. դա համընդհանուր օրինաչափություն է, որը ապացուցում է բանական մարդու ֆիլոզոֆիկ զարգացման մասին, որի ժամանակ փոխանցվում են կենսաբանական կոդում ամրագրված համամարդկային հատկանիշները՝ խոսելու կարողություն, մտածելու ունակություն և ուղղաձիգ կեցվածք, որոնց դրսևորման հիմքում բնություն-մարդ-դաստիարակություն բարդ գործառական համակարգն է: Ընդհանուրից հատուկին անցման ընթացքում բնութագրական չափանիշները բարձրանում են մի նոր մակարդակ, որտեղ շեշտադրվում են ազգային գործոնը, արժեքային համակարգը, ինչպես, ասենք, Դավթի կերպարում, որում դրսևորվում են ոչ միայն հայ ազգին բնորոշ անատոմիաֆիզիոլոգիական հատկանիշները, արժեքային համակարգը, այլև վարքագծային դրսևորումները, հոգեբանությունը, մտածողության տիպաբանությունը, և այս մակարդակում, բացի նախորդ բնություն-մարդ-դաստիարակություն համակարգից, ավելանում է նոր ենթահամակարգ՝ մշակույթը՝ իր ուղղահայաց և հորիզոնական ծածկույթով: Մշակութային մակարդակում էպոսի գլխավոր հերոսները ձեռք են բերում նոր որակներ, որոնք տիպական են միայն տվյալ ազգին: Անտրոպոլոգիական յուրօրինակ խնդիրներ են առաջանում, երբ ազգային մակարդակում շեշտադրվում է մարդու զարգացման եզակի օրինաչափությունը, որը հնարավորություն է տալիս նկատելու կոնկրետ տիպական հերոսին կոնկրետ իրավիճակում՝ թշնամու թրի տակով չանցնելիս, մենամարտելիս, իմաստուն մեծերի հետ գրույցների ընթացքում:

Ծովից բխող աղբյուրից խմած երկու բուռ ջրից Ծովինարը հղիանում է և ծնում երկվորյակ դյուցազուններ: Ջուրը դառնում է ժառանգորդային կարևոր սկզբունք. Սանասարն իր դյուցազնական գորությունը, հրեղեն ձին, Թուր Կայծակին ձեռք է բերում ծովի հատակից՝ այնտեղ բխող Կաթնաղբյուրից ջուր խմելով, երկվորյակներն իրենց տունը շինում են հզոր արվակի ակունքի վրա, ունենում հզոր ժառանգ:

Ներկայացված եռամիասնական դիալեկտիկայում՝ ընդհանուր- հատուկ- եզակի, դրսևորվում է զարգացման շարժիչ ուժերի ամբիվալենտությունը, որոնք էպոսի տար-



բեր ճյուղերում նկատվում են երկու շերտերում՝ **ամբողջական** և **կոնկրետ** հերոսների նկարագրում, նրանց ստանձնած սոցիալական դերով, վերապահված առաքելությամբ համապատասխան իրավիճակում: Ամբիվալենտ գույգերի ընտրությամբ պայմանավորված՝ կան, օրինակ, բարին ու չարը, խելոքն ու հիմարը, աշխատասերն ու ծուլը, հնարամիտն ու չկողմնորոշվողը, երջանիկն ու դժբախտը, դրականն ու բացասականը, ուրախն ու տխուրը, հաջողակն ու անհաջողակը, թշնամին ու բարեկամը: Որքան ավելացնում ենք որակական բնութագրիչները, այնքան կոնկրետանում են հերոսների ամբողջական կերպարները: Սակայն էպոսում տարբեր բարի հերոսներ դրսևորում են վարքագծային էպետ տարբերվող գծեր, ինչն էլ իր հերթին կոնկրետանում է համապատասխան դաստիարակչական մոդելում: Կոնկրետ դաստիարակչական մոդելում տեսանելի են դառնում հերոսների մտածողության, բնավորության գծերի, վարքագծերի առանձնահատկությունները: Էպոսի բոլոր ճյուղերում կան ընդհանուր օրինաչափություններ:

1. Գաղափարական ուղղվածությունից կախված, նպատակից ելնելով՝ յուրաքանչյուր իրավիճակում առաջարկվում են հաղթահարման մեխանիզմներ կամ ապագայի նկատմամբ կանխատեսում, սակայն որպես առանցքային օրինաչափություն էպոսներն ավարտվում են դրական հերոսների հաղթանակով կամ լավատեսությամբ:

2. Դաստիարակչական, հաղորդակցական գրեթե բոլոր մոդելներում դրական հերոսների հոգեբանության մեջ գերակայում են հումանիստական ընկալումները, լավատեսությունը, նվիրումը, իր դերի գիտակցումը, հավատը ապագայի, վաղվա օրվա նկատմամբ:

3. Իրար հակադրող հերոսները սոցիալական միջավայրից միշտ ունենում են աջակցող օգնություն, գաղափարախոսվում է «ես»-ի և «մենք»-ի, «անձի» և «կոլեկտիվի» անհրաժեշտությունը, որը պարտադիր է հասարակություն անձի ինտեգրման տեսանկյունից:

4. Հերոսների վարքագծային զարգացման ընթացքը, անկախ տիպաբանությունից, գրեթե միշտ համակարգի մեջ է բնություն-մարդ-դաստիարակչական մոդել-մշակույթ: Այսպիսի դիրքորոշումը նույնպես անտրոպոլոգիական է, որը փաստում է մարդու զարգացման հիմնական մակարդակները՝ կենսաբանական, սոցիալական, մտավոր և հոգեբանական:

Վերը թվարկված օրինաչափությունները դիտարկենք կոնկրետ իրավիճակում: Օրինակ՝ էպոսի հերոսները փորձում են իրենց կարիքները հոգավ անընդհատ աշխատանքով, սակայն դժվարանում են հաղթահարել սոցիալական միջավայրի դժվարությունները. դրանց ավելանում է թշնամու զավթողական քաղաքականությունը: Ժողովրդի հույսն ու հավատը Դավիթն է, որը, ապավինելով սեփական ուժերին, վստահություն է ձեռք բերում, փորձում է իրավիճակները վերանայել, նույնիսկ սեփական պայմանները թելադրել թշնամուն՝ միաժամանակ ընդգծելով դաստիարակչական մոդելի ինքնատիպությունը՝ կովի ժամանակ առաջին զարկի իրավունքը թողնելով թշնամուն և հարգելով մեծի խնդրանքը: Մարդաբանական նախադրյալների տեսանկյունից սոցիալական միջավայրում էպոսի հերոսները շատ տարբեր են. կան դրական կերպարներ, որոնք ունեն բազմաթիվ առավելություններ՝ հաջողակ լինելու համար, բայց դժվար իրավիճակներում չեն կարողանում համապատասխան հաղթահարման մեխանիզմներ ընտրել, հստակ նպատակին հասնելու համար վեկտորիալ գիծ մշակել: Դաստիարակչական այս մոդելում, երբ սոցիալականացման ընթացքում դժվարություններ ունեցող սուբյեկտը չի գիտակցում իր սոցիալական դերը, ձախողվում է: Ոչ պակաս

դժվարություն ունեն նաև բացասական հերոսները (Մառյե, Չմշկիկ Սուլթան), որոնք էպոսում բնութագրվում են խտացված գույներով, իրենց նենգությամբ, չարությամբ, գոռոզությամբ, մեծամտությամբ, խորամանկությամբ, վախկոտությամբ: Այստեղ հաղորդակցվող շղթայական բարդ մոդելում երկուստեք հարաբերություններ են տարբեր մակարդակներում, որտեղ յուրաքանչյուր օղակ ունի իր առանձնահատկությունները և դժվարությունները: Զարգացող տրամաբանական աստիճանական կապերը նպաստում են ամբողջական համակարգի ստեղծմանը: Ուսուցանվում են այն մոտեցումները, որ յուրաքանչյուր օղակի դժվարությունները պետք է լուծել իր մակարդակում, կանխատեսել հաջորդ մակարդակի պոտենցիալը, սակայն համակարգել ունեցած ձեռքբերումները՝ վերջնական արդյունք ունենալու համար: Էպոսի մանկավարժական անտրոպոլոգիական մոտեցումը, ըստ մանկավարժական գիտությունների համակարգի, «...Մանկավարժական անտրոպոլոգիան «մանկավարժական շենքի» հենքն է...» [4, 12]: Հատկանշական է, որ գլխավոր հերոսը ճարպիկ է, խելացի, փոքր տարիքում՝ պոռթկուն, աշխատասեր, չհաճոյացող, համարձակ և առաքինի: Հաղորդակցական մոդելները արագ ստացվում են, հերոսը հստակ պատկերացնում է իր վերջնական նպատակը և մեխանիզմներ ընտրում՝ դրան հասնելու համար: Շեշտադրված է դերային սոցիալականացումը շարունակական խնդիրների շղթան հաղթահարելու և կարողությունների ձևավորման համար:

Ընկերասիրության և դավաճանության յուրօրինակ խճանկարներ է ներկայացվում. նպատակային ընտրված սոցիալական ազենտները կարող են օգնել ռիսկային իրավիճակից դուրս գալու համար: Մարդկանց հավատալը, նրանցից օգնություն ակնկալելը, դժվարությունները հաղթահարելը ընդհանուր օրինաչափություն են: Դաստիարակչական յուրօրինակ մոդելի քննարկում է, երբ ցույց է տրվում, որ միննույն ընտանիքում կարող են ձևավորվել տարբեր խառնվածքային տիպ, նյարդային համակարգեր ունեցող մարդիկ, որոնց ծնողները նրանց փոխանցել են գենետիկական նախադրյալներ, սակայն սոցիալական ծրագրերը հարմարվել են համապատասխան միջավայրի պայմաններում: Այստեղ նույնպես կա վարքագծային ամբիվալենտություն՝ հանդուրժողի ու չհանդուրժողի, բարու ու չարի, նյարդայինի ու համբերատարի, իրավիճակային մտածողի ու կոնկրետի և այլ տարբեր սոցիալական դերեր ու պայմաններ ունեցող անձանց միջև:

Լավատեսության, ոչ մի իրավիճակում հավատը չկորցնող, բարու հաղթական ուժին ապավինող, իրավիճակները հաղթահարող հերոսներից է գլխավոր հերոսը: Ապրելով ծանր պայմաններում, բայց չկորցնելով մարդկային արժանապատվությունն ու բարությունը, անգամ ամենաձանր պահերին հացը, ուրախությունը կիսելու անդադար ձգտումը՝ հնարավորություն է տալիս Դավթին դիմագրավելու սոցիալական սահմանափակումներին: Ի զարմանս մեզ՝ որքան խտացան գույները, դժվարացան կյանքի պայմանները, այնքան դրսևորվեցին անկոտորում կամքը, քաջությունը: Որդեգրած սկզբունքը իրական է, որի հիմքում հումանիստական մոդելն է, դրականը տեսնելու, ունեցածով բավարարվելու, երջանիկ լինելու և շրջապատը երջանկացնելու անսահման մեծ ձգտումը:

Կարևոր է, որ էպոսում ընտրվում է սոցիալական ընդլայնված միջավայրը, քանի որ մարդկանց մեծ ընդգրկումն ապահովում է տեղեկատվության տարածում, հռչակի և համբավի արագ տարածում: Այսպիսի մոտեցումը ժամանակին համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիա է: Էպոսում ներկայացվում է մարդկանց այն խումբը, որոնք, չունենալով կենսաբանական լիարժեք ծրագիր, սոցիալական ծրագրի հարմար-

ման արդյունքում բախտի քմահաճույքով ամեն ինչի հասնում են հաջող հանգամանքների շնորհիվ: Այս տեսանկյունից «Մանկավարժական մարդաբանությունը մի կողմից ուսումնասիրում է կյանքի իրավիճակային զարգացումները, մյուս կողմից մարդու պահանջմունքները, հետաքրքրությունները, դրդապատճառները, վարքագիծը» [6,16]: Մարդկանց իրենց վերագրվող մտացածին որակները հնարավորություն են տալիս կայանալու կյանքում՝ առանց իրենց կողմից լուրջ ջանքեր գործադրելու: Սա նման է դաստիարակող-դաստիարակվող այն մոդելին, երբ դաստիարակը դաստիարակվողին վերագրում է այն որակները, որոնք ինքն է ուզում տեսնել: Սակայն միշտ չէ, որ սոցիալական միջավայրը նպաստավոր պայմաններ է ստեղծում: Խորն է էպոսի փիլիսոփայությունը:

**Եզրակացություն:** «Սասնա ծռեր» էպոսը ոչ միայն մշակութային բացարձակ արժեք է, այլև մանկավարժական մարդաբանության տեսանկյունից յուրօրինակ սկզբնաղբյուր, որը նախադրյալներից մեկն է հայ իրականության մեջ մանկավարժական մարդաբանության գիտաճյուղի ձևավորման ու զարգացման համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Սասունցի Դավիթ, համահավաք բնագիր, Երևան, 1990:
2. Աբեղյան Ս., Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908:
3. Սողոմոնյան Գ., Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, ԵՊՀ, «Բանբեր. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016,1/19/, էջ 18-33:
4. Коджаспирова Г. М., Педагогическая антропологи, М., 2005.
5. Максакова В. И., Педагогическая антропология, М., 2004.

### ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ПЕДАГОГИЧЕСКОЙ АНТРОПОЛОГИЧЕСКОЙ МЫСЛИ В ЭПОСЕ «САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»

Казарян Аревик

*Ереванский государственный университет  
Армения*

#### Аннотация

**Краткое введение.** Для развития каждой научной отрасли необходимы предпосылки формирования, которые имеют разные методологические основы. Предпосылки развития педагогической антропологической мысли сформировались в фольклоре армянского народа. Они дают возможность увидеть, как же протекал процесс ее развития, а также прогнозировать перспективы этого развития.

**Ключевые слова:** педагогические антропологические закономерности, амбивалентность, предпосылки развития научной отрасли.

**Проблема.** Анализ эпического романа «Сасунские Удальцы» с педагогическим антропологическим подходом позволит обосновать, что предпосылки формирования мысли этой научной отрасли существуют также в фольклоре армянского народа, формируя общечеловеческие и национальные ценности, воспитательные модели, которые сыграют неопределимую роль в дальнейшем развитии педагогической антропологической мысли.

**Актуальные исследования, связанные с проблемой.** Актуальные исследования, связанные с проблемой, были проведены в рамках таких молодых научных отраслей педагогики как педагогическая антропология и педагогическая аксиология. Анализируя и сопоставляя различные подходы и мнения, можно сказать, что предпосылки любой научной отрасли можно найти в народном фольклоре. Общей антропологической закономерностью является то, что все народы имеют эпические романы.

**Цель исследования, проведенного в рамках статьи.** Целью исследования является анализ эпоса «Сасунские Удальцы» с педагогическим антропологическим подходом, который, помимо того, что является социальным паспортом армянского народа, представляет собой также эволюцию выживания, представляющую биологическую программу, с соответствующими ветвями эпоса и процессом его развития.

**Новизна исследования.** Рассматривая эпос «Сасунские Удальцы» как социальный паспорт, отражающий существование армянского этноса, он был представлен с точки зрения педагогического

антропологического подхода, утверждая, что в данном эпосе существуют все необходимые предпосылки формирования научной отрасли.

### Список использованной литературы

1. Сасунци Давид, коллективный оригинал, Ереван, 1990.
2. Абемян М., Армянский народный роман, Тбилиси, 1908.
3. Согомонян И.И. Особенности проявления современного антропологического кризиса, ЕГУ, Банбер, Философия, Психология, 2016, 1 /19/, с. 18-33.
4. Кодзаспирова Г.М. Педагогические антропологи. М., 2005.
5. Максакова В. И.З., Педагогическая антропология, М., 2004.

## PRECONDITIONS FOR PEDAGOGICAL ANTHROPOLOGICAL THOUGHT IN THE EPIC "SASNA TSRRER"

**Ghazaryan Arevik**  
Yerevan State University,  
Armenia

### Summary

**Brief introduction:** The development of each branch of science requires preconditions for formation, which have different methodological bases. The preconditions for the development of pedagogical anthropological thought were formed in the folklore of the Armenian people. They give an opportunity to see what the development process was like and to predict the development prospectives.

**Keywords:** Pedagogical anthropological patterns, ambivalence, preconditions for the development of the scientific branch.

**The problem:** The analysis of the epic novel " Sasna Tsrer " with a pedagogical anthropological approach will be substantiating that the preconditions for the formation of the discipline and the scientific mind of this branch of science exists in the folklore of the Armenian people, forming universal and national values, educational models that will play an invaluable role in future development of anthropological scientific mind.

**Up-to-date research on the issue:** Current research on the issue has been carried out within the framework of young branches of pedagogy: pedagogical anthropology, cultural anthropology, pedagogical axiology. Analyzing and combining different approaches and opinions, one comes to conclusion that the preconditions of any new branch of science can be found in folklore It is a general anthropological regularity: all nations have epic novels.

**Purpose of the research conducted within the framework of the article:** The aim of the research is to analyze the epic novel " Sasna Tsrer " with a pedagogical anthropological approach, which, in addition to being the social passport of the Armenian people, is a survival evolution representing the biological program, with relevant branches of the epic novel and their development process.

**The novelty of the research:** Considering the epic " Sasna Tsrer " as a social passport representing the existence of the Armenian ethnos, it was presented from the pedagogical anthropological aspect, stating that the epic has all the necessary preconditions for the formation of a scientific branch

### References:

1. David Sasuntsi, collective original, Yerevan, 1990.
2. Abegyan M., Armenian folk novel, Tbilisi, 1908.
3. Soghomonyan I.I., Features of the manifestation of the modern anthropological crisis, YSU, Banber, Philosophy, Psychology, 2016, 1 /19/, pp. 18-33.
4. Kodzaspirova G.M., Educational anthropologists, M., 2005.
5. Maksakova V.I.Z., Pedagogical anthropology, M., 2004.

*Материал был представлен и отправлен на рецензию: 30.09.2021*

*Принято к публикации: 28.10.2021*

*Рецензент: канд пед. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 30.09.2021*

*Was accepted for publication: 28.10.2021*

*Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyan*

378(55)

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ ԲՈՒՇԵՀՐ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Լարուի Մանսուր

*Երևանի պետական համալսարան,  
մանկ. ամբիոնի ասպիրանտ*

**Համառոտ ներածական:** Բարձրագույն կրթության համակարգը յուրաքանչյուր երկրի զարգացման և առաջադրված նպատակների իրականացման գլխավոր ենթակառուցվածքներից է, որը մշտապես կարիք ունի բարեփոխումների: Հողվածում վերլուծվել է Իրանի Բուշեհր նահանգում բարձրագույն կրթության ներկա վիճակը:

**Բանալի բառեր:** Իրանի Բուշեհր նահանգ, բարձրագույն կրթություն, կրթության կառավարում, Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարություն, Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարություն:

**Հիմնախնդիրը:** Զարգացող երկրներում, այդ թվում՝ նաև Իրանում, բարձրագույն կրթությունը հասարակության կայուն զարգացման և առաջընթացի շարժիչ ուժն է: Յուրաքանչյուր երկիր ձգտում է իր բարձրագույն կրթության համակարգը համընթաց դարձնել 21-րդ դարի սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումներին և հասարակության պահանջներին, հետևաբար Իրանի բարձրագույն կրթության համակարգի կառավարման տարբեր կողմերի ու խնդիրների ուսումնասիրությունը կարող է նպաստել նրա արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը, մասնավորապես Իրանի Բուշեհր նահանգում:

**Հողվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է լուսաբանել Իրանի Բուշեհր նահանգում բարձրագույն կրթության ներկա վիճակը:

**Հետազոտության նորայրը:** Առաջին անգամ Իրանի Բուշեհր նահանգի օրինակով ուսումնասիրվել են Իրանի բարձրագույն կրթության բարելավման ու զարգացման գործընթացները և վեր են հանվել առկա խնդիրներն ու մարտահրավերները:

**Հետազոտության վերաբերյալ գրականության վերլուծություն:** Կառավարման տարբեր մեթոդների և ոճերի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ ու հետազոտություններ են կատարվել միջազգային և իրանական մակարդակներում: Նրանց թվում նշենք՝ Ռոբերտ Հաուս, Փալ Հերսի, Քենտ Բլանչարդը, Ֆրեդ Ի. Ֆիդլեր, Աքբար Քեշավարզ, Սոհրաբ Խալիլի Շուրինի, Սեյեդ Սոհամմադ Մոդիմի: Այս գիտնականները լուսաբանել են հիմնախնդրի տարբեր կողմերը, ձևակերպել տեսական դրույթներ, առաջադրել մոդելներ, իրականացրել սոցիալաբանություններ՝ խնդիրը դիտարկելով տարբեր կառույցներում և տարբեր համախմբերում (սոցիալաբանության բազաներում):

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ներկայումս Իրանի ֆորմալ կրթության համակարգի կառավարումն իրականացնում են երեք նախարարություններ՝ ա) Իրանի կրթադաստիարակության նախարարությունը, որի ենթակայության տակ է գտնվում

հանրակրթությունը, բ) Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարությունը, որը կառավարում է բարձրագույն կրթության համակարգը, գ) Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարությունը, որը տնօրինում է բժշկական ճյուղերի ու մասնագիտությունների գծով բարձրագույն կրթության ոլորտը:

Իրանի բարձրագույն կրթության նպատակներն են.

ա. գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացում, հետազոտական ոգու խթանում, հետազոտական մտքի քաջալերում ու տարածում և գիտության արժևորման մշակույթի զարացում,

բ. երկրի կրթական, գիտական և տեխնիկական տեղի ու դիրքի բարելավում,

գ. գիտությունների, գիտելիքների, համամարդկային և իսլամական արժեքների, արվեստի, գեղագիտության և իրանական ու իսլամական քաղաքակրթական ու գիտական ժառանգության ընդլայնում և խորացում,

դ. մասնագետ կադրերի պատրաստում և մարդկային ներուժի զարգացում,

ե. տեխնիկական գիտելիքների ու հմտությունների զարգացում և հասարակության մեջ գիտական մտածողության տարածում,

է. համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների անկախության և գիտական ազատության պահպանում և ամրապնդում [5, էջ 78]:

**Բարձրագույն կրթությունն Իրանի Բուշեհր նահանգում**

Բուշեհրը Իրանի հարավային նահանգներից է, գտնվում է Պարսից ծոցի ափեզրում և ունի ավելի քան 620 կիլոմետր երկարությամբ ծովային սահման: Ռազմավարական դիրքի, նավթային խոշոր կորպորացիաների առկայության և արդյունաբերական խոշորամասշտաբ նախագծերի շնորհիվ այս նահանգն ունի տնտեսական և հեռահար կարևորություն: Հնուց ի վեր Բուշեհր նահանգը գիտության և մշակույթի օրրաններից մեկն է եղել, սակայն գրավոր հիշատակումներն ու պատմական վկայությունները կցկտուր են: Կատարված ուսումնասիրությունները բարձրագույն կրթության սկզբնավորումն այս նահանգում հիշատակում են Ղաջարական դինաստիայի իշխանության վերջին շրջանում (1899 թ.), երբ արդեն 48 տարի էր անցել Ղաջարական պալատի մեծ վեզիր Ամիր Քարիբի հրամանով Թեհրանում Դար ալ Ֆոնուն բարձրագույն դպրոցի հիմնադրումից [2, էջ 11], և Բուշեհրի և նավահանգիստների կառավարիչ նահանգապետ Միրզա Ահմադ խան Դարյա Բեյգի կողմից հիմնադրվեց Մա'ադաթ բարձրագույն դպրոցը [3, էջ 18]:

Ներկայումս Բուշեհր նահանգի համալսարանները (ինչպես երկրի բոլոր մյուս նահանգներում) գործում են Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության ենթակայությամբ: Գլխավոր բուհերն են [6, էջ 1].

• Պարսից ծոցի համալսարան. հիմնադրվել է 1991 թ. Իրանի հոգևոր առաջնորդի հրամանով Բուշեհր կատարած այցելության ժամանակ: Այս համալսարանը, գտնվելով Պարսից ծոցի մերձակայքում և այդտեղ կառուցված նավթի ու գազի արդյունաբերական ընկերության՝ «Փարս» կորպորացիայի մոտ, ռազմավարական նշանակություն ունի: Պարսից ծոցի համալսարանն ունի հինգ ֆակուլտետ.

• Ճարտարագիտական ֆակուլտետ. հիմնադրվել է 1992 թ. սեպտեմբերին, ունի մեխանիկական ճարտարագիտություն և քաղաքաշինության ճարտարագիտություն մասնագիտությունները: Ժամանակի ընթացքում նոր ճյուղեր ավելացան համալսարանում, և այսօր բակալավրիատի մակարդակում կրթություն է իրականացվում նաև ծովային ճարտարագիտության (նավաշինություն), քիմիական ճարտարագիտության և

գազի արդյունաբերության, էլեկտրոնիկայի ճարտարագիտության (կապի և հաղորդակցության) և նավթամշակման ճարտարագիտության գծով: Մագիստրատուրայի մակարդակում կրթությունն է իրականացվում քաղաքաշինության ճարտարագիտության, գազի տեխնոլոգիաների և փոխադրումների ճարտարագիտության, մեխանիկայի ճարտարագիտության և քիմիական ճարտարագիտության մասնագիտություններով:

• Բազային (տեսական) գիտությունների ֆակուլտետ. հիմնադրվել է 1994 թ. քիմիայի ճյուղում, իսկ ներկայումս բակալավրիատի մակարդակում կրթությունն է իրականացնում նաև մաթեմատիկայի, ֆիզիկայի և վիճակագրության ճյուղերում: Մագիստրատուրայի մակարդակում կրթությունն է իրականացվում քիմիայի տարբեր ենթաճյուղերի, միջուկային ֆիզիկայի և մաթեմատիկայի մասնագիտությամբ:

• Գրականության և հումանիտար գիտությունների ֆակուլտետ. լեզու և գրականություն, անգլերեն, գրադարանավարություն:

• Ագրարային և բնական ռեսուրսների ֆակուլտետ. հիմնադրվել է 1995 թ. այգեգործություն մասնագիտությամբ, հետագայում ավելացել է նաև բուսական արտադրության տեխնոլոգիաներ ճյուղը: Մագիստրատուրայի մակարդակում գործում են այգեգործության և ձկնաբուծության ճարտարագիտություն ճյուղերը:

• Ճարտարապետության, քաղաքաշինության և կիրառական արվեստների ֆակուլտետ. հիմնադրվել է 2005 թ. և ներկայումս կրթությունն է իրականացնում բակալավրիատի մակարդակում ճարտարապետական ճարտարագիտություն ճյուղում:

• Իսլամական ազատ համալսարան, Բուշեիի մասնաճյուղ. հիմնվել է 1985 թ. տեղի բնակչության պահանջով ու համագործակցությամբ և նահանգային պատասխանատուների ջանքերով: Այն իր գործունեության տարիներին ընդլայնվել ու զարգացել է և այժմ ունի հետևյալ մասնագիտությունները.

• Տեխնիկական և ճարտարագիտական ճյուղեր. էլեկտրոնիկա, հզորության էլեկտրոնիկա, քաղաքաշինություն, ձկնաբուծություն, կապ և հաղորդակցություն, համակարգչային գիտություններ, ճարտարապետություն, քիմիա, քիմիական արդյունաբերություն՝ բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում:

• Հումանիտար գիտություններ. իրավաբանություն, աստվածաբանություն, անգլերեն լեզու, պարսից գրականություն, կրթական խորհրդատվություն, ֆիզկուլտուրա, կրթության կառավարում, հաշվապահություն, սոցիոսագիտություն, թատերական, կինոարվեստ, մշակութային կառավարում, տարրական դպրոցի կրթություն, մաքսային ծառայություններ: Երեք մակարդակներով է կազմակերպվում կրթությունը՝ փորձագիտական, բակալավրիատ, մագիստրատուրա:

• Լրացուցիչ կրթության ֆակուլտետ. հիմնադրվել է 1997 թ. պարսից գրականության ճյուղում և մագիստրատուրայի մակարդակով: Այս տարիների ընթացքում մագիստրատուրայի մակարդակում ավելացել են հետևյալ ճյուղերը՝ էլեկտրոնիկա, կապի էլեկտրոնիկա, քաղաքաշինություն-սեյսմակայունություն, կառույցների շինարարություն, պարսից գրականություն, մանկավարժություն՝ դասի պլանավորում, մանկավարժություն՝ կրթական ծրագրում, մանկավարժության պատմություն և փիլիսոփայություն, կրթության կառավարում, միջազգային իրավունք, քրեական իրավունք և քրեագիտություն, հին լեզուներ և մշակույթ, դրամատիկական արվեստ: Այս բուհը ասպիրանտուրայի մակարդակի կրթությունն է իրականացնում միայն պարսից գրականության ճյուղում:

• Բուշեիի բժշկական համալսարան. հիմնադրվել է 1983 թ. սկզբում Նարջեսի անվան բուժքույրական քոլեջ ձևաչափով, որն աշխատում էր Բուշեիի առողջապա-

հույժան կազմակերպության ենթակայությամբ և միայն փորձագիտականի մակարդակում էր, իսկ 1989 թ. դարձավ բուժքույրական և մանկաբարձական համալսարան: Այս ֆակուլտետը մինչև 1990 թվականը գործում էր Շիրազի բժշկական համալսարանի ենթակայությամբ, սակայն այդ տարվանից անկախացավ և դարձավ ինքնուրույն ուղղակի ենթարկվելով Առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարությանը: Բուշեհրի բժշկական համալսարանը ներկայումս ունի երեք ֆակուլտետ և մեկ քոլեջ:

• **Փայամ Նուր համալսարան.** հիմնադրվել է 1991 թ. Բուշեհրում: Այն պետական ամենաընդարձակ բուհական ցանցն է Իրանում, որը 6-րդ տեղն է գրավում աշխարհի բաց համալսարանների շարքում, իսկ Ասիայում՝ երկրորդ տեղը: Այս համալսարանն իրականացնում է մասամբ առկա, մասամբ էլ հեռավար կրթություն, ընդ որում՝ օգտագործվում են ինքնուսույց ձեռնարկներ և կրթական մի շարք տեխնոլոգիաներ, այդ իսկ պատճառով ուսանողների մշտական ներկայությունը դասերին պարտադիր չէ: Պարբերաբար տեղի են ունենում խորհրդատվական հանդիպումներ:

• **Գիտակիրառական մայր համալսարան.** հիմնադրվել է 2003 թ.՝ նպատակ ունենալով բարձրացնել տնտեսական տարբեր հատվածներում աշխատող կադրերի աշխատանքային հմտությունները և գործնական կարողությունները: Համալսարանն ունի չորս ճյուղ՝ 1.արդյունաբերություն, 2.սոցիալական աջակցություն, 3.մշակույթ և արվեստ, 4. ագրարային:

**Եզրակացություն:** Իսլամական հեղափոխությանը հաջորդած տասնամյակներում բարձրագույն կրթությունը մի շարք ուղղություններով բարձր վերելք է արձանագրել Իրանի Բուշեհր նահանգում, դրանք են կրթական շենքերի ընդլայնում, տարբեր մեթոդներով, ձևաչափերով ու գործառնություններով աշխատող համալսարանների հիմնադրում, ինչպես, օրինակ, հեռավար կրթություն իրականացնող Փայամ Նուրը, Ազատ համալսարանը՝ իր ուսուցման լիաժամ և ոչ լիաժամ ռեժիմներով, Գիտակիրառական համալսարանը: Չափազանց մեծացել է այդ համալսարաններում կանանց ներգրավվածությունը:

Չնայած Իրանի կրթության համակարգի զարգացման վաղեմի անցյալին և հարուստ ավանդներին՝ ներկայումս կան մի շարք բացթողումներ ու մարտահրավերներ.

-երկրի ոչ բոլոր մարզերին են հասանելի բարձրագույն կրթության հավասար հնարավորություններն ու համաչափ բաշխումը,

-Իրանի բնակչության և երիտասարդների թվի համեմատությամբ բարձրագույն կրթության քանակական հնարավորություններն ու տարողությունը անբավարար են,

-մասնագիտական ճյուղերը համապատասխան չեն ժամանակի պահանջներին և հասարակության կարիքներին,

-բարձրագույն կրթության կառավարման համակարգը խիստ կենտրոնացված է, և լիարժեքորեն հաշվի չեն առնվում մարզերի տեղական պահանջներն ու առանձնահատկությունները,

-տեխնոլոգիական հիմքն ու ենթահողը անբավարար են:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայերի Աբդոլիադի, Իրանի մտավորականների առաջին շփումները արևմտյան բուրժուազիայի քաղաքակրթական երկու գործելակերպի հետ, Թեհրան, 2001:



2. Ղասեմի Փույա Էդրալ, Նորագույն դպրոցները Ղաջարական շրջանում. Հիմնադիրները և առաջատարները, «Համալսարանական հրատարակությունների կենտրոն» հրատ., Թեհրան, 1999:

3. Մաշայեխի Ա., Բուշեհրի Սա'ադաթ դպրոցը մի քանի դիտանկյուններից, «Համալսարան» հրատ., Բուշեհր, 1998:

4. Մեհդիզադե Մ. և Սալամաթ Մ., Իրանի Իսլամական Հանրապետության սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման 6-րդ հնգամյա ծրագրի օրենք, Օրենքների ու կանոնների մշակման և հրատարակման փոխտնօրինության հրատ., Թեհրան, 2018:

5. Սադաթի Նեժադ Մ. և ուրիշներ, Գիտությունների, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության օրենքների ու կանոնների ժողովածու (Ա. և Բ. հատորներ), Իրանի կրթության գնահատման ու թեստավորման կազմակերպության հրատ., Թեհրան, 2013:

6. <https://www.uniref.ir/Province7.html>:

## ВЫСШЕЕ ОБРАЗОВАНИЕ В БУШЕРЕ, ИРАН

Լարուի Մանսուր

*Երևանский государственный университет*

### Аннотация

**Краткое введение.** Система высшего образования является одной из главных инфраструктур для развития и реализации поставленных целей любой страны, которая постоянно нуждается в реформировании. В статье проанализировано современное состояние высшего образования в иранской провинции Бушер. Изучение различных аспектов и проблем управления системой высшего образования Ирана может способствовать повышению ее эффективности и модернизации, в частности, в иранской провинции Бушер.

**Цель исследования,** проводимого в рамках статьи, – осветить текущее состояние высшего образования в иранской провинции Бушер.

**Научная новизна исследования.** Впервые на примере иранской провинции Бушер исследованы процессы совершенствования и развития высшего образования Ирана, выявлены существующие проблемы и вызовы.

**Ключевые слова:** провинция Бушер Ирана, высшее образование, управление образованием, Министерство наук, исследований и технологий, Министерство здравоохранения, лечения и медицинского образования.

### Список использованной литературы

1. Хайери А., Первые контакты иранской интеллигенции с двумя цивилизованными практиками западной буржуазии, Тегеран, 2001.

2. Гасеми Пуя Э., Современные школы в эпоху Гаджара. Основатели и руководители, Издательство Университетского издательского центра, Тегеран, 1999 год.

3. Машаехи А., Школа Саадат в Бушере с нескольких точек зрения, Издательство “Хамсайе”, Бушер, 1998.

4. Мехдизаде М. и Саламат С., Закон 6-й Пятилетней программы социально-экономического и культурного развития Исламской Республики Иран, Публикация заместителя директора по разработке и публикации законов и правил, Тегеран, 2018 год.

5. Садати Неджад С. и другие, Сборник законов и правил Министерства науки, исследований и технологий (Тома А и В), подготовленный издательским центром Иранской организации по оценке и тестированию в области образования, Тегеран, 2013.

6. <https://www.uniref.ir/Province7.html>

## HIGHER EDUCATION IN BUSHEHR PROVINCE, IRAN

Larooi Mansoor

*Yerevan State University, PhD student*

### Summary

As the important and fundamental infrastructure for improvement, growth and development and for the achievement of the expected goals of countries, education systems and especially higher education systems need reforms. The article analyzes the current status of higher education in the Bushehr Province, Iran. A

study of the various aspects and problems of Iran's higher education management system can help to modernize its effectiveness, particularly in the Iranian province of Bushehr.

The purpose of the research carried out within the framework of the article is to cover the current state of higher education in the Iranian province of Bushehr.

The scientific novelty of the research. For the first time, the process of improving and developing Iran's higher education was studied on the example of the Iranian province of Bushehr, and the existing problems and challenges were identified.

**Keywords:** Iranian province of Bushehr, Higher Education, Education management, Ministry of Science, Research and Technology, Ministry of Health, Treatment and Medical Education.

### References:

1. Hayeri A., The first contacts of the Iranian intellectuals with the two civilized practices of the Western bourgeoisie, Tehran, 2001.

2. Ghasemi Pooya E., The modern schools in the Ghajar era. Founders and leaders, University Publishing Center Publishing House, Tehran 1999.

3. Mashayekhi A., Bushehr Sa'adat School from several angles, "Hamsaye" Publishing House, Bushehr, 1998.

4. Mehdizadeh M. and Salamat S., Law of the 6th Five-Year Program of Socio-Economic and Cultural Development of the Islamic Republic of Iran, Publication of the Deputy Director for Development and Publication of Laws and Rules, Tehran, 2018.

5. Sadati Nejad S. and others, Collection of Laws and Rules of the Ministry of Science, Research and Technology (Volumes A and B) by the Iranian Education Evaluation and Testing Organization publish center, Tehran, 2013.

6. <https://www.uniref.ir/Province7.html>.

*Материал был представлен и отправлен на рецензию: 29.10.2021*

*Принято к публикации: 01.11.2021*

*Рецензент: канд.пед. наук, доцент Мери Аветисян*

*The material was submitted and sent to review: 29.10.2021*

*Was accepted for publication 01.11.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Mary Avetisyan*

37.02:37.064.2

## ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԴԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՍԱՐ

**Կամիար Համիդեզա**  
*Երևանի պետական համալսարան,  
մանկ. ամբիոնի ասպիրանտ*

**Համառոտ ներածական:** Անձի մոտիվացման վրա մեծ ազդեցություն ունեցող գործոններից մեկը սեփական կարողությունների և ունակությունների, գործունեության արդյունավետության վերաբերյալ ունեցած ընկալումն է:

«Անձի արդյունավետություն» և «Ուժի դաշտ» («Հոգեբանական դինամիկ դաշտ») տեսությունների համաձայն՝ մեծահասակները արդիի աշխարհի և նրա ահռելի փոփոխությունների հետ ուղիղ հաղորդակցվելիս և դրանց հետ հարմարվելու համար ունենում են սեփական կարողության հետ կապված մտահոգություններ և անապահովության ու անհանգստության զգացողություն, ապրում: Այսպիսի պայմաններում խաթարվում են նրանց պատկերացումները սեփական անձի վերաբերյալ, և նրանք կորցնում

են իրենց ինքնավստահությունը, իսկ անապահովության և անարժանավորության զգացողությունները հանգում են սովորելու մոտիվացիայի թուլացմանը: Ցավոք, մեծահասակները հաճախ բացասական ընկալում ունեն իրենց ուսումնառության կարողության մասին, մինչդեռ մարդը ցանկացած տարիքում էլ ունակ է սովորելու: Մեծահասակները ևս, ինչպես մարդկանց մյուս խմբերը, կարողունակ են սովորել, ինչպես նաև կիրառել նորագույն տեխնոլոգիաներ:

**Բանալի բառեր:** Մեծահասակների կրթություն, ուսման մոտիվացիա, ուսումնառության կարողություն, ուսումնական ծրագրեր ու դասընթացներ, մեծահասակների ընկալում, անձի արդյունավետության տեսություն, ուժի դաշտի տեսություն:

**Հիմնախնդիրը:** Ժամանակակից աշխարհի փոփոխություններին ու կարիքներին համընթաց և հասարակության կայուն զարգացման ապահովման ուղղությամբ անհրաժեշտ է, որ մարդկանց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները շարունակաբար թարմացվեն ու ընդլայնվեն կյանքի ընթացքում, հետևաբար մեծահասակների կրթության հարցերն առավել մեծ նշանակություն են ձեռք բերել բոլոր երկրներում: Մեծահասակների կրթությունն արժեքավոր ներդրում է սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ուղղությամբ, սակայն առկա են մի շարք դժվարություններ ու խոչընդոտներ, որոնցից է մեծահասակների շրջանում մոտիվացիայի, ձգտումի ու շահագրգռվածության պակասը:

**Հոդվածի նպատակը:** Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել մեծահասակների ուսումնառության առանձնահատկությունները, հատկապես ուսումնական ծրագրերին մասնակցելու խոչընդոտները, անձնական ներուժի, ուսման կարողության մասին մեծահասակի ընկալման ազդեցությունը նրա ուսումնական մոտիվացիայի և ձգտումի վրա:

**Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն:** Անձի մոտիվացիաների ու դրդապատճառների մասին հոգեբանական հետազոտությունները կարևոր տեսական հիմք են ապահովում մեր կողմից ուսումնասիրվող խնդրի՝ մեծահասակների ուսումնառության մոտիվացիաների քննման ու ճանաչման համար:

Սոցիալ-կոգնիտիվ տեսության հիմնադիր Ալբերտ Բանդուրայի (1925-1988 թթ.) «Անձի արդյունավետության» հայեցակարգի համաձայն՝ «անձի արդյունավետությունը» և որոշակի իրավիճակում հաջողության հասնելու համոզմունքը մեծապես ազդում են տվյալ անձի մտածողության, վարքի ու հույզերի վրա և կանխորոշում նրա քայլերն ու գործողությունները [4, էջ 36]:

«Ուժի դաշտի» («Հոգեբանական դինամիկ դաշտի») տեսության հիմնադիր Կուրտ Լևինի (1890-1947թթ.) հայեցակարգի համաձայն՝ առկա վիճակից դեպի ցանկալի վիճակ շարժվելու համար նպաստող և արգելակող ուժերի փոխներգործության արդյունքում է որոշվում շարժման ուղղությունը [2, էջ 216]: Ելնելով այս տեսության դրույթներից՝ կարող ենք ասել, որ մեծահասակներն այն դեպքում կմասնակցեն ուսումնական դասընթացներին ու ծրագրերին, եթե համոզված լինեն, որ կարող են սովորել և սովորածը ներդնել անձնական կարիքներն ու պահանջները բավարարելու համար:

Հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ ու հետազոտություններ են իրականացվել տարբեր երկրներում՝ վեր հանելով ուսումնական ծրագրերին ու դասընթացներին չմասնակցելու տարբեր պատճառները մեծահասակների շրջանում: Նման ուսումնասիրություններ են հեղինակել Ք. Մքանլեն, Ա. Լարսոնը և Մ. Միլանան, Է. Բեդարդը և Ք. Ռոբինսոնը: Իրանցի հետազոտող Մոնիր Անսարին, ի

թիվս տարբեր գործոնների, մատնանշել է մեծահասակների բացասական ընկալումները սեփական կարողության վերաբերյալ և մոտիվացիայի պակասը [1, էջ 65]:

**Հետազոտության նորույթը:** Հետազոտության շրջանակում համալիր կերպով վերլուծվել է մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանում: Վեր են հանվել Իրանի մեծահասակների կրթության համակարգի դժվարություններն ու մարտահրավերները, հիմնական թերությունները, առաջադրվել լուծման ուղիներ և մեծահասակների կրթության համակարգի բարելավման միջոցներ: Հռոկվածում հիմնավորվել է հետազոտության այն դրույթը, որ ուսումնառության գործընթացում նշանակալից ազդեցություն ունի մեծահասակների սեփական կարողությունների ընկալումը, իսկ դա որոշիչ դեր է խաղում մեծահասակների ուսումնառության մոտիվացիաների և ուսումնական ծրագրերին ներգրավվելու հարցում:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Մեծահասակության շրջանը մարդու կյանքի կարևոր փուլերից է՝ բազմաթիվ փոփոխություններով զուգակցված, ինչպես մարդկային կյանքի մյուս շրջափուլերը: Այդ փոփոխությունները վերաբերում են ֆիզիկական, ճանաչողական, հուզագգացական և սոցիալական կողմերին: Այս փուլն իր հետ բերում է նոր խնդիրներ՝ անձին ստիպելով մշտապես զարգացնել ու համալրել իր տրամաբանական կարողությունները և խնդիրների լուծման մոտեցումները: Միջանձնային փոխհարաբերություններում, աշխատանքում, զավակների հետ շփման կամ ընտանեկան հարցերի կարգավորման ընթացքում մեծահասակը նոր իրավիճակների, երկմտանքների և դժվարությունների է առերեսվում, ուստի պետք է կարողանա հաղթահարել, վերլուծել ու հարմարվելու նոր ուղիներ գտնել:

Ճանաչողական (կոգնիտիվ) հարթության վրա մեծահասակը զգալի փոփոխություններ է կրում: Մարդու ճանաչողական դաշտում ներառվում են մտավոր կարողությունները, տեղեկությունների մշակումը, դրա արագությունը, ուշադրությունը, հիշողությունը, ստեղծարարությունը, խնդիրների լուծումն ու բանիմացությունը և այլն: Ճանաչողական փոփոխություններն ու զարգացումները մեծահասակության փուլում որոշ կողմերից վերընթաց աճ են ունենում, սակայն որոշ կողմերից էլ նվազում են գրանցում: Օրինակ՝ խնդիրների լուծման կարողության, «բյուրեղացած» ինտելեկտի (Crystallized intelligent), բառապաշարի, ընդհանուր գիտելիքների և բանիմացության տեսանկյունից աճ է նկատվում, սակայն «շարժուն» կամ «հեղուկ» ինտելեկտի (Fluid intelligent), հիշողության և տեղեկությունների մշակման առումով նվազում է տեղի ունենում:

Մարդկային մտքի ու մտածողության վերելքի գագաթնակետը 20-30 տարեկանն է: 30 տարեկանից հետո՝ մինչև 42 տարեկանը, սովորելու և յուրացնելու կարողությունը յուրաքանչյուր տարի նվազում է 1 տոկոսով:

Քանի որ ճանաչողական (կոգնիտիվ) գործոնները ազդում են մարդկանց սովորելու կարողության վրա, հետևաբար ազդեցիկ են նաև ուսումնական ծրագրերում մեծահասակների մասնակցության, ինչպես նաև ուսման շարունակության հարցում [3, էջ 280]:

Մեծահասակների կրթության ծրագրերի հաջողության գլխավոր բաղադրիչներից մեկը մեծահասակների ուսումնառության կարողունակությունն է: Սովորելու ունակությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր է լինում՝ կախված մի շարք գործոններից, ինչպես, օրինակ, տարիքը, նախկին փորձը, անձնային հատկանիշները և այլն: Մեծահասակները սովորաբար գործողություններն առավել ուշադրությամբ են կատարում, սակայն ավելի դանդաղորեն: Չենք կարող հերքել արագության կարևորությունը

սովորելու գործընթացում: Մանուկներն ու պատանիները արագ գործողության ու արձագանքի և գիտելիքի արագ յուրացման շնորհիվ կարողանում են որոշակի ժամանակահատվածում ավելի շատ վարժություն ու կրկնողություն անել, հետևաբար ավելի շատ յուրացնել ու ամրապնդել գիտելիքը: Մինչդեռ մեծահասակները նույն նյութը սովորելու համար ավելի երկար ժամանակ են ծախսում, այդ իսկ պատճառով պետք է մեծահասակին որոշ չափով ազատ թողնել՝ իր սովորելու արագությունը և տեմպերը որոշելու համար: Սա մեծահասակների կրթության սկզբունքներից մեկն է: Նրանք պետք է աշխատանքները պլանավորեն իրենց մտավոր ու ֆիզիկական կարողությունների հիման վրա և հատկացնեն իրենց անհրաժեշտ ժամանակը:

Իհարկե, մեծահասակների կրթության հարցում կարևոր է տարբերակել սովորելու կարողությունը և որակը, մի կողմից, և մյուս կողմից՝ սովորելու արագությունը: Եթե մեծահասակի ուսումնառության գնահատման հիմքում դնենք որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝ մեկ դասաժամի ընթացքում) ձեռք բերած հաջողությունը և հաշվի չառնենք նրա կարողությունները, ապա նրա ուսումնառության գործընթացը թույլ և անբավարար կգնահատենք, սակայն եթե գնահատման չափանիշը ուսումնառության որակը լինի, այդ դեպքում բարձր կգնահատենք [3, էջ 280]:

Իրանում մեծահասակների կրթության խնդիրների վերաբերյալ մեր կողմից իրականացրած հետազոտության շրջանակում ներառել ենք ընկալման խնդիրը և սոցիալական մասնակիցներին ուղղել հետևյալ հարցը, թե իրենց կարծիքով տարբեր տարիքային խմբերում ինչպիսին է սովորելու կարողությունը:

Այս հարցին ի պատասխան՝ սոցիալական մասնակիցների 22.8 %-ը նշել է, որ սովորելու կարողունակությունը փոփոխություն չի կրում կյանքի ընթացքում, մինչդեռ հարցվածների 49.1 %-ն այն կարծիքին է, որ տարիքի բարձացմանը զուգընթաց նվազում է սովորելու ունակությունն անձի մոտ, իսկ 12.3 %-ի համոզմամբ այն անփոփոխ ու կայուն է մնում 30 տարեկանից հետո: Պատասխանողների 12.3 %-ի կարծիքով 30-50 տարեկանում աստիճանաբար բարձրանում է մարդկանց սովորելու ունակության մակարդակը:

Ինչպես նկատում ենք, հարցվածների մեծամասնության կարծիքով սովորելու ունակությունը հետզհետե նվազում է տարիքի բարձրացմանը զուգընթաց: Մեր կարծիքով մեծահասակների մոտ դասընթացներին մասնակցելու մոտիվացիայի պակասի պատճառներից են այս պատկերացումն ու ընկալումը մեծահասակների կարողունակության մասին:

Դասընթացներին ներգրավվելու համար մեծ կարևորություն ունեն մեծահասակի հետաքրքրասիրությունը, ցանկությունը և մոտիվացիան, ուստի Իրանում մեծահասակների անգրագիտության դեմ պայքարի ուղղությամբ կազմակերպվող դասընթացներին մասնակցողների և աշխատողների շրջանում իրականացրած սոցիալական մեջ ներառել ենք նաև հետևյալ հարցը՝ «Մեծահասակների գրագիտության ու գրաճանաչման ծրագրերն ինչպիսի՞ խնդիրների առջև են կանգնած Իրանում»: Հարցվածների մեծամասնությունը հիմնականում նշել է սովորելու անկարողությունից ունեցած վախի ու մտահոգության գործոնը:

Մեծահասակների մոտիվացիայի խթանման համար կարևոր է ամրացնել ստացած կրթության և մեծահասակների կյանքի ու կարիքների կապը, մեծացնել ստացած գիտելիքների կամ ձևավորված հմտությունների օգտակարությունն ու արդյունավետությունը մեծահասակների կյանքում:

Մեծահասակների համար սովորելու ամենակարևոր դրդապատճառներից մեկը արհեստի, աշխատանքի կամ մասնագիտության պահանջներն են, այսինքն՝ մեծահասակները ցանկանում են բարելավել իրենց աշխատանքային պայմանները: Եթե դասընթացները չնպաստեն աշխատանք գտնելուն, աշխատավարձի բարձրացմանը, սոցիալական ներգրավմանը և անհատական կարիքների բավարարմանը, այդ դեպքում դասընթացները շատ փոքր գրավչություն կունենան մեծահասակների համար և չեն շահագրգռի նրանց: Եթե մեծահասակները զգան ստացած գիտելիքների օգուտն իրենց կյանքում, գտնեն դրանց իրացման ձևերն ու միջոցները, ապա առավել մոտիվացված կլինեն՝ դասընթացներին մասնակցելու համար:

**Եզրակացություն:** Մեծահասակների ոլորտի պատասխանատուները պետք է հաշվի առնեն տարիքային հոգեբանության դիտարկումները տարիքային տարբեր խմբերի, այդ թվում՝ մեծահասակների առանձնահատկությունների ու փոփոխությունների մասին, որպեսզի կարողանան հաղթահարել մեծահասակների մոտ ձևավորված բացասական մոտեցումները: Տարիքի հետ զուգընթաց յուրացման և սովորելու գործընթացը կրում է որոշակի փոփոխություններ, առաջանում են սահմանափակումներ, սակայն մեծանում է անձի կենսափորձը, ընդլայնվում է նրա աշխարհայացքը, նա դառնում է ավելի կազմակերպված ու նպատակային:

Անհրաժեշտ է, որ հատկապես ոլորտի պատասխանատուները և աշխատողները լիարժեք ճանաչեն մեծահասակների կրթության հատկանիշներն ու նրանց կարիքները, ըստ այդմ՝ մշակեն ուսումնական համապատասխան ծրագրեր, կիրառեն արդյունավետ մեթոդներ, որպեսզի մեծահասակների մոտ հիասթափություն կամ անվստահություն չառաջանա, սեփական ուժերի վերաբերյալ և չմարեն ուսումնառության մոտիվացիան ու ձգտումը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Հաքիմզադեհ Ռ. և ուրիշներ, Անգրաճանաչների կողմից Իրանի գրագիտության դասընթացներին չընդառաջելու պատճառների ուսումնասիրություն, Մշակութային ճարտարագիտություն, 9-րդ տարի, , 84-րդ համար, Թեհրան, 2015, էջ 65:
2. Միասի Ա., Անձի տեսություններ, հոգեբանության դպրոցներ, Թեհրանի համալսարանի հրատարակչություն, 14-րդ հրատարակություն, Թեհրան, 2011, էջ 216:
3. Վանդեր Ջանդեն Վ. Ջ., Տարիքային հոգեբանություն, թարգմանիչ՝ Գանջի Հ., «Սավալան» հրատ., 12-րդ հրատարակություն, Թեհրան, 2014, էջ 280:
4. Bandura, A. (1997). Self – efficacy: The exercise of control. New York: W. H. Freeman & Company, pp. 1-591.
5. Boudard, E. & K. Rubenson (2003). “Revisiting Major Determinants of Participation in Adult Education with a Direct Measure of Literacy Skills”. International Journal of Educational Research, 39 (3), pp. 265-281.
6. Howley, I., Adamson, D., Dyke, G., Mayfield, E., Beuth, J., & Rosé, C. P. (2012). Group composition and intelligent dialogue tutors for impacting students’ academic self-efficacy. In Intelligent Tutoring Systems. Springer Berlin Heidelberg, pp. 551-556.
7. Larson, A. & M. Milana (2006). Barriers towards Participation in Adult Education and Training. Psychology, 52(1), pp. 1-26.
8. Scanlan, C.L. (1986). Deterrents to Participation: An Adult Education Dilemma. Information Series No. 308, pp. 1-57.
9. Vasile, C., Marhan, A. M., Singer, F. M., & Stoicescu, D. (2011). Academic self-efficacy and cognitive load in students. Procedia-Social and Behavioral Sciences, 12, pp.478-482.

## РОЛЬ ВОСПРИЯТИЯ УМЕНИЯ ОБУЧЕНИЯ ВЗРОСЛЫХ ДЛЯ УЧАСТИЯ В УЧЕБНЫХ ПРОГРАММАХ И КУРСАХ

Камиар Хамидреза

*Ереванский государственный университет, аспирант*

### Аннотация

**Краткое введение:** Одним из факторов, оказывающих большое влияние на мотивацию человека, является имеющееся восприятие относительно собственных способностей и умений, эффективности деятельности. Согласно теориям «Эффективность личности» и «Поле силы» («Психологическое динамическое поле»), взрослые, чтобы напрямую общаться с современным миром и с его огромным изменениям в нем, адаптироваться к ним, беспокоятся в связи с собственным умением и переживают чувства незащищенности и беспокойства. В таких условиях нарушаются их представления относительно собственной личности, и они теряют свою самоуверенность, а чувства незащищенности и недостойности приводят к ослаблению мотивации к обучению. К сожалению, взрослые часто имеют негативное отношение к своей способности к обучению, в то время как люди любого возраста могут учиться. Взрослые, как и другие группы людей, могут учиться, а также использовать новейшие технологии.

**Целью** статьи является изучение особенностей обучения взрослых, в особенности, препятствий для участия в образовательных программах, влияния восприятия взрослых относительно личностного потенциала и способности к обучению на его образовательную мотивацию и стремление.

**Научная новизна** исследования. В рамках исследования комплексно проанализирована проблема образования взрослых в Иране. В статье обосновано то положение исследования, что на процесс обучения существенное влияние оказывает восприятие взрослыми собственных способностей, и это играет решающую роль в вопросе мотивации обучения взрослых и вовлечения их в учебные программы.

**Ключевые слова:** образование взрослых, мотивация к обучению, способность к обучению, учебные программы и курсы, восприятие взрослых, теория эффективности личности, теория поля силы.

### Список использованной литературы

1. Бандура, А. (1997). Самоэффективность: осуществление контроля. Нью-Йорк: У. Х. Фримен и компания, стр.1-591.
2. Будар Э. и К. Рубенсон (2003). «Пересмотр основных факторов, определяющих участие в образовании взрослых, с прямым измерением навыков грамотности». Международный журнал образовательных исследований, 39 (3), стр.265-281.
3. Хаули И., Адамсон Д., Дайк Г., Мэйфилд Э., Бут Дж., & Розе, С.П. (2012). Состав группы и интеллектуальные преподаватели-диалоги для влияния на академическую самоэффективность студентов. В Интеллектуальных Системах Обучения. Спрингер Берлин Гейдельберг, стр.551-556.
4. Ларсон А. и М. Милана (2006). Препятствия на пути участия в образовании и профессиональной подготовке взрослых. Психология, 52(1), стр.1-26.
5. Сканлан К.Л. (1986). Факторы, препятствующие участию: Дилемма образования взрослых. Информационная серия № 308, стр.1-57.
6. Василе С., Мархан А.М., Сингер, Ф.М., и Стойческу, Д. (2011). Академическая самоэффективность и когнитивная нагрузка у студентов. Процедура -Социальные и поведенческие науки, 12, стр.

# THE ROLE OF ADULTS' PERCEPTION ABOUT LEARNING ABILITY IN PARTICIPATE IN EDUCATIONAL PROGRAMS AND TRAINING COURSES

Hamidreza Kamiar

Yerevan State University

## Summary

One of the factors that has a major effect on motivating a person is the person's perception of his abilities and capabilities or the so-called self-efficacy. According to theories of self-efficacy and the force field, adults often feel insecure and uncomfortable when they make direct contact with the world today because of dramatic changes and the possibility of not being able to adapt to them. In such a situation, their self-image is shaken and they lose their self-confidence. Insecurity and feelings of inadequacy cause them to lose their motivation and desire to learn. Unfortunately, most adults have a negative attitude towards adults' ability to learn. While human beings at any age have the ability to learn. Adults, like other human beings, have the ability to learn and use new technologies.

Purpose of the article: To study the peculiarities of adult learning, especially the barriers to participation in educational programs, the impact of adult's perception of personal potential and learning ability on educational motivation and aspiration.

The scientific novelty of the research: The study comprehensively analyzes the issue of adult education in Iran. The article substantiates the research provision that adults' perception of their own abilities has a significant impact on the learning process, and this plays a decisive role in adults' learning motivations and the involving in educational programs and training courses.

**Keywords:** Adult education, learning ability, learning motivation, educational programs and training courses, adults' perception, self-efficacy theory, force field theory.

## References:

1. Bandura, A. (1997) . Self – efficacy: The exercise of control. New York: W. H. Freeman & Company, pp. 1-591.
2. Boudard E. & K. Rubenson (2003). "Revisiting Major Determinants of Participation in Adult Education with a Direct Measure of Literacy Skills". International Journal of Educational Research, 39 (3), pp. 265-281.
3. Howley I., Adamson D., Dyke, G., Mayfield, E., Beuth, J., & Rosé, C. P. (2012). Group composition and intelligent dialogue tutors for impacting students' academic self-efficacy. In Intelligent Tutoring Systems. Springer Berlin Heidelberg, pp. 551-556.
4. Larson A. & M. Milana (2006). Barriers towards Participation in Adult Education and Training. Psychology, 52(1), pp. 1-26.
5. Scanlan C.L. (1986). Deterrents to Participation: An Adult Education Dilemma. Information Series No. 308, pp. 1-57.
6. Vasile C., Marhan A. M., Singer, F. M., & Stoicescu, D. (2011). Academic self-efficacy and cognitive load in students. Procedia-Social and Behavioral Sciences, 12, pp. 478-482.
7. Hakimzadeh R. & others, Investigating the factors affecting the illiterate adults' non-participation in conducting literacy classes. Cultural Engineering, 9th year, 84<sup>th</sup>, Tehran, 2015, p. 65.
8. Siasy Ali Akbar; Personality Theories, Schools of Psychology, University of Tehran Publishing Institute, Fourteenth Edition; Tehran, 2011, p.216.
9. Zanden V Wilfrid, J.; Developmental Psychology; Translated by Ganji H., 12<sup>th</sup> ed., Savalan Publication, Tehran, 2018, pp.1-408, p. 280.

*Материал был представлен и отправлен на рецензию: 29.10.2021*

*Принято к публикации: 01.11.2021*

*Рецензент: канд пед. наук, канд.пед. наук, доцент Лусине Айрапетян*

*The material was submitted and sent to review: 29.10.2021*

*Was accepted for publication: 01.11.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Lusine Hayrapetyan*



**ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐՆ ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**Սաֆարյան Քրիստինե**  
*ԵՊՀ, Հայաստան*

**Համառոտ ներածական:** Իտալիան Եվրոպայի զարգացած երկրներից մեկն է: Եվ լինելով Բոլոնյան գործընթացի համահիմնադիր երկիր՝ Իտալիան ևս իրականացրել է Բոլոնիայի հռչակագրում նախանշված բարեփոխումները՝ Եվրոպական կրթական տարածք ինտեգրվելու նպատակով, միաժամանակ պահպանել է ազգային առանձնահատկությունները:

Սույն հոդվածում ներկայացվում են Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում իրականացված բարեփոխումները Բոլոնյան գործընթացի համատեքստում:

**Հիմնախնդիրը:** Բոլոնյան գործընթացի շրջանակներում իրականացված բարեփոխումների ուսումնասիրությունը հնարավորություն կտա դուրս բերելու Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում առկա ձեռքբերումներն ու զարգացման հնարավոր հեռանկարները:

**Հոդվածի նպատակը:** Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Բոլոնյան գործընթացի շրջանակներում Իտալիայի բարձրագույն կրթության համակարգում իրականացված բարեփոխումները:

**Բանալի բառեր:** Իտալիայի բարձրագույն կրթության համակարգ, բարձրագույն կրթություն, Բոլոնյան գործընթաց, բարեփոխում, Եվրոպական կրթական տարածք:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ժամանակակից կրթությունը մարդկային կենսագործունեության հիմքն է և հանդես է գալիս որպես հոգևոր մշակույթի ինտեգրող և ընդհանրացնող արժեք: Քաղաքական և իրավական մշակույթների հետ միասին կրթությունը ձևավորում է անձի էսթետիկ ու բարոյական հատկանիշները՝ հասարակական կյանքի հետ անբաժան կապով: Հասարակության մեջ կրթություն սոցիալական ինստիտուտի գործառնման նպատակն ազգի ինտելեկտուալ-բարոյական ներուժի ձևավորումն է: Իտալիայի ժամանակակից կրթության համակարգը ձևավորվել է, մի կողմից, պետական լայնամասշտաբ բարեփոխումների, մյուս կողմից՝ Բոլոնյան գործընթացով պայմանավորված բարեփոխումներով և Իտալիայի՝ համաեվրոպական կրթական տարածք ընդգրկվելու ձգտումով: Այսպիսով, Իտալիայի կրթության համակարգի կայացման ներքին գործոնները և դրա զարգացման արտաքին խթանները փոխընդանուր եղան:

Իտալիան բարեհաջող մասնակցում է բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքի ձևավորմանը, արդյունավետորեն իրականացնում է միջազգայնացման ռազմավարությունը և միաժամանակ պահպանում է ազգային կրթության առանձնահատկությունները [1]:

**Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքը**

Այսօր Իտալիայի բարձրագույն կրթության համակարգը կազմված է համալսարանական, ոչ համալսարանական և մասնագիտական կրթության սեկտորներից:

Գործում են 52 պետական համալսարան, 3 տեխնիկական համալսարան, 3 համալսարանական ինստիտուտ և 2 համալսարան՝ օտարերկրացիների համար [2]:

Մինչև Բոլոնյան գործընթացի մեկնարկը իտալական համալսարանները շնորհում էին 4 աստիճան:

Համալսարանական առաջին աստիճանի՝ բակալավրի ստացման համար անհրաժեշտ է ավարտել եռամյա ուսումնական ծրագիրը և կուտակել 180 կրեդիտ: Այս ծրագիրը նախատեսված է մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների համալիրի յուրացման և մասնագիտական գործունեություն ծավալելու հմտությունների համար:

Երկրորդ մագիստրոսի աստիճանն է, որն ունի հետևյալ տեսակները.

- Laurea Specialistica – շնորհվում է երկամյա ուսումնառության ավարտին՝ որակավորման աշխատանք գրելուց հետո:

- Diploma di Specializzazione di Primo Livello – այս աստիճանի ստացմանը նախորդող ծրագիր է, ունի մասնագիտական կողմնորոշում և նախատեսված է նեղ մասնագետների համար: Թեև այս աստիճանը պաշտոնապես ընդունված է Կրթության, համալսարանների և գիտության նախարարության կողմից, այնուամենայնիվ այսպիսի ծրագրի ուսումնական պլանն այսօր բավականաչափ մշակված չէ:

- Master Universitario di Primo Livello – նախատեսված է Laurea-ի շրջանավարտների համար: Այս ծրագիրը տարբերվում է եվրոպական մագիստրատուրայից: Այն նախատեսված է մեկ ուսումնական տարվա համար: Ծրագիրն ակադեմիական կրթություն չի տալիս, այլ թույլ է տալիս ստանալ լրացուցիչ մասնագիտական որակավորում:

Կրթության երրորդ աստիճանը ներառում է ասպիրանտուրան և դոկտորանտուրան: Կիսամյակի կրեդիտների քանակը 30 է:

Ուսումնական տարում հաշվվում է 60 ակադեմիական կրեդիտ:

Բակալավրի աստիճան ստանալու համար ուսանողը պետք է կուտակի 180 կրեդիտ (3 տարի սովորելու դեպքում) կամ ոչ պակաս, քան 240 կրեդիտ (4 տարվա դեպքում) [3]:

Մագիստրոսի աստիճան ստանալու համար ուսանողը, որպես կանոն, պետք է կուտակի 300 կրեդիտից ոչ պակաս (5 տարի սովորելու դեպքում):

Կրեդիտները շնորհվում են առարկայի ամփոփիչ ստուգման (քննություն, ստուգաքն, թեստ և այլն) բարեհաջող հանձնումից (դրական գնահատական) հետո:

Շնորհվող կրեդիտների քանակը կախված չէ ստացած գնահատականից:

Ուսանողների լսարանային պարապմունքների հաճախումը հաշվառվում է բուհի հայեցողությամբ, բայց չի երաշխավորում կրեդիտների շնորհում:

### **Քաղաքական կոնտեքստը և բարձրագույն կրթության կառավարումը**

1993-1999 թթ. Իտալիայում սկսվեց լայնածավալ բարեփոխում, որի գլխավոր նպատակը բարձրագույն կրթության համակարգի մոդեռնիզացումն էր՝ առկա ավանդույթների միաժամանակյա պահպանմամբ:

Կրթական բարեփոխումները տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական կարևորագույն փոփոխությունների՝ Իտալիայի առաջին հանրապետության փլուզման և երկրորդ հանրապետության կայացման ֆոնին:

Քաղաքական կոնտեքստի փոփոխումն ազդել է կրթական բարեփոխումների բնույթի վրա: Պատմականորեն այնպես էր դասավորվել, որ բոլոր համալսարանները և մասնագիտական դպրոցները ենթարկվում էին անմիջապես Կրթության նախարարությանը:

1999 թ., կառավարության վերակազմավորման և նախարարությունների թվի կրճատման հետ կապված, Կրթության նախարարությունը միավորվեց Համալսարանների, գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների նախարարության հետ: Արդյունքում ձևավորվեց կառավարման կենտրոնական մարմին՝ Կրթության, համալսարանների և գիտության նախարարություն: Վերակազմավորման գործընթացներին զուգահեռ տեղի էր ունենում բարձրագույն կրթության տարածաշրջանացում:

Նույն՝ 1999 թ. միջնակարգ դպրոցների և համալսարանների կառավարման և ֆինանսավորման բաշխման պատասխանատվության զգալի մասը դրվեց կրթության կառավարման տարածաշրջանային մարմինների վրա: Կրթության, համալսարանների և գիտության նախարարության խնդիրները ներկայումս մարզերի և տարածաշրջանների կրթության դեպարտամենտների գործունեության կոորդինացումն է, ինչպես նաև պետության կրթական քաղաքականության որոշումը, իտալական կրթական հաստատությունների այլ եվրոպական երկրների բուհերի հետ փոխգործակցության ռազմավարության մշակումը:

Բարձրագույն կրթության համակարգի կառավարման գործում ակտիվ մասնակցություն ունեն նաև խորհրդատվական մարմինները՝ Համալսարանների ազգային խորհուրդը և Ազգային ուսանողական խորհուրդը: Համալսարանների ազգային խորհուրդը կազմված է համալսարանների ադմինիստրատիվ, դասախոսական կազմերի և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Այսօր Իտալիայի բարձրագույն ուսումնական հաստատությունն ինքնավար ադմինիստրատիվ հաստատություն է, որն ունի ֆինանսների բաշխման, ինքնուրույն կրթական ծրագրեր մշակելու, գիտահետազոտական գործունեություն իրականացնելու իրավունք:

Իտալիայի բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների գործունեության հիմնարար սկզբունքներն արտացոլված են 1947 թ. Սահմանադրության մեջ, ինչպես նաև 1989 թ. հ. 168 ակտում:

Սահմանադրությունը հռչակել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և ուսումնական գործունեություն ինքնուրույն կազմակերպելու իրավունքը՝ առկա օրենսդրության նպատակներին և խնդիրներին համապատասխան:

1989 թ. հ. 168 ակտն ամրագրել է բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական գործունեություն ծավալելու, գիտահետազոտական մշակումների ներդրման, ինչպես նաև բյուջեի բաշխման իրավունքը: Օրենսդրությանը համապատասխան՝ բարձրագույն ուսումնական հաստատություններին (մասնավորապես համալսարաններին) տրամադրվեց բուհերի կառավարման մարմինների ձևավորման իրավունք:

Համալսարանի ղեկավարը ռեկտորն է, որը ղեկավարում է Ակադեմիական խորհուրդը (Senato accademico) և Կառավարման խորհուրդը (Consiglio di Amministrazione):

Մենատի կազմի մեջ են մտնում ակադեմիական հանրության ներկայացուցիչները, որոնք զբաղեցնում են իրենց կարգավիճակին համապատասխան դիրքեր:

